



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material



ԳՐԱԳՐԱԳՐՈՒՄ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՐԱՏԵՐՈՒԹՅԱՆ

ԿՈՄ. Կ

Հ Ի Ն

ԳՐԱՏԵՐԻՔԻ

ԻՆ

Ltn  
1720

ԹՎԱԳՐՈՒՄ

1860

1999

43933-U.L.

Արշակունի Կոմիտէ

ԳԱՍՍԳԻՐԳ

Ժ Ո Ղ Ո Վ Ր Գ Ա Կ Ա Ն Գ Պ Ը Ո Ց Ա Ց



ԸՆԴՀԱՆՈՒՐ

Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Ի Ի Ն.

---

ՄԷՆՔԻ

ԴԱՍԱԳԻՐԻ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

ՄԱՍԸ Ա.

ՀԻՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Թարգմանեաց

ԱՂԵՔՍԱՆԴԻ ՄԱԶԵՐՈՎ

2581



ԹԷՂՈՒՄԻԱ

Իտալար. Խաչիպեանև Ուսուսմեար. Հայոց

28097-62

1860.

Հրամայեցաք տպագրել, եւ յետ տպագրութեանն առաջի առնել ուր հարկն է ըզսահմանեալ թիւ օրինակացն:

Թեոդոսիա, 15 փետրուար 1860:

ԳԱՐԲ. Վ. ԱՅՎԱԶԵԱՆ.

5251

1720-60

9

38, 1708

10-18083



## ԾԱՆՈՒՑՈՒՄՆ

---

Պատմութեան ուսումը որչափ որ զուարճալի է տղայոց համար, կրնամք ասել թէ նոյնչափ ալ դժուար է զայն սովորեցընելը. վասն զի սակաւ են այն պատմական դասագրքերն որ համառօտ լինին՝ առանց ցամաքութեան, եւ չափաւորապէս ընդարձակ՝ առանց աւելորդ ու ձանձրալի շատախօսութեան:

Մեզի երեւցաւ որ այս ուսման սակա-  
ւագիւտ դասագրքերէն մէկն է ՊէՌԹԷ  
հեղինակին շարադրածը, որ երկու  
տարուան մէջ հինգ անգամ տպուած  
է 30,000 օրինակէն աւելի. եւ ահա ա-  
նոր հայերէն թարգմանութիւնը՝ քա-  
նի մի հարկաւոր փոփոխութիւննե-  
րով՝ կհրատարակեմք իբրեւ Դասա-  
գիրք Ընդհանուր Պատմութեան :

Պատմութիւն դաս տուող վարժա-  
պետը պարտական է ապսպրելու տը-  
ղայոց որ իրենց չհասկըցած կտորնե-  
րուն բացատրութիւնը խնդրեն իրմէ  
համարձակ. ուստի եւ հարկ է որ նախ  
ինքը քաջահմուտ լինի սովրեցուցած  
բաներուն :

Ասոր համար պէտք է որ այս համա-  
ուտ դասատետրակով գոհ չլինի վար-  
ժապետը, այլ անսպառնառ ունենայ


ձեռքը սորա ընդարձակը, եւ գլխաւորապէս Գալֆայեան Ամբրոսիոս վարդապետին Պատմութեան երկրորդ կատարելագոյն տպագրութիւնը, որ մօտերս իւոյս կընծայուի:

Իսկ սորա վրայէն դաս տուած, եւ մանաւանդ դասերը հարցուցած ժամանակը, պէտք է որ վարժապետը մէջի հարցմունքները իւր քովէն փոփոխէ եւ շատցընէ. որպէս զի տղայոց սովորածը ոչ լինի նիւթապէս, այլ հասկընալով եւ խորհրդածութեամբ:

Վերջապէս այս դասագրքին նպատակն է բացայայտ ու զուարճալի ոճով տպաւորել տղայոց միտքը պատմութեան գլխաւոր եւ ամենահարկաւոր կտորները. կմնայ որ վարժապետներն եւս իրենց կողմանէ աշխատին այս նպատակին դիւրաւ հասնելու՝

տղայոց միտքը բանալով, յիշողութիւնը սրելով եւ դատմունքը ուղղելով:

Այս բանիս ալ մեծ դիւրութիւն կուտայ պահանջել որ աշակերտները ատեն ատեն իրենց սովրած պատմութեան մէկ կամ միւս կտորը վարժապետէն լսածներնուն համեմատ ընդարձակելով գիր անցընեն՝ իբրեւ օգտակար շարադրութիւն, եւ վարժապետին ու միւս աշակերտաց առջեւը կարդան:



ԳԱՍԱԳԻՐԻ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ.



ՆԱԽԱԳԻՏԵԼԻՔ

Ա.

*Նախաստեղծի եւ լոցա սերունդը մինչեւ ի Նոյ :*

1. Աստուածաշունչ սուրբ գրքէն գիտեմք արդէն որ Աստուած ստեղծեր է յոչընչէ բոլոր աշխարհս, այսինքն երկինքն ու երկիրս :

2. Ի սկզբան այս մեր երկիրը՝ մութ, պարապ եւ անպատրաստ էր . վրան ոչ լեռ կար, ոչ ծով, ոչ գետ, ոչ բոյս եւ ոչ կենդանի :

<sup>1</sup> Աշխարհս ո՞վ ստեղծեց :

<sup>2</sup> Երկիրը առաջ ինչպէս էր :

1. Աստուած նախ յոյսը ստեղծեց , յետոյ երկինքը զարդարեց արեգակով , լուսինով եւ աստղերով . ջրերը ցամաքէն բաժնեց , եւ ապա ստեղծեց զանազան բոյսեր , կենդանիներ , եւ ամենէն վերջը առաջին մարդիկը՝ որ էին Ադամ ու Եւա :

2. Աստուած սոցա բնակարան տուաւ Դրախտը , որ զեղեցիկ պարտեզ մի էր՝ Տիգրիս եւ Եփրատ զետոց ըլլած տեղերուն քովերը :

3. Ադամ ու Եւա առաջ անմեղ , երջանիկ ու անմահ էին , եւ ամէն կենդանիք հնազանդ էին նոցա , նաեւ արջերը , զայլերն ու առիւծները՝ յորոց մէք այժմ այնքան կվախնանք :

4. Աստուած նոցա ամէն պիտոյքը կհոգար , եւ այնչափ սէր ունէր վրաներն որ հետերն ալ կխօսէր :

---

<sup>1</sup> Ինչպէս պատրաստեց Աստուած երկիրս : — Բանի մարդ ստեղծեց Աստուած ի սկզբան , եւ անունները ինչ էին :

<sup>2</sup> Ո՞ւր կրնակէին : — Ո՞ւր էր դրախտը :

<sup>3</sup> Առաջին մարդոց կեանքը դրախտին մէջ ինչպէս էր :

<sup>4</sup> Աստուած ինչպէս կվարուէր հետերը մինչդեռ ի դրախտին էին :

1. Այն սիրոյն փոխարէն՝ Աստուած պահանջեց որ հնազանդ լինին իրեն, պատուիրեց որ ծառ գիտութեան քարշոյ եւ շարիաստուած ծառին պտղէն միայն ջուտեն: Աղամ ու եւա այն պատուիրանքը չպահեցին, կերան ծառին պտղէն, եւ Աստուած դուրս հանեց զնոսա դրախտէն:

2. Այն մեղքին համար բոլոր մարդկային ազգն ալ Աղամայ ու եւայի հետ շարժարանքի տակ ընկաւ եւ մահկանացու եղաւ:

3. Աղամ երկու որդիք ունեցաւ. մեկուն անունն էր Կայէն, միւսինը Աբել:

4. Կայէն նախանձելով Աբելին վրայ՝ տպանեց զինքը, եւ ձգեց ծնողքը զնաց: Աբելի տեղը Աստուած ուրիշ որդի մի տուաւ Աղամայ, որոյ անունն էր Սէթ. այն որդին շատ բարեպաշտ էր, ու նորա սերունդէն եղած

---

<sup>1</sup> Ի՞նչ պատճառաւ դրախտէն դուրս քրչեցան:

<sup>2</sup> Նոցա մեղքին պատճառաւ ինչ վնաս եղաւ:

<sup>3</sup> Քանի որդիք ունէր Աղամ, եւ նոցա անունն ինչ էր:

<sup>4</sup> Որպիսի մարդիկ էին Կայէն, Աբել, Սէթ եւ նոցա սերունդը:

մարդիկը բարի, իսկ Կայենի սերունդը չար մարդիկ եղան :

1. Կայեն երկրագործութիւն կաներ, եւ գետնին տուած բերքերովը կապրէր: Երբոր ծնողացը քովեն հեռացաւ, քաշուեցաւ մեկ տեղ մի ու քաղաք շինեց :

2. Կայենի սերունդեն եղած մարդիկը ամենքն ալ երկրագործ չեղան :

3. Ոմանք տեսան որ արտերն ու անտառները կենդանիներ կքալեն, եւ շատերը մարդիկ ջեն փախչիր, սիրեցին այն անասունները, ընտանեցուցին իրենց հետ, ու տեսնելով որ նոցա քանի մի տեսակը, մանաւանդ ոջիսարը, այծը, կովը, ձին եւ ուղտը կրնան մարդուս մեծամեծ օգուտներ բերել, սկսան տներուն մեջ պահել ու շատցընել :

4. Այսպէս հովուութիւն անողները յայտնի ե որ ջեին կրնար նոյն ժամանակը երկրագոր-

---

<sup>1</sup> Ի՞նչ կաներ եւ ինչով կապրէր Կայեն:

<sup>2</sup> Կայենի որդիքն ու բոռները ամենն ալ երկրագործ եղան :

<sup>3</sup> Կայենի բոռներեն մեկ քանին ինչ կերպով հովուութիւն սկսան անել :

<sup>4</sup> Ի՞նչ պատճառով հովիւները երկրագործութիւն անել չկրցան :



ծուրփան եւս անել . ուստի բոլոր ընտանեօք հովիւ եղան . եւ որովհետեւ պետք կլինէր այն անասունները կերակրելու համար մեկ տեղէն միւսը՝ եւ անելի արօտ եղած տեղերը փոխադրուիլ, բողոքին երկրագործուրփանն ու ըսկասան միայն հովուուրփան անել . եւ հաստատուն ընակուրփան ջունենալով՝ հետերը վրաններ կքայցընէին եւ անասուններուն արածած տեղերը այն վրաններուն մէջ ընտանեօք հանդերձ կրրնակէին :

1. Ժամանակէ մի ետեւ այնպիսի հովիւներն այնքան շատցան որ ամբողջ ժողովուրդներ ձեւացան հովուուրփան անող: Սոքա եւ սոցանման ազգերը, որ անդադար տեղէ տեղ կը փոխուէին, *միւսնարեակ* կոչուեցան : Այն հովիւներուն մէջ հարուստ մարդիկ եւս կային որ շատ գործաւորներու եւ խաշանց տեր էին :

2. Երկրագործուրփանն ու հովուուրփանը այս մեծ օգուտը բերաւ մարդկանց որ անով վարժեցան իրարու օգնել եւ ի միասին ընակիլ . Անկեց ի գատ բոյսերն ու ընտանի կենդանի-

---

<sup>1</sup> Ի՞նչպէս էր նոցա կեանքը: — Ո՞ր եւ ինչ կերպով կապրէին երկրագործներն ու հովիւները:

<sup>2</sup> Ի՞նչ շահ կրերէր մարդկանց երկրագործուրփանն ու հովուուրփանը:

ները մարդուս կերակուր կուտային, եւ այն բոյսերէն ու կենդանիներուն բուրդէն կուտազործել սովբելով, անկեց իրենց տաք ու չահագուստներ կկարէին: Երէ այն կենդանիները ջլինէին, ամեն մարդ գազանաց պէս կըլինէր, որ ոչ տուն ունին, ոչ կերակուր եւ ոչ հագուստ. ուստի հարկ կլինէր որ անտառները շրջին, ու վայրենի կենդանիներ զարնելով՝ նոցա մսովը կերակրուին:

1. Կայենի սերունդէն մեկ քանին երեւելի եւ օգտաւետ գիւտեր հնարեցին. մեկ քանին եւս երկարն ու պղինձը կրակի վրայ կարմրցընելով՝ կակղացընելու կերպը գտան:

2. Այս երկու գիւտերը շատ օգտակար եղան ոչ միայն Կայենի սերունդէն եղած մարդկանց, այլ եւ ամենուն. վասն զի մարդիկ սկսան պղնձէ ու երկարէ գանազան պէտք բաներ եւ գործիքներ շինել, որով դիւրին եղաւ պատրաստել նաեւ այն գեղեցիկ ու ամուր կարասիները որ այժմ մեր չորս քովը կտեսնենք:

---

<sup>1</sup> Ի՞նչ գիւտեր հնարեցին Կայենի սերունդները:

<sup>2</sup> Ի՞նչ օգուտներ եղան մարդուս այն գիւտերէն:

Բ.

Նոյ եւ իւր սերունդը:

1. Աստուածանաճոյ Սերայ բոռները երկար ժամանակ Կայենի անիծեալ սերունդին հետ ջխտունեցան. բայց երբ Կայենի բոռերէն սկսան սովրիլ, նոցա զիւտերը, կամաց կամաց մօտեցան ջարերուն, եւ նոցա ջարութիւններէն օրինակ առնելով՝ զԱստուած եւս մոռացան:

2. Մեկ մարդ միայն մնաց որ զԱստուած մոռցած չէր ու Աստուծոյ երկխոյիւր կապրէր, այսինքն Նոյ նաճապետը, որ Աստուծոյ հրամանաւ 120 տարիէ ի վեր կյորդորէր զմարդիկ որ զոջան իրենց մեղքերուն վրայ, բայց նոքա ջուզեցին ճանաչել զԱստուած, ու Նոյի վրայ կծիծաղէին:

3. Աստուած կամեցաւ ջրհեղեղով պատժել ու ջնջել զմարդիկ աշխարհիս երեսէն:

---

<sup>1</sup> Սերայ որդւոց յԱստուծոյ հետանալուն պատճառն ինչ էր:

<sup>2</sup> ԶԱստուած ճանչցող շատ մարդ մնաց:

<sup>3</sup> Ի՞նչ պատիժ տուաւ Աստուած զինքը մոռցողներուն:

1. Նոյ Աստուծոյ հրամանաւք՝ այն ջրհեղեղէն ազատուելու համար մեծ տուն մի շինեց տախտակէ, որ *տապաւն* կասուի. եւ ինքք, իւր կինը, երեք որդիքք եւ նոցա կանայքք մտան անոր մէջ. ամեն տեսակ կենդանիներն ալ գոյգ գոյգ առաւ հետը :

2. Այն ժամանակը սկսաւ գալ սարսափելի անձրեւ մի, այնպէս որ քառասուն օր ջուրը բարձրանալու վրայ էր, մինչեւ մեծամեծ լեռները ծածկեց, ու երկրիս վրայ եղած բոլոր մարդիկն ու կենդանիները խեղդուեցան՝ բաց ի տապանին մէջ եղողներէն :

3. Ջրերուն քաշուելէն ետեւ՝ տապանը գրեաց Հայաստանի Մասիս լեռան վրայ կեցաւ. իսկ երբոր գետինը բոլորովին ցամքեցաւ՝ մարդիկ եւ անասունք ելան տապանէն ցամաքը :

4. Նոյի տապանը շատ մեծ էր, ու այնպէս վարպետ կերպով շինուած որ մեկ տա-

---

<sup>1</sup> Ի՞նչպէս ազատեցաւ Նոյ ջրհեղեղէն : — Ո՞վ եւ ինչ առաւ Նոյ հետը տապանին մէջ :

<sup>2</sup> Ի՞նչպէս սկսաւ ջրհեղեղը : — Ո՞վ խեղդուեցաւ ջրհեղեղին ժամանակը :

<sup>3</sup> Ո՞ւր դադրեցաւ տապանը՝ ջրերուն քաշուելէն ետքը :

<sup>4</sup> Նոյի տապանը ինչպէս շինուած էր :

րի ջրին վրայ կեցաւ՝ առանց ջուր առնելու .  
ասկեց յայտնի կերեւի թէ Կայենի բոռերուն  
գիւտերն ու հնարքները Նոյ ալ գիտեր, ուստի  
նորա բոռերն ալ պիտի գիտնային :

1. Նոյ մինչեւ վերջը ձեռքէ չձգեց աստուած-  
պաշտութիւնը, այսինքն ճշմարիտ հաւատքը .  
եւ տապանէն ելածին պէս՝ զոհ մատուց Սու-  
տուծոյ շնորհակալութեան համար . բայց ինչ-  
պէս որ վերջը կտեսնենք, Նոյի սերունդին  
մեծ մասը նորէն մոռցաւ զՍտուած :

2. Ջրհեղեղէն վերջը Նոյ եւ իւր կինը, երեք  
որդիքը, որ էին Սեմ, Քամ եւ Յաբեթ, ու  
նոցա կանայքը բնակեցան այն երկիրը՝ ուր  
որ տապանէն ելեր էին, այսինքն Հայաստա-  
նի Արարատեան նահանգը :

3. Երբոր նոցա ընտանիքը շատցան, մեկ  
մասը Եփրատ գետին ընթացքովը իջան դեպ ի  
Հայաստանի հարաւային կողմերը ու սկսան

---

<sup>1</sup> Ջրհեղեղէն վերջը ինչո՞վ ցուցուց Նոյ իւր  
բարեպաշտութիւնը : — Նոյայ որդիքն ամեն-  
քրն ալ բարեպաշտ էին .

<sup>2</sup> Նոյայ երեք որդւոց բնակութիւնը առաջ  
ո՞ւր եղաւ :

<sup>3</sup> Նոյայ բոռներուն շատը ո՞ւր գնացին եւ  
ինչ գործի նետ եղան :

աղիւս հնարել, եփել, ու անով քաղաք շինել :  
Անկեց վերջը մեկ աշտարակ մը շինելու ձեռք  
զարկին՝ այնպէս ընդարձակ եւ քարծր՝ որ  
մինչեւ ամպերը կուգէին հասցընել :

1. Այն գործը Աստուծոյ հաճոյ ջեղատ., վասն  
զի մարդիկ հպարտութեամբ ու յանդգնու-  
թեամբ ուզեցին իրենց վատքին համար անել  
այն շինութիւնը. ուստի աշտարակին վրայ  
աշխատած ժամանակները՝ գործաւորներուն  
լեզուները յանկարծ խառնուեցան, այնպէս  
որ մեկմեկու խօսքը չէին հասկընար. անով  
շէնքն ալ անկատար մնաց :

2. Անոնց շինած քաղաքը *Բարեշուն* կոչուե-  
ցաւ, իսկ աշտարակը *աշտարակ Բարեշունի* :

3. Երբոր տեսան մարդիկ որ աշտարակին  
շէնքը գլուխ հանել պիտի ջկարենան, խումբ  
խումբ բաժնուեցան ու աշխարհիս ամեն կող-  
մը տարածուեցան, հիւսիս, հարաւ, արեւելք

---

<sup>1</sup> Այն գործը Աստուծոյ հաճոյ եղան. քե ոչ :  
— Ի՞նչպէս արգելեց Աստուած աշտարակին  
շէնքը :

<sup>2</sup> Առաջին քաղաքն ու աշտարակը Բնջակս  
կոչուեցաւ :

<sup>3</sup> Ի՞նչ կերպով ցրուեցան մարդիկ աշխար-  
հիս երեսը :

ու. արեւմուտք, եւ իրենց բնակութիւնները հաստատեցին Ասիա, Ափրիկէ եւ վերջը Եւրոպա :

1. Սեմայ որդիքը գնացին Բաբելոնէն դեպ ի հիւսիս ու արեւելք՝ Ասիոյ արեւմտեան կողմը. նոցա սերունդէն են Ասորեստանցիք, Երրայեցիք, Մարք եւ Պարսիկք : Քամայ որդիքը գնացին դեպ ի հարաւ ու արեւմուտք, այժմեան Արարացւոց երկիրը, Միջերկրական ծովուն արեւելեան եզերքը եւ Ափրիկէի հիւսիսային կողմը. Քամայ սերունդէն եղան Փիւնիկեցիք, Արարացիք եւ Եգիպտացիք : Յարեբայ որդիքն ալ անցան Ասիոյ ու Եւրոպիոյ հիւսիսային կողմերը :

2. Ահա այս կերպով Նոյի երեք որդւոց սերունդէն շատ ազգեր եղան՝ մեկմեկէ տարրեր՝ քէ տեսքով, քէ լեզուով եւ քէ կրօնքով :

---

<sup>1</sup> Սեմայ, Քամայ եւ Յարեբի որդիքը ո՞ւր գնացին, եւ ինչ ազգեր եղան անոնցմէ :

<sup>2</sup> Ինչո՞վ կտարրերէին այն ազգերը մեկմեկէ :

Գ.

Թագաւորութեանց սկիզբը: — Նախնի  
ազգաց կրօնք, ինչ գործի տէր եղածնե-  
րը ու քանի կարգ բաժանուիլը:

Թագաւորութեանց սկիզբը:

1. Սկիզբները մարդիկ այլ եւ այլ ընտա-  
նիք կամ տուն բաժնուած կապրէին, եւ ա-  
մէն տուն իրեն նահապետին կամ հօրը հնա-  
զանդ էր: Երբ այն ընտանիքները երբայով  
շատցան, սկսան մեկմեկու հետ միաւորուելով  
ընկերութիւն ձեւանալ, որ է *ազգ* ասուածը:

2. Ընտանիքներուն գլուխներէն մեկը կը-  
լինէր կառավարիչ, որ ասուեցաւ *իշխան* կամ  
*քաղաւոր*. եւ այս կերպով կազմուեցան այն  
տերութիւնները կամ քաղաւորութիւնները՝ որ  
զատ զատ երկիրներ ու քաղաքներ մեկտեղ  
զայով ձեւացան, եւ անոնց մէջ կրնակեր մեկ

---

<sup>1</sup> Ի՞նչպէս ձեւացան առաջին ազգերը:

<sup>2</sup> Ո՞ւմ կհնազանդէին ժողովուրդները:



ազգ' բոլորովին անկախ ուրիշ տերութենէ  
կամ թագաւորէ :

1. Թագաւորութիւններ կային որ շատ քա-  
ղաքներ ունէին, եւ ոմանք միայն մէկ քա-  
ղաք: Բազմաքաղաք թագաւորութիւնները մէկ  
արքայ մը կամ թագաւոր մը կուսենային .  
բայց եւ երբեմն մի եւ նոյն տերութեան մեջ  
ամեն մեծկակ քաղաք զատ թագաւոր կու-  
նենար :

2. Կային ազգեր որ թագաւոր չէին ունե-  
նար, բայց նորա տեղը ժողովուրդը ինքը,  
կամ անոնցմէ մէկ քանին խելքով ու գիտու-  
թեամբ միասնեքն վեր լինելով, խրատներ ու  
հրամաններ կամ *օրէնք* կուտային ժողո-  
վրդեան՝ թէ ինչպէս պիտի վարուին մէկմե-  
կու հետ :

3. Թագաւոր ունեցող տերութիւնները *միա-  
պետութիւն* կոչուեցան . իսկ չունեցողները,  
այսինքն ուր որ ժողովուրդն էր աւիրողը,  
ասուեցան *հասարակապետութիւն* կամ *չն-  
կերհաշտութիւն* :

---

<sup>1</sup> Քանի թագաւոր կուսենային հին ազգերը :

<sup>2</sup> Ամեն ազգ թագաւոր կուսենամբ թէ ոչ :

<sup>3</sup> Տերութիւնները ինչ գլխաւոր անուններ  
կուսենային :

1. Շատ տերութիւններու մեջ՝ քաղաւորին որդին հօրը մեռնելէն վերջը անոր տեղը կանցնէր, անով քաղաւորական իշխանութիւնն ալ յաջորդական կլինէր :

2. Առաջին քաղաւորներէն մէկ քանին անուանի եւ քաջ մարդիկ ժողովեցին իրենց քով ու սկսան դրացի ազգաց վրայ յարձըկիլ. դրացիներն ալ հարկադրեցան իրենք զիրենք պաշտպանելու. անով հնարուեցաւ զօրքն ու պատերազմը :

3. Այն պատերազմներուն մեջ՝ մէկ ազգը մեկային կ'յադրէր, քաղաւորութիւններն ալ կը մեծնային կամ կը տկարանային : Այն քաղաւորութիւնը մեծ կլինէր՝ ուր որ քաղաւորը խելացի, ազգը ուժով եւ զօրքը քաջ էր : Բազաւորութիւններ եղան որ բոյորովին կորսուեցան, ու նոցա տեղը նոր ազգեր՝ նոր քաղաւորութիւններ հաստատուեցան :

---

<sup>1</sup> Յաջորդական տերութիւնն ինչ էր :

<sup>2</sup> Առաջին պատերազմները ինչպէս բացուեցան : — Զօրք ժողովելը ինչպէս սկսաւ :

<sup>3</sup> Ի՞նչ փոփոխութեան պատճառ եղան պատերազմները : — Ո՞ր տերութիւնները աւելի կուժովնային :

1. Այս ասածներս ամենն ալ ի միասին հաստատուն բնակութիւն ունեցող մարդոց համար է, այսինքն նոցա համար որ քաղաքներն ու գիւղերը կրնակին. իսկ քափառական ազգերը ոչ քաղաք ունին, ոչ կառավարիչ եւ ոչ գորք. ուստի բազաւորութիւն ալ չեն կրնար ունենալ, այլ բոլոր կեանքերնին վրաններու ու կառքերու մեջ կանցրնին. ամեն մէկ ընտանիք ալ մեկմէկ գատուած կապրէին:

2. Այն մարդիկը ուրիշ ազգերու հետ կանոնաւոր պատերազմ չեն ըներ, այլ յանկարծակի կյարձակին իրարու վրաններն ու կրկողոպտին աւազակի պէս:

3. Մոցա այսպիսի անկարգ կեանք վարածներէն է որ հաստատ բնակութիւն ունեցող մարդոցմէ ամեն ժամանակ ետ մնացեր են, ու մէկ երեսնի գործ մը արած չունին:

---

<sup>1</sup> Ամեն ազգերն ալ այս կերպով կկառավարուէին:

<sup>2</sup> Վրանարնակ ազգաց պատերազմները ինչպէս էին:

<sup>3</sup> Վրանարնակ ազգերը ինչո՞ւ ետ մնացած են:

*Առաջին մարդոց ինչ գործի տեր եղած-  
ները:*

X 1. Առաջին մարդոց գործերը տեսակ տե-  
սակ էին՝ իրենց բնական տեղին յարմարու-  
թեանը նայելով: Տեղ կար որ բարերեր էր,  
տեղ կար որ դաշտային. մեկը անտառու,  
միւսը ծովեզերեայ ու անապտուղ. ուստի հարկ  
եղաւ որ մեկը գետին բանի, միւսը հովուու-  
թիւն կամ որսորդութիւն անէ, երրորդը ձրկ-  
նորսութիւն, եւ այլն:

2. Ասկէ հարկաւ մեկ ազգի մը քով շատ  
ապրանք կը գտնուէր, իսկ միւսին քովը ոչինչ.  
ուստի երբ աշխարհիս վրայ ցրուած ազգերը  
սկսան մեկմեկու հետ հաղորդակցութիւն ա-  
նել, ամեն ազգ իւր ունեցածը սկսաւ փոխել  
ուրիշներուն հետ՝ որ այն բանէն չունէին.  
զոր օրինակ մեկ ազգը մեկալին մորը կու-  
տար, ու անոր փոխարէն պէտք եղած գոր-  
ծիքներ կառնէր. կամ թէ հաց կուտար, փո-  
խարէն գինի, ձուկ կառնէր:

---

<sup>1</sup> Ի՞նչ գործի տեր էին գանազան հին ազ-  
գերը:

<sup>2</sup> Ինչէն սկսաւ մեկ ազգը մեկալին հետ փո-  
խանակութիւն անել:

1. Ծովեզերքի բնակիչները նաևեր շինեցին ,  
անով իրենց ապրանքները սկսան տեղե տեղ  
կրել . իսկ ցամաքայինները նաևի տեղ ուղտ  
կգործածեին . այս կերպով հնարուեցաւ ա-  
ռուտուրն ու ծովագնացութիւնը :

2. Միմեանց հետ տեսնուելով՝ մեկ ազգը  
մեկային գիւտեր՝ գիտութիւններ սովբեցաւ ,  
եւ մարդիկ քանի գնացին աւելի փորձ՝ աւել-  
ի հարուստ ու գիտուն եղան :

3. Ոմանք սկսան տեսակ տեսակ կտաններ  
գործել , գեղեցիկ բաներ շինել . միւսերն ալ  
վախը մեկդի դնելով՝ նաւերը կը նստեին ու  
ծովե ծով կքալէին , նոր նոր երկիրներ ու  
աշխարհքներ փնտռելով՝ գոհարեղէն ու ոսկի  
եւ արծար կժողովէին ու անոնցմով ստակ կը  
կտրէին :

4. Ոմանք արեւուն ու լուսնին երկրիս վրայ  
պտըտիլը , ու գիշերը աստղերուն երեւցածը

<sup>1</sup> Ի՞նչ կերպով մեկ ազգը մեկային ապրանք  
կտաներ :

<sup>2</sup> Առուտուրը ինչ շահ բերաւ մարդկանց՝  
երբ մեկմեկու հետ սկսան կապակցիլ :

<sup>3</sup> Ի՞նչ օգուտ տեսան մարդիկ ծովու վրայ  
քալելէն ու նոր նոր երկիրներ գտնելէն :

<sup>4</sup> Ի՞նչ կերպով սկսան աստղորդաշխութիւններ  
ու երկրաչափութիւնը :

1211 / 1211  
10-4-002



դիտելով՝ սկսան օրեր, շաբաթներ, ամիսներ  
համբել, ու երկիրը ջափել. այս գիտութեանց  
մեկը *աստղաբաշխութիւն* է. միւսը *երկրա-  
չափութիւն* կոչուեցաւ:

1. Մեկ գիտեան ուրիշ նոր գիտ կեցեր:  
Գիրը առաջ նշաններով կը գրէին, այսինքն  
գծերով ու օրինակներով. իսկ այժմու գիրը  
վերջը հնարուեցաւ: Ի սկզբան այնպիսի նշան-  
ները քարի ու փայտի վրայ կփորէին. վերջը  
սովրեցան ծառի կեղեւի ու մազադարի վրայ  
գրել:

### *Հին ազգաց կրօնք:*

1. Հին ազգաց շատ օգուտ ու շահ բերին  
իրենց հնարած գիտերը: Երջանիկ պիտի լի-  
նէին նորա՝ երեւաշտարակաշինութեան ժա-  
մանակը գԱստուած բարկացուցած ջլինէին:  
Քանի գնացին՝ աստուածապաշտութիւնը ձեռ-  
քէ ձգեցին, ու վերջապէս բայրովին մո-  
ռացան Աստուծոյ աղօթք մատուցանելը. բայց

---

<sup>1</sup> Ինչ բանի վրայ ու ինչպէս կգրէին նախ-  
նիք:

<sup>2</sup> Հին ազգաց կրօնքն ինչ էր: — Հերանոս  
ասուողները որոնք էին:

այն վիճակին մեջ բնաւ երջանկութիւն չունին . ուստի իրենք իրենց համար պէտքս աստուածներ հնարեցին . ինչ բանի որ կրհանին, կամ ինչ բանէ որ կվախնային, արեգակը, կրակը, բարի եւ չար կենդանիներն ու բոյսերը, ամենն այ մեկմեկ աստուծոյ տեղ կըղնին: Այսպիսի մարդիկը մեք կկոչենք *հեթանոս*:

1. Սեմայ բոռերը, որ *Սեմական ցեղ* կը կոչուին, կրակապաշտ եղան ու երկնային մարմինները կպաշտէին, բաց ի երբայեցիներէն: Քամայ բոռերը անասուններ ու տարերք կամ ծառ ու քար կպաշտէին . իսկ Յարեայ որդւոց մեծ մասը ամեն տեսակ արարածները Աստուծոյ տեղ կղնին՝ մարդու կերպարանք տալով նոցա:

2. Իրենց ջաստուածները ամեն ժամանակ աջքերուն ղիմացը ունենալու համար՝ հեթանոսներն սկսան նոցա քարէ ու փայտէ պատկերները ձեւացընել . այն արձաններուն *կուռք*

---

<sup>1</sup> Ինչ կպաշտէին հեթանոսները:—Կրակապաշտութիւնն ու տարրապաշտութիւնը ինչ են, ու ո՞վ կհետեւէր այդ կրօններուն:—Յարեթի բոռերուն մեծ մասը ինչ կպաշտէին:

<sup>2</sup> Կուռքերն ինչ էին:

կասեին ու նոցա երկրպագութիւն կանեին, եւ երկրպագութիւն անողները *կուսպաշտք* ասուեցան :

1. Կուռքերուն համար տեղ տեղ տաճարներ շինուեցան՝ որ հասարակ տներէ շատ աւելի գեղեցիկ էին, եւ կասուեին *կուստուռն* կամ *մեհեաւն* :

2. Կուռքերուն ու ժողովրդեան մեջ միջնորդ էին քուրմերը. նոցա պաշտօնն էր ժողովրդեան համար աղօթք անել, ժողովրդեան խրատ տալ, ու կուռքերը նայիլ : Այն քուրմերը գիտուն մարդիկ էին, ուստի տեղ տեղ անունցմէ մինչեւ թագաւոր նատողները կւեհեին :

*Հին ազգաց եւ ժողովրդոց կարգ կարգ քաժնուիր :*

3. Երբոր ամեն մարդ մեկմեկ գործի հետ լինելով՝ սկսաւ այն գործին միայն գրադիլ,

---


<sup>1</sup> Կուռքերուն կեցած տեղը թնջ կասուեր :

<sup>2</sup> Հերանոսներուն քուրմերը որոնք էին, եւ թնջ էր անունց գործը :

<sup>3</sup> Կարգ կամ դաս ասուածը թնջ է : — Հին ազգերը սովորաբար քանի կարգ կամ դաս կրաժնուեին : — Ամենէն վերի դասերը որոնք էին :



հարկաւ ոմանք քուրմ եղան, ոմանք զինուոր  
կամ երկրագործ, արուեստաւոր, վաճառա-  
կան, եւ այսպէս ժողովուրդն այլ իրեն մեջ  
կարգ կարգ բաժնուեցաւ. այն բաժանմունքը  
մեկ ազգի մեջ աւելի կլինէր, մեկային մեջ  
պակաս. մեկունը երեք կարգ, միւսինը չորս,  
մինչեւ եօթը կարգ. ամենէն պատուաւոր կար-  
գերն էին քուրմերն ու զինուորները :



## Դ.

Ընդհանուր պատմութեան նիւթերը, աղ-  
բիւրները, բաժանումն ու օժանդակ զի-  
տութիւնները, որ էն աշխարհագրութիւն  
էւ ժամանակագրութիւն :

### *Պատմութեան նիւթերը.*

Մինչեւ ցայժմ տեսանք թէ ինչպէս ձեւա-  
ցան ազգերն ու բազաւորութիւնները, ո՞վ էին  
ազգաց զլուծիւնները, ինչպէս կմեծնային՝ կը-  
նուագէին ու կվերջանային տերութիւնները,  
ինչ կերպով մեկ ազգը միւսին հետ կապակ-  
ցութիւն ունեցաւ, ինչ գործի կպարապէին,

ինչպէս սկսան առուտուրը, ծովագնացութիւնը, գիտութիւնը, արուեստներն ու հերանոսութիւնը, եւ թէ ազգաց մեջ դասակարգութիւնը ինչով մտաւ :

Ասոնք ամենը մեզի հասկըցընողը պատմութիւնն է . մեկ խօսքով, պատմութիւնը կուսուցանէ մեզ զանազան ազգաց կենցաղավարութիւնը, վիճակը, եւ թէ անոնցմէ որը երեւելի եղաւ, որը դժբաղդ, ինչ անուանի թագաւորներ կամ ուրիշ երեւելի անձինք եղան, եւ այլն :

### *Պատմութեան աղբիւրները .*

Այժմ նայինք թէ այս զանազան ազգաց վրայ եղած տեղեկութիւնները ուստի առնուած են, եւ ինչպէս ձեւացեր է պատմութիւնը :

Վերը ըսինք թէ նախնիք գիր գրել գիտէին, ուստի զանազան շէնքերու եւ արձաններու վրայ կփորագրէին թէ ինչ թագաւորներ եղեր են, ինչ երեւելի գործեր ըրեր են, եւ այլն : Վերջերը ոմանք, մանաւանդ քորմերը, սկսան գրի անցընել ուրիշներէն լսած կամ իրենց աչքովը տեսած յիշատակութեան արժանի բաները . այն գրուածքները ժամանակագրութիւն կամ Տարեգիրք կասուին :

Սակայն առաջին ժամանակագիրները պակասաւոր, սխալ ու սակաւ էին: Քանի որ կարդալ չէին գիտեր մարդիկ, հազար տարի առաջ եղած անցած բաները բերնէ բերան հայրը որդւոյն, որդին թոռանը պատմելով կգիտնային. ուստի այն ժամանակները մարդս այն բանը միայն կրնար միտքը պահել՝ ինչ որ ազգը պահած էր միտքը:

Անկէց ի զատ հին մարդիկն ընդհանրապէս անկիրք ու աւելորդապաշտ լինելով, անցած գնացած բաները կխանգարէին, ու իրենց ջրհասկըցածները ուզածներուն պէս կհասկրնային: Յայտնի բան է որ այն ժամանակագրութիւններն ալ խիստ քիչ էին. որովհետեւ ոչ միայն գիրք տպել չկար, այլ եւ գրել կարդալ գիտցող մարդ դժուար կը գտնուէր:

Հին ազգաց վրայ եղած ամենէն ճիշդ ու հին տեղեկութիւնները Աստուածաշնչին մէջն են. որովհետեւ անոր մէջ գրուածները այն բաներն են որ Աստուած յայտներ է մարդկանց:

Գրով եւ բերնով պահուած աւանդութիւններէն զատ՝ կան նաեւ շէնքերու սաերակներ, կամ ուրիշ տեսակ տեսակ մնացորդներ, ինչպէս գէնքեր, անօթներ, հին ստակներ, եւ

այլն . ասոնք պատմութեան պարզուելուն եւ շտկուելուն պատճառ եղած են :

Ժամանակագրութիւններուն շատը մինչեւ մեր ժամանակը հասան , եւ անոնց նայելով է որ ընդհանուր պատմութիւնները կրգրուին :



### Պատմութեան շաժանուշը .

Պատմութեան մեջ յիշուած ազգերը երկու դաս կրածնուին , *հին* եւ *նոր* :

Քրիստոսէ առաջ Ասիա , Ափրիկէ ու Եւրոպա ընակող ազգերը *հին ազգ* կկոչուին , իսկ Քրիստոսի գալստենէն քիչ մը վերջը նոր ազգեր եկան Եւրոպա . ասոնք սկսան հին բազաւորներուն երկիրները ձեռքերէն առնուլ , ու ասկեց 450 տարի առաջ՝ այն երկիրները նոր նոր տերութիւններ եղան :

Ասով պատմութիւնն այ երկու բաժնուեցաւ . մեկը *հին պատմութիւն* , որ հին ազգաց եւ տերութեանց վրայ կխօսի . միւսը *նոր պատմութիւն* , որ կխօսի նոր ազգաց եւ տերութեանց վրայ :

Նոր ազգերը հազար տարիի չափ առանց կրթութեան եւ լուսաւորութեան մնացին, բազաւորութիւններն ալ անդադար կփոխուեին. այն ժամանակը *միջին դար* կասուի:

Վերջապէս մեզմէ 350 տարի առաջ, երբոր Եւրոպայի բնակիչները աւելի լուսաւորութիւն ունեցան, ու տերութիւնները կարգի մտան, այն միջոցը *նոր ժամանակ* կոչուեցաւ:

Ուստի եւ ընդհանուր պատմութիւնը երեք մասն կրածնուի. *հին պատմութիւն*, *միջին դարու պատմութիւն* եւ *նոր պատմութիւն*:

Ամեն ազգաց պատմութեանը մեջ եւս այնպիսի մեծամեծ պատահմունքներ եղած են որ անոնց տերութիւնները տակն ու վրայ արած են. այնպիսի ժամանակները *դար կասուին*. Իսկ մեկ դարէն մինչեւ միւս դարը հասնելու ժամանակը *չրջան ժամանակի* կրկոչուի:

*Աշխարհագրութիւն* եւ *տարեքիւղ*՝ *օժանդակք պատմութեան*:

Վերն ասինք որ պատմութեան մեջէն կիմանանք զանազան ազգաց ուր բնակածները, ու երբ երեւելի գործքեր արածները: Ուստի

ազգի մը պատմութիւնը հասկընալու համար պէտք եղաւ աշխարհագրութիւն սովորիլ, այսինքն ամեն մէկ տեղին հին եւ նոր անունը, թէ երկրի՝ թէ քաղաքի՝ թէ ծովի՝ ու գետի եւ թէ լեռներուն տեղերը աշխարհացուցին վրայ ցուցընել :

Ազգի մը պատմութեան սկիզբը *քուակասն* կամ *տարեթիւ* կկոչուի :

Նոյն քառը այս նշանակութիւնը եւս ունի որ ազգի մը կեանքին մեջ երեւելի մէկ ժամանակը կցուցընէ. զոր օրինակ Յունաց մեջ Ռդիմպիական խաղերը, Հռովմայեցւոց մեջ Հռովմ քաղաքին հիմնարկութիւնը, քրիստոնէից մեջ Քրիստոսի Տեառն մերոյ մարդեղութիւնը, եւ այլն :

Հին եւ նոր պատմութիւնը դարի վրայ այսպէս հաշիւ կանեն. օրինակի համար, ,,Մովսէս ապրեցաւ ի ԺՂ դարու նախ քան զՔրիստոս “ ասելով՝ կհասկըցուի թէ Մովսէս մարգարէին ապրած ժամանակը Քրիստոսի ծննդենէն 1500 տարի առաջ եղած է :



## Հ Ի Ն Պ Ա Տ Մ Ո Ի Թ Ի Ի Ն



### *Ընդհանուր տեղեկութիւն.*

1. Պատմութեան մեջ անուանի եղած հին ազգերն են՝ ճենք կամ Զինացիք, Հնդիկք, Արարացիք, Բարեւացիք, Ասորեստանեայք, Հայք, Եգիպտացիք, Երրայեցիք, Փիւնիկեցիք, Կարբեղոնացիք, Մարք, Պարսիկք, Մակեդոնացիք, Յոյնք եւ Հռովմայեցիք :

2. Հին պատմութեան աշխարհացոցին վրայ Ասիոյ, Ափրիկէի ու Եւրոպայի մեջ եղած ծովերն ու գետերն որ նայինք, հին ազգաց ուր

---

<sup>1</sup> Հին ատենի ազգաց մեջ անուանիները որոնք են :

<sup>2</sup> Հին ազգերը աշխարհիս որ կողմերը կը բնակէին :

բնակածներն եւս կիմանանք : Այն ծովերն ու գետերն են Պարսից ծոցը , Կասպից ծովը , Միջերկրական ծովը , Ինդոս , Տիգրիս , Եփրատ եւ Նեղոս գետերը :

1. Ասիոյ բնակիչներուն բնակած տեղերը ասոնք են .

*Հնդկաստանցիք* Ինդոս գետին հարաւային կողմը .

*Ճենք* Հնդկաց երկրին հիւսիսային կողմը .

*Պարսիկք* Պարսից ծոցէն վեր՝ Ինդոս գետին արեւմտեան կողմը .

*Մարք* Պարսից ծովուն հարաւային կողմը .

*Հայք* Տիգրիս ու Եփրատ գետերուն թիւած տեղերը .

*Ասորեստանեայք* Տիգրիս գետին հարաւային կողմը .

*Հրեայք* կամ *Եբրայեցիք* առաջ Միջագետքը , որ է Տիգրիս եւ Եփրատ գետերուն մեջտեղուանքը , Ասորեստանին արեւմտեան կողմը .

---

<sup>1</sup> Ասիոյ այլ եւ այլ կողմերուն հին բնակիչները որոնք էին : — Ո՞ւր կրնակէին Հրնդկաստանցիք , — Ճենք , — Պարսիկք եւ այլն :



մը . յետոյ Պատեատին ասուած երկիրը՝ Միջ-  
երկրական ծովուն եզերքը .

*Բարեւացիք* Միջագետքին հարաւային ա-  
րեւելեան կողմը .

*Արարացիք* Բարեւոնի հարաւային կողմէն  
մինչեւ Արարիոյ ծովը .

*Փիւնիկեցիք* Պատեատինէն վեր՝ Միջերկրա-  
կան ծովուն եզերքը :

1. Ափրիկէի բնակիչներուն տեղերն ասոնք  
էին .

*Եգիպտացիք*, Նեղոս գետին եզերքը՝ Միջ-  
երկրական ծովուն հարաւային կողմը .

*Կարբեղոնացիք*, Եգիպտոսի արեւմտեան  
կողմը, եւ Միջերկրական ծովուն եզերքը :

2. Եւրոպիոյ բնակիչներն էին սոքա .

*Յոյնք*, թերակղզիի մը վրայ՝ Արշիպեղազո-  
սին ու Յոնիական ծովուն՝ մեջտեղը .

---

<sup>1</sup> Ափրիկէի գլխաւոր բնակիչները որոնք  
էին : — Ո՞ւր կրնակէին Եգիպտացիք, — Կար-  
բեղոնացիք :

<sup>2</sup> Եւրոպիոյ բնակիչները ո՞յք են : — Ո՞ւր  
կրնակէին Յոյնք, — Մակեդոնացիք, — Հռով-  
մայեցիք :

Մակեդոնացիք, Յունաստանի հիասիսային կողմը .

Հռովմայեցիք, Իտալիոյ քերակողգիին վրայ՝ Միջերկրականին ու Ադրիական ծովուն մեջտեղը :

1. Հին ատենի Արարացոց վրայ քիչ տեղեկութիւն կայ : Գիտցուածը այս է միայն որ մեծ մասը իրենց անապատներուն մեջ քափառական կեանք կվարէին , ու իրենց դրացի ազգաց վրայ յարձրկելով կկոտորատէին զանոնք, մանաւանդ Եգիպտացիները : Իսկ միւս մասը Արարիոյ հարաւային կողմը կրքնակէին ու իրենց համար քաղաքներ ունէին , բայց ուրիշ ազգաց հետ ամենեւին հաղորդակցութիւն չէին ըներ :

2. Հնդկաց եւ Չինաց պատմութիւնն եւս մութ ու անասպելախառն է : Իրենց գրքերէն զիտենք որ ասոնք խիստ հին ժամանակներէ ի վեր զանազան արուեստներ ու գիւտեր ունէին . որով կիմացուի թէ խելացի ու լուսաւորեալ ազգեր են եղեր :

---

<sup>1</sup> Հին ատենի Արարացոց վրայ թնչ զիտելիք կայ :

<sup>2</sup> Հնդկաց եւ Չինաց հին պատմութիւնն թնչպէս է :

1. Պատմութեան մեջ իբրև ամենէն հին ազգեր կ'իշուին Բարեյացիք, Ասորեստանեայք եւ Եգիպտացիք (2500 տարի Ք. Ա.). անոնցմէ ետքը (2000) Երրայեցիք եւ Փիւնիկեցիք եղան:

Ասորեստանեայք հինոս բազաւորին ժամանակը Բարեյացոց յաղթեցին (625), վերջը Ասորեստան երկուք բաժնուեցաւ. մէկ մասը Բարեյացոց բազաւորութիւն կոչուեցաւ (560), եւ միւսը Մարաց:

Անկեց վերջը (500) բոլոր Ասիոյ բազաւորութիւններուն, եւս եւ Եգիպտոսի, Պարսից բազաւորները տիրեցին, եւ մեծ բազաւորութիւն մի կազմեցին: Մակեդոնացիք յաղթեցին (300) Պարսից եւ Յունաց' Մեծին Աղեքսանդրի ժամանակը. իսկ Աղեքսանդրի մեռնելէն վերջը (260) տերութիւնը այլեւայլ բաժին եղաւ: Վրան քիչ ժամանակ անցնելէն ետեւ՝ Հռովմայեցիք տիրեցին Մակեդոնացոց տերութեանը, Իտալիոյ, Գաղղիոյ, Միջերկրական ծովու կղզիներուն եւ բոլոր այն ժամանակը (476) յայտնի եղած երկիրներուն, թէ Եւրոպա, թէ Ասիա եւ թէ Ափրիկէ:

---

<sup>1</sup> Պատմութեան մեջ յիշուած ազգերուն ամենէն հիները ո՞յք են, ու երբ սկսան զօրանալ:

1. Այն բոլոր երկիրներէն Հոռովմայեցոց տե-  
րութիւնը ձեռացաւ . յետոյ այն եւս ուժէ ըն-  
կաւ եւ բաժնուեցաւ . Եւրոպիոյ զանազան  
ազգերը սկսան անդադար յարձակիլ Հոռով-  
մայեցոց այն երկիրներուն վրայ որ Եւրո-  
պայի մեջ էին . վերջն այլ մեծ մասին տիրա-  
պետեցին ու իրենք նոր նոր տերութիւններ  
հաստատեցին :

2. Հին ազգաց մեջ ամենէն երեւելիներն էին  
Յոյնք եւ Հոռովմայեցիք . Յոյնք քաջ եւ արի  
էին , եւ նոցա մեջ շատ անուանի պատկերա-  
հաններ , փիլիսոփաներ , պատմիչներ ու բա-  
նաստեղծներ կային :

Յունաց շարադրութիւնները , մանաւանդ  
ոտանաւորներն ու պատմութիւնները՝ մինչեւ  
ցայժմ շատ յարգի են :

3. Հոռովմայեցիք աւելի երեւելի եղան քա-  
ջութեամբ ու խելքով , եւ երկրագործութիւնը  
շատ կսիրէին :

---

<sup>1</sup> Ասիոյ այլ եւ այլ տերութիւններէն ինչ  
մեծ տերութիւններ ձեռացան , եւ ո՞ր ատեն-  
ները :

<sup>2</sup> Հին ազգաց մեջ ամենէն երեւելիները ո-  
րո՞նք են : — Յոյնք ինչպէս էին :

<sup>3</sup> Հոռովմայեցիք ինչո՞վ անուանի եղան :

1. Եզիպտացիք, մանաւանդ նոցա քուրմերը, սկիզբը դրին բուսարանութեան, երկրաջափութեան ու աստղարաշխութեան. նոցա շինած մեծամեծ տաճարներն ու բուրգերը շատ գարմանալի բաներ են :

2. Բաբելացիք, Եզիպտացիք ու Փիւնիկեցիք զիր գրեւոյ արհեստը հնարեցին : Բաբելացիք սեպարաձեւ ասուած գրերով կգրէին. Եզիպտացիք սրբադրոշմ ասուած գրերը կգործածէին՝ կենդանիներու սխառկերներ ձեւացուցած, որոց ամեն մէկը մէկմէկ բառ կնշանակէր. իսկ Փիւնիկեցիք սկսան մեր գրերուն պէս գրեր գործածել :

3. Փիւնիկեցիք աշխարհիս առաջին նաւավարներն էին :

4. Հնդիկներն եւս երեւելի եղան իրենց գրութեանքներովն ու շէնքերովը :

---

<sup>1</sup> Հին ազգաց մեջ որոնք եղան գիտութեան ետեւէ եղողները :


<sup>2</sup> Գիրը որ ազգերը հնարեցին, եւ ինչ գիր էր անոնց հնարածը :

<sup>3</sup> Փիւնիկեցիք ինչով անուանի եղան :

<sup>4</sup> Հնդիկները ինչ կողմանէ անուանի եղան :

1. Բաց ի Երբայեցիներեն՝ ամեն հին ազգերը  
հերանոսք էին:

Այժմ սոցա վրայ զատ զատ պիտի խօսինք:



*Հնդիկք եւ Ճենք.*

2. Շատ հին ժամանակները Սեմայ թոռերուն  
շատը իրենց բնակութիւնը հաստատեցին Ա-  
րեաց աշխարհ կամ Իրան ասուած երկիրը՝  
Տիգրիս եւ Ինդոս գետերուն մեջտեղը, որ  
այժմու Պարսկաստանն է: Այն երկրին բնա-  
կիւնները Արիք կամ *Չանդիկք* կոչուեցան:

3. Չանդիկք երկու ճիւղ բաժնուեցան, որոց  
մէկը Իրանի մեջ բազմացաւ. իսկ միւսը,  
այսինքն Հնդիկք՝ դեպ ի հարաւ քաշուեցան,  
ու բարերը Հնդկաստանին տիրեցին:

---

<sup>1</sup> Հին ազգաց կրօնքը թնջ էր:

<sup>2</sup> Այժմու Պարսկաստանին հին բնակիւնները  
նյք էին:

<sup>3</sup> Չանդիկները քանի ճիւղ բաժնուեցան:

1. Հնդկաստանցիք յաջողակ ազգ մի լինելով, շատ անուանի եղան թէ գիտութեան կողմանէ եւ թէ հոյակապ ու գեղեցիկ շէնքեր շինելով. մանաւանդ երեւելի են Հնդկաց տաճարները (որ *փակտո* կասուին) ապառաժներու մեջ փորուած ու կանքեղներով լուսաորուած :

2. Հնդկաց գրքերուն մեջ երեւելի է *Վեուա* րսուած չորս գիրքը, որ անոնց կրօնական գիրքը կհամարուի, եւ նորա մեջ կրացատրուին իրենց կրօնին վարդապետութիւնները :

3. Հնդկաց ամենէն մեծ աստուածը Պրահմա՝ իրենց կարծիքովը աշխարհիս ստեղծողն էր, արեգակն ալ նորա կերպարանքը :

4. Հնդիկները մարդուս հոգի ունեցածը թեպէտ գիտէին, բայց կարծէին թէ հոգին իւր մեղացը համար մարմնոյ մեջ կմտնէ, ու մեռ-

---

<sup>1</sup> Հնդկաստանցիք ինչ կողմանէ անուանի եղան :

<sup>2</sup> Հնդկաց կրօնական գիրքը ո՞րն է :

<sup>3</sup> Հնդկաց գլխաւոր աստուածը ո՞րն էր :

<sup>4</sup> Մարդուս հոգւոյն վրայ ինչ կարծիք ունէին Հնդիկները :

նեյկն ետքը աստղերուն մեջն անցնելով ար-  
քայութիան կերթայ, եթէ այն մարդը առաքի-  
նի էր. իսկ եթէ չար մարդ է, հոգին դժոխք  
կիջնայ, վերջը կենդանիներուն ու բոյսերուն  
մեջ կմտնէ, ու այս կերպով մաքրուելէն ե-  
տեւ՝ Աստուծոյ հետ կմիաւորուի :

1. Վետայէն զատ՝ Հնդիկները ուրիշ ու-  
սումնական գրքեր եւ ոտանաւորներ եւս ու-  
նեին :

2. Հին ժամանակները Հնդիկները չորս կարգ  
կրածնուէին. առաջին կարգին մեջ էին *քուր-  
մերը*, որ *պրահմանք* եւս կկոչուին. սոքա  
մեծ ոյժ ունեին իրենց ժողովրդին ու բազա-  
ւորութեանը վրայ : Երկրորդ կարգին մեջ էին  
*գինուորները*. Երրորդ կարգէն էին *կրկրա-  
գործները*, եւ չորրորդէն *արհեստաւոր-  
ները* :

3. Այն չորս կարգէն դուրս մեկ կարգ մըն ալ  
կար որ *շիարիա* կկոչուէին. սոքա Հնդկաս-  
տանի բնիկները՝ այսինքն բուն առաջին ժո-  
ղովուրդը կհամարուին :

---

<sup>1</sup> Հնդիկք Վետայէն զատ ուրիշ գրքեր ու-  
նեին :

<sup>2</sup> Քանի կարգ կրածնուէին Հնդիկները :

<sup>3</sup> Փարիսները ոյք էին :



1. Բոլոր Հնդկաստանը մեկ քանի թագաւորներու ձեռք էր, եւ սոքա գինուորներուն կարգէն միայն կրնային ընտրուիլ :

2. Ժողովուրդը առ հասարակ հարուստ ու հանգիստ էր. իսկ երկիրը այնպէս լաւ բանուած էր որ բոլոր Հնդկաստան գեղեցիկ պարտեզի մը կնմանէր. քաղաքները շատ, եւ վաճառականութիւնն ու արուեստները ծաղկած :

3. Հնդկաց դրացիները ձենք կամ Չինացիք էին : Սոքա երբեմն միայն մեզի առելի ծանօթ երկիրներուն հետ հաղորդակցութիւն ունեցած են. ուստի իրենց հին պատմութեանը շատ տեղեկութիւն չունիմք :

4. Հին ժամանակները կերեւի թէ Չինք Հնդկաց հետ երբալ գալ ունեցեր են, որովհետեւ այս երկու ազգաց կրօնքին մեջ մեկմեկունմանութիւն շատ կայ :

---

<sup>1</sup> Հնդկաստանի թագաւորները ո՞յք էին :

<sup>2</sup> Հնդկաստանի ժողովուրդն ու երկիրը ինչպէս էին :

<sup>3</sup> Չինացւոց վրայ ինչ տեղեկութիւններ կան :

<sup>4</sup> Չինք Հնդկաց հետ յարաբերութիւն ունեին թէ ոչ :

1. Հին ժամանակները ձենացիք բրինձ ու քամբակ ցանելով՝ արդէն շատ հարստացած էին, մետաքսագործութեան մեջ ալ շատ առաջ գնացած. կարկինը, վառօդը ու տպագրութեան արուեստը Եւրոպացոցմէ հազարաւոր տարիներով առաջ գիտէին Չինացիք:

2. Շատ զարմանք կրերեն նաեւ ձենաց գրերն ու լեզուն: Սոցա բոլոր գրերը ձենացեր են 450 միավանկ բառերէ. այն բառերուն վրայ շեշտեր զարնելով նշանակութիւնները կփոխեն: Իրենք այբուբեն չունին, այլ անոր տեղը հազարաւոր տեսակ տեսակ խազերով զանազան իմաստներ ու դարձուածքներ կգործածեն:

3. Քրիստոսէ 500 տարի առաջ Կոմփուկիոս կամ Քոնփուցէ անունով գիտուն Չինացին նոր կրօնք հաստատեց. այս մարդը շատ աշխատեցաւ կռապաշտութիւնը ձենաց մեջէն հանելու. վերջապէս քուրմերը պաշտօններէն հանեց, ու կռօք պաշտելը վերուց:

---

1 Ո՞ր արհեստները ծաղկած էին ձենաց մեջ:

2 Ձենաց գրերն ինչպէս են:

3 Չինաց հին կրօնքը ինչ էր:

1. Զինաստանի ժողովրդին մեջ կարգ կարգ բաժանումներ եւս կան . այնպիսի պաշտօնատարներ ունին որ տերութեան մասնաւոր գործերը նոցա յանձնուած են կառավարելու համար, իսկ իրենք՝ այսինքն պաշտօնատարները՝ հասարակ հպատակներու պէս կրնան զանդին իրենց բազաւորին, որ միանգամայն որդի երկնից կկոչուի :

### **Բարեչացիք եւ Ստրեսանեացիք.**

2. Բարելոնի աշտարակաշինութենէն վերջը՝ Սեմայ բռներուն մէկ մասը Բարելոն մնացին . յետոյ Քամայ բռներէն ալ մէկը՝ Ներրովք կամ Բէլ անունով՝ հոն եկաւ մարդիկներովն ու սկսաւ Բարելոնի մեջ շինութիւններ անել, դուրսն ալ Տիգրիս ու Եփրատ գետերուն մեջտեղերը նոր նոր քաղաքներ հաստատել, եւ ինքը անոնց վրայ բազաւոր եղաւ :

---

<sup>1</sup> Ի՞նչ բաժանմունք կային Զինաց ժողովրդեան մեջ :

<sup>2</sup> Ի՞չպէս սկսաւ Բարեչացոց բազաւորութիւնը :

1. Նոյն ժամանակները (2500) Սեմայ որդւոց մեկը՝ Սասր անունով՝ իւր թոռերովը մեկտեղ գնաց դեպ ի վեր, Սսորեստանեայց թագաւորութեան հիմը դրաւ :

2. Բարեչացիք աշխատասեր ու արթուն մարդիկ էին . իրենց երկիրները լաւ կրանէին ու աւելի պտղաբեր անելու համար ջրմուղներով կոռոզէին : Գործարաններ կշինէին , ու նոցա մեջ բրդեղէն եւ ուրիշ կտաւներ կգործէին , անոնցմով դրացի ազգերուն հետ վաճառականութիւն կանէին ծովով ու ցամաքով : Այս կերպով Բարեչացիք ու Սսորեստանեայք շատ հարստացան , եւ սկսան իրենք զիրենք զեղխութեան ու անկարգութեան տալ :

3. Բարեչացիք կրակապաշտ էին , ու իրենց գլխաւոր ջաստուածներն էին՝ *Բէշ*, որ արեգական ջաստուածն էր , ու *Աստարովր*, որ յուսինն էր :

---

<sup>1</sup> Սսորեստանեայց թագաւորութիւնը որոյ ձեռքովն սկսաւ :

<sup>2</sup> Բարեչացիք ինչ ճարտարութիւններ ունէին :

<sup>3</sup> Բարեչացւոց կրօնն ինչ էր :

1. Բեկայ տաճարը Բարեյոնի մեջ՝ բարձր աշտարակի մի վրայ շինուած էր :

2. Բարեյացւոց քուրմերը — որ մոզք կամ քաղղեայք կասուեին — այն աշտարակէն արեգակն ու լուսինը կղիտեին, ու նոցա ընթացքին նայելով՝ տարւոյն բաժանմունքներն արին : Մոզերը հնարեցին նաեւ աստղաբաշխութիւնը, երկրաչափութիւնն ու բժշկութիւնը . բայց նոցա ունեցած այնքան գիտութեանը նայելով՝ իրենց անելորդապաշտութիւնները խիստ շատ էին . այսինքն աստղերուն նայելով՝ մարդուս գլուխը գալիքները կգուշակէին, ու երազներու բացատրութիւններ կուտային . որով հնարուեցաւ աստեղագիտութիւնը :

3. Ի սկզբան Բարեյացիք ու Ասորեստանեայք յաճախ կպատերազմէին մեկմեկու հետ . Ասորեստանեայց Նինոս բազաւորը տիրեց Բարեյոնի եւ Մարաց երկրին, եւ Տիգրիս գետին վրայ մեծ քաղաք մի շինեց ու անունը *Նինուռ* է :

---

<sup>1</sup> Բեկայ տաճարն ուր շինուած էր :

<sup>2</sup> Բարեյացւոց քուրմերը ինչ գիտեր հնարեցին :

<sup>3</sup> Բարեյացիք ու Ասորեստանեայք ինչպէս եւ ճիշդ միացան :

դրաւ : Այն քաղաքին պատերը քարաշէն ու  
բարձր էին , եւ նոցա վրայ 1500 աշտարակ  
կար :

1. Նինոսէն վերջը իւր կինը *Շամիրամ* քա-  
գուհի նստաւ : Սորա համար հին պատմիչնե-  
րը շատ առասպելներ կպատմեն . մենք այն  
պատմութիւններէն այս միայն կրնանք ստույգ  
համարիլ՝ որ Բաբելոն քաղաքը շատ զարդա-  
րեց ու Ասորեստանի մայրաքաղաք արաւ :

2. Բաբելոն քաղաքը Եփրատ գետին երկու  
եզերքը շինուած էր , ու քարե պարսպով չորս  
կողմը պատած . պարսպին բարձրութիւնը 42  
կանգուն էր , ու վրան 16 ձիաւոր քովե քով  
կրնային քայել : Քաղաքին շրջապատը 480  
ասպարեզ կամ 88 հազարամերթ տարածութիւն  
ունէր . բոլոր պարսպին վրայ 250 աշտարակ  
շինուած էր , ու անոնց տակը 25 դուռ կար  
երկաքե . այն դռներէն դեպ ի ներս շիտակ  
ու լայն փողոցներ կային : Եփրատ գետին  
վրայ քարաշէն բարձր ու գեղեցիկ կամուրջ-  
ներ շինուած էին . իսկ մեծամեծ տներուն՝ պա-  
լատներուն ու պարտեզներուն համարը ջկար :

---

<sup>1</sup> Նինոսի ո՞վ յաջորդեց , եւ ինչ կպատմուի  
վրան :

<sup>2</sup> Բաբելոն քաղաքին վրայ ինչ գիտելիք կայ :

1. Շամիրամեն ետքը (880) Ասորեստանի վրայ 30 թագաւորք թագաւորեցին հետ զհետեւ , եւ զեղխութեան մեջ անցուցին իրենց կեանքը : վերջինը՝ որ էր Սարդանապատ , ուժե ընկած ու ինքզինքը զեղխութեան տուած էր : Բարեւոնի ու Մարաց տեղակալները վրան յարձակեցան ու Նինուէն առին ձեռքէն : Սարդանապատ լուսաւորուած՝ իւր զանձերովը պալատին մեջ այրել տուաւ ինքզինքը :

2. Սարդանապատի մեռնելէն ետքը՝ վարքակես իշխանը Մարաց երկիրը Ասորեստանէն բաժնեց , ու ինքնագլուխ թագաւոր եղաւ Մարաց վրայ , ինչպէս մեր Պարոյր նահապետն ալ թագաւոր եղաւ Հայաստանի :

3. Անկեց 250 տարի վերջը (625) Ասորեստանին տիրեցին Բաբելոնացիք եւ Մարք : Բաբելոնի թագաւորը եղաւ Նարուսպադասար , ու Մարացը Կիաքսար Ա . Նինուէն հիմնադրեց առկ կործանեցաւ . իսկ Բաբելոն զօրաւոր տերութիւն մի եղաւ :

---

<sup>1</sup> Շամիրամայ յաջորդները ո՞յք եղան :

<sup>2</sup> Սարդանապատէն ետքը Ասորեստանի վիճակն ինչ եղաւ :

<sup>3</sup> Բաբելոնացիք եւ Մարաց տերութիւնները թրք զօրացան նորէն :

1. Նարուպադասարի որդին Նարուքոդոնոսոր  
Բ, Հրեաստանի մեկ մասը եւ ուրիշ արեւմը-  
տեան երկիրներ առաւ. (600). բայց նորա մա-  
հուանեն ետեւ փոքր ինչ ժամանակէն Բարե-  
լոնի տերութիւնն ալ տկարացաւ, ու Բաղ-  
տասար անուսով վերջի բազաւորին ժամա-  
նակը (560) Մարաց երկրին հետ միատեղ  
Պարսից իշխանութեանը տակ ընկաւ :

Հ ա յ Բ .

2. Ներբովբայ իշխաններէն մեկը՝ Հայկ, որ  
Յաբեթի բռուն էր, չուզեց հնազանդիլ անոր,  
ու իրեն ազգականներովն ու կողմնակիցնե-  
րովը որ 300 հոգւոյ ջափ էին, ելաւ Ասորես-  
տանէն, գնաց դէպ ի հիւսիս (2350)՝ այժմեան  
Հայաստանի մեջտեղերը բնակեցաւ. տեղացի  
բնակիչներուն տիրեց, եւ իւր որդիքն ու բո-  
ուերը նոցա վրայ կառավարիչ դրաւ :

---

<sup>1</sup> Այդ երկու տերութիւններն ինչպէս վեր-  
ջացան :

<sup>2</sup> Մեր Հայոց ազգին սկզբնաւորութիւնն ինչ-  
պէս եղաւ :



1. Ներբովք, որ եւ Բեյ, հրամայեց Հայկին որ գայ նորէն իրեն հնազանդի. բայց Հայկ արհամարհեց անոր հրամանը. ուստի Բեյ շատ զօրքով գնաց Հայաստան՝ Հայկայ դեմ պատերազմելու: Հայկ սակաւաբիւ զօրքով՝ բայց մեծ քաջութեամբ դեմ դրաւ Բաբելացոց. իրեն երեքբեւեան նետովը զարկաւ սպանեց զԲեյ, եւ անոր զօրքը ցիրուցան արաւ:

2. Այն յաղթութենէն ետքը՝ Հայկ պատերազմի դաշտին մեջ քաղաք մի շինեց, անունը դրաւ Հայք, անոր բոլոր շրջակայքն ալ Հայոց ձոր կոչուեցաւ. իսկ ձեռքին տակը եղած ժողովուրդը Հայք ասուեցաւ:

3. Հայկ շատ տարի ապրեցաւ, եւ իրմէ ետեւ իրեն յաջորդ Հայկազուն իշխանները անելի ընդարձակեցին Հայաստանը:

4. Սոցա մեջ անուանի են նախ Արամ, որ իրեն յաղթութիւններովը օտար ազգաց մեջ

---

<sup>1</sup> Հայկ Բնջպէս յաղթեց Բեյայ:

<sup>2</sup> Ի՞նչ կերպով սկսաւ Հայկ իւր տիրապետութիւնը:

<sup>3</sup> Հայկազուն իշխանք Բնջպէս կառավարեցին զՀայաստան:

<sup>4</sup> Հայկազանց մեջ ո՞վ եղաւ ամենէն անուանի:

մեծ անուն ունեցաւ. ուստի մեր ազգը նորա անունովը (1828—1770) ճանչցուած է օտար ազգաց մեջ :

1. Արամայ Արայ որդին՝ որ *Գեղեցիկ* կը կոչուի, Ասորեստանի *Շամիրամ* թագուհւոյն դէմ պատերազմած ատենը սպանուեցաւ : Այնուհետեւ Շամիրամ տիրեց Հայաստանի, եւ հոն բերդ մի շինել տուաւ Շամիրամակերտ անունով, որ այժմու վանն է : Արայէն յետոյ քսան իշխան ետեւէ ետեւ տիրեցին մեր երկրին վրայ :

2. Պարոյր իշխանը Մարաց վարրակէս իշխանին հետ (646) յաղթեց Ասորեստանեայց, եւ Մարաց իշխանէն թագ առնելով՝ մեր առաջին թագաւորը եղաւ :

3. Տիգրան Ա, Կիւրոսին հետ միացաւ Աժդահակայ դէմ, պատերազմի մեջ զարկաւ մեռուց զինքը եւ անոր ընտանիքը Հայաստան բնակեցուց : Սորա ատենը Հայաստան շատ փառաւորուեցաւ, վասն զի շատ շինութիւններ եւ բարեկարգութիւններ արաւ Տիգրան :

---

<sup>1</sup> Արայի վրայ ինչ կպատմուի :

<sup>2</sup> Պարոյր ինչ կերպով թագաւոր եղաւ Հայաստանի :

<sup>3</sup> Տիգրան Ա ինչպէս արաւ թագաւորութիւնը :

1. Վաճէ բազաւորին ատենը (330) Մեծն Աղեքսանդր տիրեց Հայաստանի, եւ անով Հայկազանց բազաւորութիւնը վերջացաւ :

2. Մեծն Արշակ Պարթեւաց բազաւորը՝ Ասիոյ շատ երկիրներուն տիրելէն ետեւ՝ Հայաստանի վրայ բազաւոր դրաւ իւր Վաղարշակ եղբայրը, եւ Հայոց բազաւորութիւնը այնուհետեւ Արշակայ անունովը *Արշակունեաց բազաւորութիւն* կոչուեցաւ : Վաղարշակ Հայոց վրայ պատմական տեղեկութիւններ հաւաքեց, եւ ըստ այնմ նախարարներ ընտրեց, նոցա պաշտօններ սահմանեց, եւ ուրիշ շատ օգտակար կարգադրութիւններ արաւ :

3. Վաղարշակէն ետեւ Արշակունի բազաւորներուն ատենը Հայաստան այնպէս ծաղկեցաւ՝ որ ոչ առաջ եւ ոչ ետքը այնքան յաջողութիւն ունեցեր էր :

---

<sup>1</sup> Հայկազանց բազաւորութիւնը երբ եւ ինչպէս վերջացաւ :

<sup>2</sup> Արշակունեաց բազաւորութիւնն ինչպէս սկսաւ :

<sup>3</sup> Արշակունեաց ժամանակը Հայաստանի վիճակն ինչպէս էր :

1. Նոցա մեջ անուանիներն եղան Արշակ Ա, Արտաշես Ա, Տիգրան Բ, Արտաշես Բ, Մեծն Խոսրով, Մեծն Տրդատ եւ Վռամշապուհ :

2. Արշակ Ա, Վաղարշակայ որդին, Պոնտացիները նուաճեց պատերազմելով :

3. Արշակայ որդին Արտաշես Ա, Յունաստանի եւ բոլոր Փոքր Ասիոյ տիրելէն ետեւ՝ Պարսից թագաւորին երկրորդը ճանջցուեցաւ. բայց Հռովմայեցւոց դէմ պատերազմի պատրաստուած ատենը իւր զօրքերէն սպանուեցաւ :

4. Արտաշիսի մահը լսելուն պէս Պոնտոսի Յոյները եւ Ասորիները ապստամբեցան. բայց Արտաշիսի Տիգրան Բ անունով որդին նուաճեց զանոնք : Երբոր Միհրդատ Հռովմայեցւոց դէմ պատերազմի ելաւ, Տիգրան միացաւ հետը ու քանի մի անգամ յաղթեց Հռովմայեցւոց. բայց տեսնելով որ Միհրդատայ որդին

---

<sup>1</sup> Արշակունի թագաւորաց մեջ անուանիները ոչք եղան :

<sup>2</sup> Արշակ ինչ երեւելի գործ արաւ :

<sup>3</sup> Արտաշիսի վրայ ինչ կպատմուի :

<sup>4</sup> Տիգրան Բ ինչպէս արաւ թագաւորութիւնը :

անցեր է Հոռվմայեցւոց կողմը, եւ իրեն որդին ալ ապստամբեր է իւր դէմ, հաշտուեցաւ Հոռվմայեցւոց հետ. բայց վրան շատ ջանցաւ, իրեն *Բարզափրան* գօրավարը բոլոր Ասորւոց երկրին տիրեց, բեպետեւ շուտով նորէն ետ առին Հոռվմայեցիք :

Տիգրանէն ետքը թագաւորեցին Արտաւազդ, Արշամ եւ Արգար. այս վերջինը ժամանակակից էր Բրիտտոսի Տեառն մերոյ, եւ լսելով անոր հրաշագործութիւնները՝ հաւատաց իրեն, եւ անով բժշկութիւն գտաւ իրեն անբժշկելիցաւին :

1. *Արտաշէս* Բ թագաւորին ատենը Ալանաց պատերազմը բացուեցաւ. Արտաշէս յաղթեց Ալաններուն, ու անոնց թագաւորին Սաթինիկ դուստրը իրեն թագուհի ըրաւ :

2. *Խոսրով Մեծն*՝ Պարսից *Արտաշիր* թագաւորին դէմ պատերազմելով՝ մինչեւ Հընդկաստան քշեց զինքը : Արտաշիր տեսնելով որ զենքով չկրնար նորա վնաս հասցընել, մեր

---

<sup>1</sup> Արտաշէս Բ ինչ երեսելի յաղթութիւններ արաւ :

<sup>2</sup> Մեծն Խոսրով ինչպէս թագաւորեց եւ ինչ կերպով մեռաւ :

սորք Գրիգոր Լուսաւորչին հօրք Անակայ  
ձեռքովք սպաննեց Խոսրովք, եւ բոյոր Հայոց  
տիրեցէն ետեւ՝ Խոսրովու ցեղք ջնջել սուսա,  
բաց ի նորա Տրդատ անունով որդւոյն՝ որ  
Հոռմ փախուցին :

1. Արտաշրի մահուանէն ետեւ՝ Տրդատ Հայ-  
աստան դարձաւ բազաւորական իշխանու-  
բեամբ, եւ լսելով որ Գրիգոր Լուսաւորիչ  
քրիստոնեայ է՝ շատ ջարջարանքներ տուաւ  
անոր որ ի կուսպաշտութիւն դարձրնէ, եւ  
յետոյ Խոր վիրապը ձգել տուաւ : Երբոր Հովի-  
սիմեան կուսանքն ալ նահատակեց, եւ Աս-  
տուծմէ պատժուեցաւ, հանեց զԳրիգորը Խոր  
վիրապէն, եւ գոջմամբ դարձի գալով՝ բժըշ-  
կուեցաւ իւր հարուածներէն . յետոյ բոյոր  
նախարարներովն ու ժողովրդովք քրիստո-  
նեայ եղաւ : Այնուհետեւ Տրդատ Պարսից դէմ  
պատերազմեցաւ, եւ բոյորովին ազատեց Հայ-  
աստանը նոցա ձեռքէն :

2. Տրդատայ յաջորդներուն տկարութեանը  
պատճառաւ Հայաստան շատ նեղութիւններ

---

<sup>1</sup> Տրդատ ինչ կերպով բազաւորեց : — Ի՞նչ-  
պէս քրիստոնեայ եղաւ :

<sup>2</sup> Տրդատայ յաջորդներուն ժամանակը ինչ  
վիճակի մէջ էր Հայաստան :

կրեց Պարսիկներէն, որ բոլոր Հայաստանի տիրեր էին : Այն ատենները մեր ազգին միաբարանք եղաւ միայն Մեծն Ներսէս, որ շատ բարիք արաւ ազգին եւ բազաւորութեան :

1. Մեծին Ներսիսի օրերէն ետեւ Հայաստանի մեկ մասը Յունաց անցաւ, եւ միւսը Պարսից : Սոցա մեջ քաղաքական պատերազմ բացուեցաւ, որ մինչեւ *Վոսամշապուհ* բազաւորին օրերը (392) ըլեց :

2. Վոսամշապուհոյ խելացի եւ խաղաղասեր կառավարութեամբը հանգչեցաւ մեր ազգը, եւ սկսաւ ուսմամբ ծաղկիլ : Սուրբն Սահակ եւ սուրբն Մեսրոպ աշխատեցան ազգային սեպհական գրեր հնարելու, աստուածաշունչն ու զանազան գրեանք բարգմանեցին, եւ դրսւրոցներ բանալով՝ ուսումնական կենդանութիւն տուին ազգիս :

3. Վոսամշապուհէն ետքը Հայաստան նորէն տակն ու վրայ եղաւ, վասն զի Պարսից Վոսամ


---

<sup>1</sup> Մեծին Ներսիսի մահուանէն ետեւ ինչ եղաւ Հայաստանի վիճակը :

<sup>2</sup> Վոսամշապուհոյ ատեն ինչ կերպով ծաղկեցաւ Հայաստան :

<sup>3</sup> Արշակունեաց բազաւորութիւնը ինչպէս վերջացաւ :

թագաւորը Հայոց շատ նեղութիւն տալէն ետեւ՝ Վ.Ռամշապհոյ 18 տարեկան Արտաշիր որդին դրաւ անոնց թագաւոր : Արտաշիր մովի վարքովը այնչափ ատելի եղաւ ազգիս, որ նախարարները նորա անկարգութիւններէն ձանձրացած՝ խնդրեցին Վ.Ռամէն որ թագաւորութիւնը վերցընէ, ու իրենց վրայ պարսիկ մարզպան մի դնէ : Եւ այսպէս վերջացաւ Արշակունեաց թագաւորութիւնը, որ 583 տարի քշեց :



### *Երովպացիք եւ Եգիպտացիք.*

1. Ափրիկէի հիւսիսային կողմը դեպ ի արեւելք մեծ գետ մի կանցնի՝ Նեղոս անունով . այս գետը Երովպիոյ կամ Հապեշի լեռներէն կրբխի, Նուպիայէն անցնելով՝ Եգիպտոս կիջնի, ու շատ ճիւղերով Միջերկրական ծովը կթափի :

2. Նուպիային մեջ հին ժամանակները Երովպացիք կրնակէին . սոքա ժամանակով Ա-

---

<sup>1</sup> Ո՞ւր է Նեղոս գետը :

<sup>2</sup> Երովպացիք ո՞ւր կրնակէին :



բաբիայէն եկած էին, ու Ափրիկէի շատ տեղերուն տիրելով՝ իրենց քաղաքներ շինել էին, որոց մեջ Թերե քաղաքը ամենէն երեսելի էր :

1. Եգիպտոսի երկիրը մեծ հովիտ մի է՝ Նեղոս գետին երկու կողմը, որ Նուպիայէն սկսեալ մինչեւ Միջերկրական ծովը կերթայ : Երկրին արեւմտեան կողմը անապատ է, իսկ արեւելեան կողմի լեռներուն մեջ կարմիր կրանիք, եւ ուրիշ կարծր քարեր շատ կգտնուին . հին ժամանակները Եգիպտացիք այն քարերէն բուրգեր, կոթողներ եւ ուրիշ շէնքեր կը շինէին :

2. Եգիպտոսի հովիտը երեք մասն կրածնուի . Վերին, Միջին եւ Ստորին՝ որ Դելտա (կամ Տելքա) եւս կկոչուի :

3. Նեղոս գետին քովերու հովիտը ինքնին անրեր է, վասն զի այն տեղ անձրեւ չիգար . բայց գետին ջուրը բոլոր հովիտը կոռոզէ ու պտղաբեր կանէ երկիրը . ամէն ամառ՝ յու-

---

<sup>1</sup> Եգիպտոսի երկիրը ուր է :

<sup>2</sup> Քանի մաս կրածնուէր Եգիպտոս :

<sup>3</sup> Եգիպտոսի բարեբերութիւնն ինչպէս է :

նիս ամսէն մինչեւ սեպտեմբեր Երովպիոյ մեջ սաստիկ անձրեւ. կուգայ վեց ամիս անդադար-այն ջրերը Երովպիոյ լեռներէն Նեղոս գետը իջնալով, նորա ջրերը կրարձրանան ու բոլոր Եգիպտոսը կժածկեն . եւ երբոր քաշուին, գետինը խոնաւ կմնայ, ու ջրերէն մնացած ցեխին հետ խառնուելով՝ հողը շատ կպարարտանայ :

1. Հին ատենները ջուր չեղած ժամանակներն ալ ջուր ունենալու համար, Եգիպտացիք ջրմուղներով գետին ջուրը ջրամբարներու մէջ կառնէին, ու պէտք եղած ատենը կգործածէին :

2. Երովպացի գաղթականները վերին Եգիպտոսի մէջ կրնակէին : Քամայ որդին Մենես (2500) իւր բոռերովը գնաց բնակեցաւ Միջին Եգիպտոս, ու Մեմփիս քաղաքին հիմը դրաւ :

3. Եգիպտացւոց երկրին մէջ մինչեւ ցայժմ հին ժամանակէ մնացած խիստ շատ շէնքե-

---

<sup>1</sup> Եգիպտացիք ինչպէս կը ջրէին իրենց երկիրը :

<sup>2</sup> Եգիպտոսի հին բնակիչներն ո՞րք եղան :

<sup>3</sup> Ի՞նչ մնացորդներ կան հին Եգիպտոսի շէնքերէն :

բու. աւերակներ ու արձաններ կան, մանա-  
ւանդ Վերին Եգիպտոս, ուր Թերէի աւերակ-  
ները մեծ տեղ բռնած են. ասղիս անդին ալ  
սփռուած կրգտնուին կորողներ, պալատներ,  
ու սփինքսեր :

1. Միջին Եգիպտոս միայն մեծամեծ բուր-  
գեր կան : Այն բուրգերուն ձեւը շաքարի գրչ-  
խու ձեւին նման է, իսկ բարձրութիւնը 100  
կամ 150 կանգուն :

2. Քեոպսին շինել տուած բուրգը 210 կան-  
գուն բարձրութիւն ունէր :

3. Այն շէնքերուն մեջ նեղ նեղ ճամբաներ  
կան, ուր կերեւի թէ Եգիպտացիք իրենց բա-  
զաւորները կթաղէին :

4. Սփինքսերը քարէ արձաններ էին՝ պատ-  
կած, առիւծի կամ մարդու կերպարանքով  
շինուած. ասոնք մեկ տաճարէն մեկալ տա-  
ճարը երբալու ճամբուն վրայ կղրուէին :

---

<sup>1</sup> Միջին Եգիպտոսի մեջ ինչ շէնքեր մնա-  
ցած են :

<sup>2</sup> Քեոպսի բուրգին բարձրութիւնը ռըջափ էր :

<sup>3</sup> Բուրգերուն մեջ ինչ կան :

<sup>4</sup> Սփինքսերն ինչ էին :

1. Կորոզը քառակուսի սիւն է՝ մեկ քարէ տաշուած, բարձրութիւնը 29-էն մինչեւ 60 կանգուն :

2. Պալատներուն մէջ ամենէն երեսելին էր *Բաւիդը*՝ որ Լարիւրինթոս ալ կասուի . ասոր մէջ 12 մեծամեծ սրահներ կային՝ վրաները ծածկած, եւ անոնց մէջ 3000 սենեակ, որոց կեսը վերի յարկն էր ու կեսը գետնափոր . այն սենեակները նեղ սրահներով մեկմեկու հետ հաղորդակցութիւն ունէին :

3. Եգիպտացւոց գերեզմանատունները ժայռերու մէջ երկայն երկայն փորուած այրերու կամ քարանձաւներու մէջ էին, եւ Եգիպտացիք զանոնք իրենց տներէն աւելի կզարդարէին :

4. Եգիպտացիք մեռած մարդոց մարմինները փտութենէ պահելու համար՝ կը զմուսէին, այսինքն նոցա փորը կպարպէին, ու անուշահոտ եղերով, զմուսով ու խնկերով կկեցը-

---

<sup>1</sup> Կորոզն ինչ է :

<sup>2</sup> Պալատներուն մէջ ո՞րն էր անուանին :

<sup>3</sup> Եգիպտացւոց գերեզմաններն ինչպէս էին :

<sup>4</sup> Մեռելոց մարմիններն ինչ կանէին :

նէին . յետոյ հոտաւետ եղերու մեջ քաթխած կտաւով կպատէին ու կչորցընէին : Այս կերպով զմուսած մարմինները մահիւս կասուին , որ հազարաւոր տարիներ կղիմանան առանց արուելու :

1. Եգիպտացիք մեռած մարդոց մարմինը անոր համար այս կերպով կպահպանէին որ կարծէին թէ մարդս մեռնելէն ետեւ՝ հոգին 3000 տարի կենդանեաց մեջ կպտըտի , ու յետոյ նորէն առաջին մարմնոյն մեջ կըմտնէ . ուստի կջանային որ մինչեւ հոգւոյն նորէն ետ դառնալը մարմինը չփտտի :

2. Հնդիկներուն պէս Եգիպտացիք եւս երկնային մարմինները կպաշտէին , մանաւանդ արեգակն ու լուսինը , որոց անունը դրած էին *Ոսիրիս* եւ *Իսիս* :

3. Կպաշտէին նաեւ զանազան օգտակար եւ վնասակար կենդանիներ , այսինքն կատու , շուն , քաջահաւ ասուած՝ օձ ուտող բռչունը , եւ հիլոս կամ Փարաւոնի մուկ ասուած փոքրիկ կենդանին՝ որ կոկորդիլոսի հակիթները

---

<sup>1</sup> Մեռելները ինչո՞ւ կըզմուսէին :

<sup>2</sup> Ի՞նչ կպաշտէին Եգիպտացիք :

<sup>3</sup> Ո՞ր կենդանիները կպաշտէին :

կուտե . եւս եւ կոկորդիլոսը , որ ահարկու  
զազան մի է , Նեղոս գետին եզերքը շատ կը-  
զտնուի , ու մարդ տեսածովը վրան կյար-  
ձակի :

1. Այն պաշտուած կենդանեաց մեջ զլխա-  
ւորը *ապխա* եզն էր , գոյնը սեւ , ճակատին  
ու փորուն վրայ ճերմակ . այն եզը եզիպտա-  
ցիք մասնաւոր մեհեանի մեջ կպահէին , ու  
կարծէին թէ Ոսիրիսի փոխանորդն է :

2. Արդէն պատմեցինք թէ ինչ մեծամեծ  
բուրգեր , պալատներ ու հոյակապ տներ շի-  
նած էին եզիպտացիք . աստի կրնանք հաս-  
կրնալ թէ այն ազգը շատ աշխատասէր ու  
գործունեայ ազգ էր . բաց յայնմանէ հին ա-  
տենի ուրիշ բարեկիրք ազգերուն զլխաւորնե-  
րէն մեկն էր , եւ մեջը շատ մարդիկ կային ,  
մանաւանդ քուրմերը , որ զանազան գիտու-  
թեանց ալ տեղեակ էին :

3. Թերէի գրքատունը կրօնական , աստղա-

---

<sup>1</sup> Եզիպտացւոց պաշտած կենդանիներուն  
մեջ զլխաւորը հրն էր :

<sup>2</sup> Եզիպտացւոց բնաւորութիւնն ինչպէս էր :

<sup>3</sup> Եզիպտացւոց ուսումնասիրութիւնը ինչէն  
յայտնի է :

բաշխական, աշխարհագրական, սպառմական  
ու բժշկական գրքերով լի էր :

1. Քուրմերը *սլասլիք* ասուած եղեգէն շի-  
նուած բարակ թղթի վրայ կգրէին իրենց գրե-  
րը . իսկ գերեզմաններուն վրայ գրի տեղ այլ  
եւ այլ կենդանիներ կընկարէին . շատ անգամ  
այ եռանկիւններ, խաչեր եւ ասոնց նման  
բաներ կփորագրէին : Այն տեսակ ձեւերուն  
ամեն մէկը մէկ իմաստ կնշանակէր . բայց  
այն գրերուն (որ մեծնական կկոչուին) նշա-  
նակութիւնը միայն քուրմերը գիտէին . ժողո-  
վրդոց համար ուրիշ տեսակ գրեր կային :

2. Եգիպտոսի բոլոր ժողովուրդը ի սկզբան  
չորս կարգ կբաժնուէր . այսինքն քուրմք,  
գինուորք, երկրագործք, եւ արուեստաւորք .  
իսկ յետոյ վեց կարգ եղաւ :

3. Գլխաւոր կարգերն էին քրմացն ու գի-  
նուորացը : Քուրմերը մեծ ոյժ ունէին ժողո-  
վրդեան վրայ . եւ որովհետեւ իրենք միայն  
գիտէին Եգիպտոսի օրէնքները, անոր համար

---

<sup>1</sup> Եգիպտացւոց գրերն ինչ ձեւով էին :

<sup>2</sup> Քանի կարգ կբաժնուէին Եգիպտացիք :

<sup>3</sup> Այն կարգերուն մէջ գլխաւորներն ո՞յք էին :

մեղապարտներուն դատաստանը իրենց ձեռքն էր, ուստի ժողովրդեան առջեան ալ մեծ պատիւ ունեին իրենք:

1. Ի սկզբան Եգիպտացոց թագաւորները քրմաց կարգէն կրնտրուէին, բայց վերջը զինուորները եւս իրաւունք ունեցան իրենց մեջէն թագաւոր ընտրելու:

2. Առաջ Եգիպտոսի մեջ երեք չորս թագաւոր կար, նոյնչափ ալ թագաւորութիւն. սոցա մեջ անուանիներն էին *Թերե* եւ *Մեմֆիս*:

3. Ասորեստանցի եւ Արարաջի վրանարնակ հովիւները չորս դար ու կես տիրեցին Եգիպտոսի: Սոցա քշուելէն վերջը Եգիպտոսի վրայ տիրապետեցին Փարաւոնները (այսպէս կկոչուէին Եգիպտոսի թագաւորները): Փարաւոններուն մեջ ամենէն անուանին էր *Սեսոստր* (450), որ Եգիպտոսի թագաւոր ըլլալէն վերջը՝ Ասիոյ ու Ափրիկէի մեջ ալ շատ տեղերու տիրեց:

4. Սեսոստրէն 600 տարի վերջը (720) Եգիպ-

---

<sup>1</sup> Թագաւորները ո՞ր կարգէն կրնտրուէին:


<sup>2</sup> Քանի թագաւոր կար Եգիպտոսի մեջ:

<sup>3</sup> Եգիպտոսի տիրողներն ո՞չք եղան:

<sup>4</sup> Ի՞նչ կերպով վերջացաւ հին Եգիպտոսի թագաւորութիւնը:



տոսի մեջ 12 թագաւորութիւն եղաւ : Փսամ-  
մետիքոս նորէն միացուց զանոնք . իսկ Փսամ-  
մենիտ անուանով վերջի թագաւորին ժամա-  
նակը (650) բոլոր եգիպտոսի տիրեց Պարսից  
Կամբիսա արքան :



### Փիւնիկեցիք.

1. Միջերկրական ծովուն արեւելեան եզեր-  
քը *Լիբանան* լեռները բռնած են . այն լեռ-  
ներուն ու ծովուն միջոցը երկիր մի կայ ան-  
բեր եւ աւազոտ , որ հին ատենը Փիւնիկե-  
ցոցն էր , ուստի երկիրն ալ *Փիւնիկէ* կը-  
կոչուէր :

2. Փիւնիկէի մեջ շատ թագաւորներ կային .  
իւրաքանչիւր քաղաք իւր շրջանակովը զատ  
թագաւորութիւն էր , ու իրեն համար թագա-  
ւոր ունէր :—Բայց այն թագաւորները ամենքը  
մեկմեկու հետ զաշնակից էին :

3. Փիւնիկէի անուանի քաղաքներն էին Տիւ-  
րոս եւ Սիդոն , կամ Ծուր եւ Ծայդան :

---

1 Փիւնիկէն ո՞ւր է :

2 Բանի թագաւոր կար Փիւնիկէի մեջ :

3 Փիւնիկէի անուանի քաղաքները ո՞յք էին :

1. Երկիրները աւազոտ լինելուն պատճառաւր Փիւնիկեցիք ոչ ցան կրնային անել եւ ոչ հովուութիւն . ուստի սկսան ձկնորսութիւն անել : Բայց որովհետեւ ձուկ բռնելը առանց նաւակներու չլինիր , սկսան Լիրանանու անտառներէն փայտ կտրել , իրենց մակոյկներ շինել , ու անոնցմով ծովուն եզերքները շրջիլ . քիչ քիչ սկսան այն նաւակներով հեռու տեղեր այ երբայ ու եզերքներէն հեռանալ . եւ ճամբան չկորսնցրնելու համար՝ աստղերուն նայելով կանէին ճանապարհորդութիւնները :

2. Փիւնիկէի մօտ Միջերկրական ծովը կղզի մի կար *Կիպրոս* անունով . Փիւնիկեցիք իրենց փոքրիկ նաւերովը նախ հոն ելան , ու տեսնելով որ այն կղզւոյն վրայ վայրենի մարդոցմէ ուրիշ բան չկայ , անոնցմէ մէկ քանին առին , դրին նաւերն ու օտար երկիրներ տանելով՝ ապրանքի հետ կփոխանակին : Այսպէս սկսուեցաւ նոցա առեւտուրը : Տեսնելով որ այն կերպ վաճառականութիւնը դժուարին է եւ շահաւոր չէ , սկսան աւելի հեռու տե-

---

<sup>1</sup> Փիւնիկեցւոց արուեստն ինչ էր :

<sup>2</sup> Վաճառականութիւնը ինչ կերպով ծաղկեցաւ Փիւնիկեցւոց մէջ :

դեր երբայ : Երբոր Սպանիա հասան եւ տե-  
սան որ արժարի հանքեր շատ են այն երկրին  
մեջ , իրենց նաւերը սկսան արժար բեռցընել :  
Սպանիայէն Փիւնիկեցիք անցան Անգղիա , եւ  
այն տեղը սկսան կապար բեռցընել : Անգ-  
ղիայէն Պալքիկ ծովուն հարստային եզերքը  
գնացին , եւ մինչեւ Բրուսիա հասան , ուր շատ  
սար (քէհրիպար) կգտնուէր , որ այն ժամա-  
նակը ոսկիի քաշով կծախուէր :

1. Նաւով ճամբորդութիւն արած ժամանակ-  
ները հանգչելու տեղեր ունենալու համար ,  
Միջերկրական ծովուն եզերքը քաղաքներ հիմ-  
նեցին , որոց մեջ երեւելիներն են *Կարքեղոն*  
*Ափրիկէի* , եւ *Գաղէա* Սպանիոյ մեջ :

2. Ափրիկէի ու Եւրոպայի մեջ ունեցած ծո-  
վային վաճառականութենէն զատ , Փիւնիկեցիք  
ցամաքով Ասիոյ հետ ալ առուտութիւն :  
Արարացւոց երկրէն կուգար իրենց անուշա-  
հոտ խղեր , ոսկի եւ ազնիւ գոհարներ . Ասո-  
րեստանէն բուրդ , զինի . Հնդկաստանէն փղոս-

---

<sup>1</sup> Ի՞նչ քաղաքներ կանգնեցին Փիւնիկեցիք  
դրսի երկիրները :

<sup>2</sup> Փիւնիկեցիք Ասիացւոց հետ ինչ առուտութիւն  
ունեին :

կրր ու համեմք . Հայաստանէն ձի , եւ Կովկասէն պղինձ ու գերի :

1. Ուրիշ ազգերու հետ անդադար հաղորդակցելով , Փիւնիկեցիք շատ գիւտեր եւ արուեստներ սովրեցան , եւ ուրիշ ազգաց եւս հաղորդեցին իրենց գիտցածները : Իրենց գրլխաւոր գիւտերն էին՝ ապակի շինել , ծիրանի գործել , ստակ կտրել , ու զիր զրելու արուեստը :

2. Կպատմենք ք օր մի Տիւրոսի բնակիչներէն մէկ քանին ծովուն աւազոտ ափը կրակ վառեր են ու իրենց կերակուր կեփեն եղեր : Կրակը մարելէն վերջը տեսան որ մոխրին մեջ կտոր կտոր թափանցիկ քարեր կփայլին . դիտեցին ու տեսան որ այն քարերը մոխրէ ու աղբորակէ գոյացած են : Այսպիսի դիպուածով սովրեցան Փիւնիկեցիք *ապակի* շինելը :

3. Ի սկզբան ապակիները մանր մանր կրտորուանք էին , եւ զինը ոսկիի հաւասար էր : Այն սղութեանը պատճառաւ անգին քարերու

---

<sup>1</sup> Փիւնիկեցւոց հնարած գլխաւոր գիւտերը որոնք էին :

<sup>2</sup> Ապակին ինչպէս հնարեցին :

<sup>3</sup> Ապակիին յարգը որչափ էր :

տեղ անոնցմէ մատանիներ կշինեին . իսկ մեծ ապակիներ շինելը , ինչպէս են այժմեան մեր պատուհանները , այն ժամանակները դեռ չէին գիտեր :

1. Ծիրանին նոյնպէս դիպուածով գտնուած է : Հովուին մեկը՝ ոչխարները արածած ժամանակը՝ իրեն պահապան շունին դունչը կարմիր ներկով ներկած տեսնելով , քննեց իմացաւ որ տեսակ մի ոստրե բացեր ու անոր միջի կարմիր ներկովը ներկուեր է : Այն գիտոր ուրիշներուն ալ յայտնի լինելէն վերջը՝ սկսան անով մետաքս եւ ուրիշ կտաւներ ներկել :

2. Փիւնիկեցիներէն առաջ ստակը մեկ տեղ չէր գործածուեր : Իրենք առաջինը եղան որ ոչխար , կով եւ ուրիշ բաներ օսկիի եւ արծաթի հետ սկսան փոխանակել . իսկ Տիւրոս քաղաքին բնակիչները այն կտոր կտոր մետաղներուն վրայ զանազան կենդանիներ կձեռացնէին , ու անով առուտուեր կանեին :

---

<sup>1</sup> Ծիրանին ինչպէս հնարուեցաւ :

<sup>2</sup> Ստակ բանեցընելը ինչպէս սկսան Փիւնիկեցիք :

1. Գիրք նոյնպէս Տիւրացոց գիտն է կասեն, եւ անոնցմէ սովբեր են նաեւ Հելլենք եւ ապա ուրիշ ազգերը . թեպէտ ըստ ոմանց առաջին գիր հնարողները Բարեկացիք էին, եւ իրենցմէ սովբեր էին Տիւրացիք :

2. Փիւնիկեցիք զանազան արուեստներ եւս գիտէին . տեսակ տեսակ կտաւներ կգործէին, մետաղէ՝ վայտէ եւ փղոսկրէ զանազան բաներ կշինէին . եւ այնչափ վարպետ էին որ մինչեւ ուրիշ ազգերու ալ կօզնէին ու կսովբեցրնէին :

3. Թեպէտ Փիւնիկեցոց մեջ արուեստն ու առուտուրը շատ ծաղկած էր, բայց կռասպաշտութիւնը այնպէս տիրած էր մեջերն որ չէին կրնար ճշմարիտ աստուածապաշտութեան հետեւիլ, թեւ Երրայեցոց հետ յաճախ հաղորդակցութիւն ունէին :

---

<sup>1</sup> Գիրք սվ հնարեց :

<sup>2</sup> Փիւնիկեցոց գիտցած արուեստները որոնք էին :

<sup>3</sup> Փիւնիկեցիք աստուածապաշտ էին թէ կռասպաշտ :

1. Փիւնիկեցիք արեգակն ու լուսինը պաշտելէն զատ՝ Բարեւացւոց պէս Մողոք անունով չաստուած ալ ունին, որոյ իրենց տղաքը կզոհին : Այն կուռքը պղնձէ ձուլած էր. անոր ձեռքերը լաւ մի տաքցընելէն ետեւ՝ զոհելու տղան զիրկը կուտային ու այնպէս չարաչար տանջելով կայրէին :

2. Փիւնիկեցիք բնութեամբ հպարտ էին եւ խարերայ, եւ իրենց կեանքը զեղխութեամբ կանցընէին. ուստի եւ Աստուած պատժեց զիրենք. նախ Բարեւացւոց Նարութողոնոսը քազաւորը Տիւրոս ու Սիդոն քաղաքները քանդեց, յետոյ մեծն Ադեքսանդր նոր Տիւրոսը (որ հնոյն քով կղզիի մը վրայ շինուած էր) հիմնադրատակ կործանեց, ու մեջի հարուստ վաճառականներէն՝ որը սպաննել տուաւ, եւ որը զերի վարեց եւ օտար ազգաց ծախեց :

3. Այն երկու փառաւոր քաղաքներուն տեղը այժմ տխուր աներակներու մնացորդներէն զատ՝ ուրիշ բան չկայ :

---

<sup>1</sup> Փիւնիկեցւոց զվսաւոր կուռքերն ինչ էին :

<sup>2</sup> Փիւնիկեցւոց բարքն ու պատմութիւնը ինչ էր :

<sup>3</sup> Տիւրոս եւ Սիդոն քաղաքները այժմ ինչ վիճակի մեջ են :

## ԵՒՐԱՅԵՅԻՒՒՑ.

1. Երբ այնցիք կամ Խորայեւացիք, որ մեք սովորաբար Հրեայ կկոչեմք, այժմ իրենց հայրենիքեն զրկուած՝ բոլոր աշխարհք ցրուած են, եւ ամեն տեղ ըստ մեծի մասին առքատութեամբ եւ խեղճութեամբ կապրին: Հին ատենը նոցա վիճակը բոլորովին տարբեր էր, եւ Աստուծոյ ժողովութիւնը կհամրուէին. վասն զի այն ատենի ազգաց մեջ իրենք միայն մոռցած չէին զճշմարիտն Աստուած:

2. Երբ այնցոց ազգապետը Սեմայ *Երեք* թոռն էր: Ի սկզբան Երբ այնցիք Միջագետաց երկիրը կրնակէին, այսինքն Տիգրիս եւ Եփրատ գետերուն մեջտեղը, Բաբելոնի հիւսիսային կողմը:

3. Արրահամ նահապետը՝ որ Սեմայ ցեղէն էր, Աստուծոյ հրամանաւր իրեն ծառաներովն

---

<sup>1</sup> Երբ այնցիք թնջ ազգ էին:

<sup>2</sup> Ուսկից առաջ եկած են, եւ ուր կրնակէին:

<sup>3</sup> Ի՞նչ կերպով գնացին Քանանացոց երկիրը:



ու. խաշինքներովը գնաց (2000) դեպ ի արեւմուտք՝ Միջերկրական ծովուն եզերքը Քանանացւոց երկիրը, որ շատ գեղեցիկ ու բարերեր երկիր էր :

1. Այն երկրին լեռները բարձր էին ու գեղեցիկ անտառներով պատած . ձորերը հարիւրաւոր ջրերով կոռոզուէին, ու այն ջրերուն եզերքը պտղաբեր ծառերով ու այգիներով զարդարուած էին . կանաչ դաշտերը ընտանի անասուններ կարածէին, եւ արտերը պարարտ ու լաւ ցորենով ծածկուած էին :

2. Արրահամ Քանանացւոց երկիրը գալէն ետեւ՝ Աստուած խոստացաւ նորա սերունդը շատցընել, ու այն նորարնակ երկիրը նոցա տալ . այն խոստմանը համար Քանանացւոց երկիրը *Աւետեաց երկիր* կոչուեցաւ :

3. Արրահամու *Իսահակ* որդին ու *Յակոբ* բոռը իրենց հօրը հետ մեկտեղ կրնակէին : Յակովբայ ծերութեան ժամանակը Քանանա-

---

<sup>1</sup> Քանան ինչ տեսակ երկիր էր :

<sup>2</sup> Ինչո՞ւ համար Աւետեաց երկիր կասուի :

<sup>3</sup> Իսահակ եւ Յակոբ նահապետաց վրայ ինչ զիտելիք կայ :

ցոց երկիրը մեծ սով եղաւ : Յակովբայ Յովսէփ անունով որդին այն միջոցին եզիպտոսի քաղաւորին քովը գտնուելով, աղաչեց քաղաւորին ու հրաման առաւ իրմէ որ հայրը ու իր տասներմէկ եղբայրները բոռներովը հանդերձ զան եզիպտոս բնակին : Թաղաւորն ալ *Գեւեմ* ասուած պտղաբեր զաւար տուան նոցա բնակութեան :

1. Մինչեւ ի Յովսէփայ մահը հանգիստ կեցան հոն Երրայեցիք, յետոյ (1800) եզիպտացիք սկսան նեղել զանոնք եւ ջարաջար աշխատոցրնել : Ուստի եւ Հրեայք բողին իրենց տրուած զաւար, եւ քաղաքներուն մէջ բնակեցան : Եզիպտացիք տեսնելով որ Հրեից ժողովութիւնը որ ըստ օրէ կաճի եւ կշատնայ՝ բըշնամացան անոնց, եւ իրենց քաղաւորը հրաման տուաւ որ Երրայեցոց նորածին մանչ տղաքը նեղոս գետին մէջ ձգեն :

2. Հրեայ կին մի իւր մանչ զաւակը մահուրնէ ազատելու մտքով արկղի մի մէջ դը-

---

<sup>1</sup> Եզիպտացիք ինչպէս վարուեցան Հրեից հետ :

<sup>2</sup> Ո՞վ էր Մովսէս, եւ ինչպէս ազատեցաւ մահուանէ :

բառ, եւ այնպէս ձգեց ջուրը : Թագաւորին աղջիկը ջրին եզերքը քալած ատենը գտաւ այն արկղը, եւ մեջի տղան իւր պալատը առաւ : Այն տղան *Մովսէսն* էր, որ թագաւորին պալատը մեծնայէն եւ ուսում առնելէն ետեւ Հրէից ազատիչը եղաւ :

1. Աստուած հրամայեց Մովսէսի որ Հրեաները Եգիպտոսէն հանէ (1300) ու Արարացւոց անապատէն անցնելով՝ Քանանացւոց երկիրը տանի, եւ այն երկրին այլազգիներուն տեղը Հրեաները բնակեցնէ. վասն զի Աստուած կամեցեր էր որ այն տեղը միայն իրեն հաճոյ եղած մարդիկը բնակին :

2. Քանանացիքն իրենց տեղէն հանելու համար պետք եղաւ որ Հրէից ազգը անապատին մեջ բազմանայ եւ պատերազմի պատրաստուի, Աստուծոյ կամքը աղէկ ճանչնայ եւ ըստ այնմ շարժի : Անոր համար Աստուած *տասն պատուիրանքը* տուաւ Մովսէսի՝ որ Հրէից տայ : Այն պատուիրանքէն զատ Մովսէս օրէնքներ գրեց իւր ժողովրդեան համար որ բարեպաշտ

---

<sup>1</sup> Հրեայք ինչո՞ւ եղան Եգիպտոսէն :

<sup>2</sup> Ի՞նչ կերպով գնացին բնակեցան Հրեայք Քանանացւոց երկիրը :

եւ առաքինի լինին ու արդարութեամբ եւ  
անմեղութեամբ վարուին : Բոլոր ժողովուրդը  
տասուերկու ցեղ բաժնեց , ու կանոն դրա-  
որ այն ցեղերէն Ղեւտացւոցը միայն իրաւունք  
ունենայ խորանին (\*) մեջ սրբազան պաշտօն  
կատարելու : Իսկ իւր Անարոն եղբայրը քա-  
հանայապետ արաւ , այսինքն Աստուծոյ փո-  
խանորդ , եւ միանգամայն բոլոր ցեղերուն  
ցեղապետ դրաւ զինքը : Քառասուն տարի  
անապատին մեջ պտրտելէն ետքը , Երբայեցիք  
Յեսուայ առաջնորդութեամբը հասան Աւետեաց  
երկիրը , ու քանի մի տարի Քանանացւոց հետ  
սաստիկ պատերազմելէն վերջը , քշեցին Քա-  
նանացիները , եւ իրենք Յորդանան զետին ե-  
զերքը բնակեցան :

1. Իւրաքանչիւր ցեղ զատ երկիր ունէր՝  
բաց ի քահանայից ցեղէն , որովհետեւ սոքա  
ոչ հողագործութիան կանէին եւ ոչ ուրիշ ա-  
րուեստ զիտէին : Քանանացւոց երկրին մեջ  
դեռ բաւական այլազգի մնացած էր , որ 300  
տարիի ջափ Իսրայէլացւոց վրայ պատերազմի

---

(\*) Այն խորանին մեջ էր տապանակը՝ յորում կը-  
պահուէին տասն պատուիրանաց քարէ տախտակ-  
ները :

1 Քանանացւոց երկիրն երբայէն վերջը՝  
Հրէից կառավարութիւնն ինչպէս էր :

ելլելով հանգստութիւն չեին տար նոցա : Բայց Սատուծոյ օգնութեամբը եւ իրենց քաջ զօրապետներուն ձեռքովը Խորայեյացիք ամեն անգամ կ'յաղթէին նոցա : Հաշտութեան ատեն նոյն զօրապետները դատաւոր կ'լինէին, ժողովրդեան մէջ կարգադրութիւններ կանէին, եւ կպահանջէին որ Մովսեսի դրած օրենքները պահուին, իրենք ալ նոյն օրենքով կ'դատէին յանցաւորները : Վերջին դատաւորը Սամուէլ, որ շատ առաքինի եւ իմաստուն մարդ էր, դպրոցներ հաստատեց՝ որոց մէջ ուսում կառնէին Ղեւտացւոց զաւակները :



### Հրեից բազաւորները .

1. Սամուէլի երկարատեւ դատաւորութեան ատենը ժողովուրդը բազաւոր ուզեց ունենալ . իսկ Սամուէլ Բենիամինի ցեղէն Սաւուդ անունով մէկը առաջարկեց նոցա իբրեւ բազաւոր :

---

<sup>1</sup> Հրեայք երբ սկսան բազաւոր ունենալ :

1. Սառուղ քաղաւոր լինելէն յետոյ, Աստուծոյ պատուիրանքը չէր պահեր, ու Սամուէլի խորհուրդը ոտքի տակ կառնէր. անոր համար պատժուեցաւ. Աստուծմէ : Այնչափ տխուր սրտոտ եւ անհանգիստ էր ինքը՝ որ պատերազմի մէջ յաղթուելով՝ ինքզինքը ըստպաննեց :

2. Սառուղէն ետքը քաղաւոր նստաւ Գաւիթ՝ Յուդայի ցեղէն, որ Սառուղին ողջութեան ատենը՝ Սամուէլի ձեռքովը քաղաւոր օծուած էր : Գաւիթ դրացի ազգերուն հետ զհետէ յաղթելով՝ իւր տերութիւնն ընդարձակեց, նոցա երկիրները ձեռքերէն առաւ, իւր տերութեան սահմանը Միջերկրական ծովէն մինչեւ Եփրատ գետը հասուց : Տիրած քաղաքներուն մէջ ամենէն երեսելին Երուսաղեմն էր. ուստի Գաւիթ այն քաղաքը Հրեաստանի մայրաքաղաք արաւ :

3. Գաւիթ քացի յաղթութիւններէն անուանի էր նաեւ իբրեւ իմաստուն, ճարտար, ազ-

---

<sup>1</sup> Սառուղ թնչպէս քաղաւորութիւն արաւ :

<sup>2</sup> Գաւիթ թնչ կերպով քաղաւորեց :

<sup>3</sup> Ուրիշ թնչ կատարելութիւններու տէր էր Գաւիթ :

նուարարոյ եւ առաքինի թագաւոր : Իրեն զըրած սաղմոսները երբայեցիք աստուածային պաշտամանց ատեն կերգէին : Այն սաղմոսներէն ոմանց մեջ Դաւիթ Աստուծոյ մեծութիւնն ու բարութիւնը կփառարանէ , եւ ոմանց մեջ իւր մեղքերը կապաշխարէ :

1. Դաւթի որդւոյն *Սողոմոնի* թագաւորած ատենը Հրեայք շատ հանգիստ ու երջանիկ կեանք կվարէին :—Սողոմոն անուանի էր իբրեւ իմաստուն եւ հարուստ թագաւոր . իսկ գործքերուն մեջ ամենէն երեսելին է շինած *տաճարը* :

2. Կապտմեն թէ 80,000 գործաւոր բաներ է շէնքին վրայ , ու եօթը տարի քշեր է շինութիւնը . միայն 100,000 հոգի շէնքին պետք եղած բաները Տիւրուսէն Երուսաղեմ կը կրեն եղեր իսկ կան կարասիքին (անօրներէն սկսեալ մինչեւ աշտանակները) զուտ ոսկիէ ձուլած էին : Այն տաճարէն զատ Հրեայք ուրիշ տաճար չունէին : Այն տեղ պահուած էին նաեւ երկու քարի վրայ զրուած՝ Աստուծոյ տասը

---

<sup>1</sup> Սողոմոնն ինչպէս արաւ թագաւորութիւնը :

<sup>2</sup> Երուսաղեմի տաճարին վրայ ինչ գիտելիք կայ :

պատուիրանքները : Հրեայք ամեն քաղաքների  
Երուսաղեմի տաճարը կերթային ուխտի , ա-  
նով աստուածպաշտութեան մեջ աւելի հաս-  
տատուելով՝ կռապաշտութենէ հեռու կրկե-  
նային , եւ մեկմեկու հետ մօտենալով՝ հարկա-  
ւոր տեղեկութիւններ կառնէին իրարմէ :

1. Տաճարէն զատ Սողոմոն փառաւոր պա-  
լատ մի շինեց իրեն համար , եւ ուրիշ շատ  
շէնքերով զարդարեց Երուսաղեմը . քանի մի  
քաղաք ալ նորէն կանգնեց : Այն շէնքերուն  
համար պետք եղած ստակը Սողոմոն առեւտրով  
ժողովեց : Հրեաները Փիւնիկեցոց հետ մեկտեղ  
օտար ազգաց հետ առուտուր կանէին , որով  
Սողոմոն ալ հարստացաւ :

2. Մարդուս երջանկութեանը համար հա-  
րստութեան քաւական ջեղածը Սողոմոն լա-  
հասկըցած լինելով՝ աստուածպաշտութիւնը  
ձեռքէ չէր ձգեր . իսկ վերջը երբ այլազգեաց  
մօտենալով՝ մոռցաւ զԱստուած , ու իրեն  
պալատականներուն կռապաշտութիւն անելու  
հրաման տալէն վերջը՝ կռատուններ կանգ-

---

<sup>1</sup> Տաճարէն ի զատ ինչ շէնքեր շինեց Սո-  
ղոմոն :

<sup>2</sup> Սողոմոնի վերջն ինչպէս եղաւ :



նեց չաստուածներուն , այն ատեն ժողովուրդը եւս մոռացաւ զԱստուած , եւ Սողոմոնին ջուզեց հնազանդիլ :

1. Սողոմոնի մահուանեն վերջը ' Իսրայելացիք երկու բաժնուեցան . Յուդայի ու Բենիամինի ցեղը Ղեւտացւոց ցեղին հետ ' Սողոմոնի *Ռորոյամ* անուանով որդին իրենց բազաւոր ճանչցան . մնացեալ տասը ցեղը իրենց բազաւոր ընտրեցին *Յերորոյամը* : Անով Հրէից բազաւորութիւնն ալ երկու բաժանուեցաւ . մեկը Իսրայելացւոց եւ միւսը Յուդայի : Իսրայելացիք Պաղեստինու հիւսիսային կողմին տիրեցին , որոյ գլխաւոր քաղաքն էր ի սկզբան *Սիւքեմ* եւ յետոյ *Սամարիա* . իսկ Յուդայի ցեղը հարաւային կողմը տիրեց , եւ մայրաքաղաքն էր Երուսաղեմ :

2. Այն բաժանմանեն վերջը Հրէից մեջ խռովութիւնն ու երկպառակութիւնը անպակաս էր . որով հետ զհետեւ զրեթեւամեկնքն ալ կուսպաշտ եղան , բաց ի մեկ քանի բարեպաշտ

---

<sup>1</sup> Սողոմոնեն վերջը Հրէից բազաւորութիւնը ինչ վիճակ ունեցաւ :

<sup>2</sup> Ի՞նչ պատճառաւ Հրեայք Աստուծոյ երեսնէն ընկան :

մարգարեներէ, որ էին Եղիա, Եսայի, Երեմիա եւ Եզեկիէ: Սոքա Աստուծոյ հրամանաւ Հրէից ժողովուրդը կխրատէին, եւ կյորդորէին որ Աստուծոյ բարկութենէն ազատելու համար զոչումի գան. բայց ժողովուրդը ամենեւին ականջ չէր դներ նոցա խրատներուն: Ուստի եւ Աստուած սկսաւ Հրէից վրայ զանազան պատիժներ յուղարկել:

1. Ասորեստանեայց Սաղմանասար բազաւորը Սամարիան առաւ (722), ու մեջի Իսրայելացիները իրենց բազաւորովը գերի տարաւ Ասորեստան:


2. Յուդայի բազաւորութիւնը հարիւր քսան տարի քշեց, եւ վերջը Բաբելոնացոց Նաբոքոդոնոսոր Բ բազաւորը առաւ Երուսաղեմը, տաճարը քանդեց, եւ բնակիչները Բաբելոն տարաւ: Հոն 70 տարի գերութեան մեջ մնացին Երրայեցիք: Երբոր Պարսից Կիւրոս բազաւորը Բաբելոնն առաւ, հրաման տուաւ Եր-

---

<sup>1</sup> Ե՞րբ եւ որո՞ւ ձեռքով գերի տարուեցան Հրեաները:

<sup>2</sup> Յուդայի բազաւորութիւնը ո՞րքան ժամանակ երկարեց, եւ վերջը ինչ եղաւ:

րայեցւոց որ իրենց հայրենիքը դառնան : Այն ժամանակէն ի վեր Պաղեստինը նախ Պարսից ձեռքը անցաւ, յետոյ Եգիպտացւոց եւ Ասորւոց . իսկ Հռովմայեցիք այն երկրին տիրելուն պէս՝ կործանեցին Երուսաղէմը, եւ ժողովրդեան մեկ մասը կոտորելէն ետեւ, միւսը քշեցին անոնց երկրէն յամի Տեառն 70 :



### *Մարք եւ Պարսիկք.*

1. Ինդոս ու Տիգրիս գետերուն մեջտեղի Արեւաց աշխարհն կամ Իրան ասուած երկիրը կրնակէին հին ատենի Զամոլիկները, ինչպէս որ ասաջ տեսանք . սոքա յետոյ երկու մաս բաժնուելով, Հնդկաստանցիները Իրանէն դեպ ի հարաւ գնացին, եւ միւս կեսը Իրանին մեջ մնացին : Ասոնցմէ ձեւացան *Բակտրիացիք*, *Պարթևք*, *Մարք* եւ *Պարսիկք*, եւ այս վերջի երկու ազգը շատ երեւելի եղան պատմութեան մեջ :

---

<sup>1</sup> Արեւաց աշխարհին բնակիչները ոյք էին :

1. Մարաց երկիրը Ասորեստանի արեւելեան կողմն է, Կովկաս լեռանց ու Կասպից ծովուն հարաւային կողմը: Այն լեռնոտ երկիրը շատ հարուստ եւ քարերեր էր:

2. Մարաց երկրէն դեպ ի հարաւ էր Պարսկաստանը, որոյ ժողովուրդը բաժառական կեանք կվարէր, տեղ տեղ ալ փոքր ինչ երկրագործութիւն կանէր:

3. Մարք, եւ մանաւանդ Պարսիկք, ըստ մեծի մասին յաղբանդամ եւ քաջ էին: Մանկութեան ժամանակէն կջանային ծնողք որ նոցա վարքը լաւ լինի, ուստի եւ իրենք ուղիղ սրտով մարդիկ էին եւ խարերայութիւն ամենեւին չունէին: Տղաքը մինչեւ որ վեց տարեկան լինէին՝ բարեկիրք կանանց քով կվարժուէին. իսկ անկեց վերջը քուրմերուն քովը առաջ կտանէին իրենց վարժութիւնը: Քուրմերը կաշխատէին որ իրենց աշակերտները ճշմարտասէր լինին, եւ մեծերուն՝ մանաւանդ ծնողացը հնազանդ: Երիտասարդները կսով-

---

<sup>1</sup> Ո՞ր է Մարաց երկիրը:

<sup>2</sup> Պարսկաստանն ո՞ր էր:

<sup>3</sup> Մարք եւ Պարսիկք ինչ բնութեան տէր էին:

րէին ձի հեծնել, աղեղ բանեցնել եւ մենամարտութիւն :

1. Մարք եւ Պարսիկք առաջ կրակապաշտ էին . իսկ վերջը Ջրադաշտ մոզին վարդապետութիւնը ընդունեցան, որ *Ջենտալեսարա* ասուած գրքին մեջ գրած էր : Այն գրքին մեջ երկու գլխաւոր աստուած կճանչցընէր Ջրադաշտ, մեկը *Որմիզդ*, եւ միւսը *Արհմն* . Որմիզդը՝ որ Արամազդ ալ կասուի՝ բարեաց արարիչ էր, իսկ Արհմը՝ չարեաց : Այն երկու հակառակ բնութիւնները՝ իբր թէ իրարու դէմ անդադար պատերազմ ունին, բայց օր մի Որմիզդը պիտի յաղթէ կասէին Արհմին :

2. Մարք եւ Պարսիկք կուռքեր եւ մեհեաններ ջեն ունեցած . ժողովրդեան համար աղօթք անելը մոզերուն գործն էր, եւ նոքա լեռներուն վրայ գոհեր կմատուցանէին ու աղօթքներ կանէին :

3. Մոզերուն պատիւը մեծ էր, վասն զի ժողովուրդը կարծէր թէ նոքա են գիրենք չար դեւերէն պահպանողները :

---

1 Մարաց եւ Պարսից կրօնն ինչ էր :

2 Մարք եւ Պարսիկք կուռքեր ունէին :

3 Մոզերուն պատիւը սրբափ էր :

1. Թագաւորաց պատիւը մոզերէն եւս աւելի էր, վասն զի իրենց չաստուածոց փոխանորդը կհամարուէին անոնք :

2. Մարք առաջ Ասորեստանեայց հպատակ էին, յետոյ, ինչպէս որ ասինք, Արքայ կամ Վարքակէս թագաւորին ժամանակը՝ Մարաց երկիրը եւ Պարսկաստան զատ թագաւորութիւն եղաւ : Քանի մի տարի անցնելէն ետքը Մարաց Կիւքսար անունով թագաւորը Ասորեստանին ալ տիրեց :

3. Կիւքսար թագաւորին Աժդահակ որդւոյն ատենը Մարաց տերութիւնը տկարացաւ, եւ անոր Կիւքսար Բ անունով որդւոյն ատենը Մարաստանը Պարսկաստանի գաւառ եղաւ :

4. Կպատմեն թէ Աժդահակայ թոռը Կիւքսու, տղայութեան ատենը Աժդահակին հրամանաւր անտառը ձգուեր էր. եւ պատճառը Աժդահակայ լսած գուշակութիւնն էր, որ խոր թոռը

---


<sup>1</sup> Ի՞նչ պատիւ կանէին թագաւորաց :

<sup>2</sup> Մարաց թագաւորութիւնը Նրբ սկսաւ :

<sup>3</sup> Նրբ տկարացաւ Մարաց տերութիւնը :

<sup>4</sup> Աժդահակայ եւ Կիւքսուի վրայ ինչ կը պատմուի :

բազաւորութիւնը ձեռքէն պիտի յափշտակէ :  
Հովութիւն մեկը ազատեց Կիւրոսը , եւ իւր տունը  
մեծցուց : Յը մի պատահմամբ Կիւրոս Աժ-  
դահակին պաշտօր եկաւ . Աժդահակ ճանջ-  
ցաւ զինքը , եւ իսկոյն Պարսկաստան յո-  
ղարկեց : Կիւրոս իրեն խելացի , աշխոյժ ու  
իրաւասէր բնաւորութեամբը այնչափ սիրելի  
եղաւ Պարսից , որ երբ Աժդահակայ դէմ պա-  
տերազմ ուզեց բանալ , ժողովուրդը ուրա-  
խութեամբ յանձն առաւ . հետը Աժդահակայ  
դէմ երբայ , եւ Կիւրոսին վրեժը առնուլ Աժ-  
դահակէն : Կիւրոս յաղթեց Աժդահակայ , բա-  
զաւորութիւնը ձեռքէն առաւ , եւ իւր Մարա-  
ցի Կիաքսար Բ անունով քեռիին տուաւ :  
Կիաքսարի մահուանէն վերջը ինքը եղաւ բա-  
զաւոր Մարաց , Պարսից եւ ուրիշ դրացի ազ-  
գաց վրայ , որով այնուհետեւ ամենը մեկտեղ  
բազաւորութիւն Պարսից կոչուեցաւ :



*Կիւրոս, եւ Լիւդացոց Կրեւոս քաղա-  
ւորը .*

1. Մարաց երկրին տիրելէն ետքը, Կիւրոս սկսաւ դրացի ազգերը նուաճել . եւ առաջ շատ զօրքով Ասորեստանին վրայէն անցաւ . Փոքր Ասիա :

2. Այն երկրին մեջ զանազան քաղաւորութիւններ կային այն ատեն, որոց մեջ զլիսաւորներն էին *Տրովացոց* եւ *Լիւդացոց* քաղաւորութիւնները : Յոյն գաղթականները այն երկու տերութեանց ալ տիրելէն ետեւ՝ Տրովացոց քաղաւորութիւնը բոլորովին ջնջեցին (1200) : Յետոյ Աժդահակ քաղաւորին ատենը Լիւդացիք նորէն զօրանալով՝ զրեք բոլոր Փոքր Ասիոյ տիրեցին :

3. Կիւրոսի հոն եկած ժամանակը՝ Լիւդացոց քաղաւորն էր *Կրեւոս*, որ անուանի էր

---

<sup>1</sup> Կիւրոս ինչ արշաւանքներ արաւ :

<sup>2</sup> Փոքր Ասիոյ մեջ այն ժամանակները ինչ քաղաւորութիւններ կային :

<sup>3</sup> Լիւդացոց Կրեւոս քաղաւորին վրայ ինչ կալատմութի :



իւր հարստութեամբն ու ազահութեամբը : Այն հարուստ բազաւորին մայրաքաղաքը, որ Սաղա-  
ղիա կկոչուէր, օտար երկիրներէ ալ շատ զի-  
տուն մարդիկ կուգային : Օր մի Յունաց Սո-  
ղոն անունով փիլիսոփան եկաւ հոն . Կրեսոս  
իրեն պալատն ու գանձերը անոր ցուցնելէն  
յետոյ, հարցուց թէ արդեօք իրեն պէս երջա-  
նիկ մարդ տեսած ունի աշխարհիս մէջ : „Եր-  
ջանկութիւնը հաստատ բան չէ, տեսնեմք  
վերջդ ինչ պիտի լինի“, պատասխանեց փի-  
լիսոփան : Եւ Սողոնին խօսքը ելաւ :

1. Երբոր Կիւրոս Լիւդացւոց երկիրը հա-  
սաւ, Կրեսոս իրեն զօրքերովը դիմացն ելաւ,  
եւ կյուսար որ իւր բանը յաջողի . բայց Կիւ-  
րոս զարկաւ կոտորեց անոր զօրքը, տիրեց  
Լիւդացւոց երկրին, եւ Կրեսոսը գերի բռնե-  
լէն ետքը՝ հրամայեց որ կրակին վրայ այրեն  
զինքը : Այն ժամանակը Կրեսոս Սողոնին  
խօսքերը միտքը բերելով՝ կանչեց . „Ո՛վ Սո-  
ղոն, Սողոն“ : Երբ Կիւրոսի հասկըցուցին այն  
խօսքերուն նշանակութիւնը, խղճաց վրան,  
ու կեանքը պարգեւեց Կրեսոսի :

---

1 Կիւրոս ինչպէս յաղթեց Կրեսոսի :

1. Լիւղացոց երկրին տիրելէն ետքը՝ Կիւրոս Բաբելոնի վրայ քալեց, եւ երկու տարի պաշարեց քաղաքը. բայց տեսնելով որ պաշարմամբ առնելը անկարելի է, հրամայեց որ եփրատ գետին ջուրը քովի լճերուն մեջ թողուն: Երբ որ այն հնարքով գետը ցամքեցաւ, Պարսիկները մեջէն անցնելով՝ պարսպին տակէն յանկարծ մտան քաղաքը: Բաբելացիք այն միջոցին իրենց Բաղտասար թագաւորին հետ կերուխումի մեջ լինելով, ջկրցան դէմ դնել, ու յաղթուեցան: Պարսիկները թագաւորին պալատը կողոպտելէն ու շատ մարդ ջարդելէն վերջը, բոլոր Բաբելոնի տիրեցին: Կիւրոս հրաման տուաւ Հրեից—որ Նաբուքոդոնոսոր գերի տարած էր Բաբելոն —, որ դառնան երթան իրենց երկիրը. հրաման տրուաւ նաեւ իրենց՝ Նաբուքոդոնոսորին Երուսաղեմի տաճարէն կողոպտած ոսկիէ եւ արծաթէ անօթները հետերը առնուել երթալ:


2. Սաիոյ արեւմտեան կողմի բոլոր երկիրներուն տիրելէն յետոյ, Կիւրոս մեծ պատերազմ բացաւ հզօր եւ բազմաթիւ թափառա-

---

<sup>1</sup> Կիւրոս թնչպէս տիրեց Բաբելոնի:

<sup>2</sup> Կիւրոսի վերջն թնչպէս եղաւ:

կան ազգաց հետ՝ որ Սկիւթացի կասուէին ,  
եւ Կասպից ծովուն արեւելեան կողմը կրնա-  
կէին . բայց այն վերջի արշաւանքը ձախորդ  
գնաց . վասն զի իրեն զօրքը ջարդուեցաւ ,  
ինքն ալ պատերազմին մեջ (529) զարնուե-  
ցաւ մեռաւ :



*Պարսից տիրութեան մեծնալը՝ Կամբիւ-  
սի եւ Դարեհի ժամանակը . Բսերսեսի  
եւ Նորա յաջորդաց ժամանակը տիրա-  
նալը , եւ Դարեհ Նորոսին օրերովը վեր-  
ջանալը :*

1. Կիւրոսի մահուանէն ետքը Պարսիկները  
նորէն աշխարհակալութեան ելան : Կիւրոսի  
Կամբիւս անունով որդին՝ իւր զօրքերովը Ե-  
գիպտոս անցաւ , քիչ ժամանակուան մեջ բո-  
լոր երկրին տիրեց , ու Փսամենիտ կամ Փսա-  
մենէս բազաւորին հետը շատ Եգիպտացիներ  
ու գլուխը կտրել տուաւ (525 Ք. Ա.աջ) :

---

<sup>1</sup> Կիւրոսի մահուանէն ետքը ինչ պատահե-  
ցաւ Պարսկաստան :

1. Կամբիւս այնչափ անգուք եւ խստասիրտ մարդ էր՝ որ իւր Շմերդ անունով հարազատ եղբայրը, զոր Պարսից արեւելեան գաւառներուն կառավարիչ դրեր էր, անմեղ տեղը սպաննել տուաւ, միայն անոր համար որ կասկածի գնացեր էր թէ Շմերդ քաղաւորութիւնը իւր ձեռքէն առնելու միտք ունի:

2. Կամբիւս Եգիպտոսէն Երովպացոց վրայ յարձրկեցաւ, բայց ետեւէն շուտով լուր եկաւ թէ Պարսկաստանի մեջ խարերային մեկը՝ Ես Շմերդն եմ ասելով ժողովուրդը ոտք հաներ է: Կամբիւս այն լուրը առնելուն պէս՝ ուղեց շուտով ետ դառնալ, բայց ձին հեծնելու ատեն՝ իւր բրովը ինքզինքը վերադրեց ու մեռաւ:

3. Այն միջոցին Պարսիկք իրենց քաղաւոր ընտրեցին սուտանուն Շմերդը, կարծելով թէ նա է Կամբիւսին եղբայրը: Շմերդ եօթնամիս լաւ կերպով կառավարեց Պարսկաստանը. բայց երբ նախարարներն իմացան որ ի-

---

<sup>1</sup> Կամբիւսի անգրութեանը վրայ ինչ կը պատմուի:

<sup>2</sup> Կամբիւս ինչպէս մեռաւ:

<sup>3</sup> Սուտանուն Շմերդին վերջը ինչ եղաւ:

րենց թագաւորը կամքիսին եղբայրը չէ, այլ  
ապստամբ մոգ մի, իրենցմէ եօթն հոգի մը-  
տան Շմերդին պալատը, սպաննեցին խաբե-  
րայ թագաւորը, ու տեղը *Դարեն Նորոսը* դը-  
րին՝ որ կիւրոսի ազգականն էր:

1. Դարեն իւր տերութիւնը բարեկարգել, ու-  
զելով՝ 20 նախարարութիւն բաժնեց, ու իւ-  
րաքանչիւրին վրայ մեկմեկ կուսակալ կամ  
նախարար դրաւ: Այն նախարարները հար-  
կատու էին թագաւորին:

2. Պարսից տերութեան մայրաքաղաքներն  
էին *Շօշ*, *Բարեշուն*, *Եկրատան* եւ *Պերսեպո-  
լիս*: Այն ատենի թագաւորաց պալատները  
փառաւոր եւ պալատականները բազմաթիւ ու  
շատ հարուստ էին:

3. Դարեն թեպէտ խելացի թագաւոր էր,  
բայց ուզածին պէս ջկրցաւ կառավարել եր-  
կիրը. վասն զի Պարսկաստան շատ ընդար-  
ձակ էր, եւ ձեռքին տակը եղած ազգերը  
հնազանդ չէին իրեն: Նախ ապստամբեցան

---

1 Դարեն Նորոս ինչ կարգադրութիւն արաւ  
Պարսկաստանի մէջ:

2 Պարսից մայրաքաղաքները որոնք էին:

3 Ի՞նչպէս կառավարեց Դարեն իւր թագա-  
ւորութիւնը:

Բարեւաջիք. Դարեն զնաց որ հնազանդեցնէ  
զիրենք. բայց նոքա փակուեցան Բարեւոնի  
մեջ, եւ Պարսից դէմ պատերազմեցան : Տա-  
րի ու կես պաշարեց Դարեն Բարեւոնը, առա-  
քադաքը եւ բնակիչները սաստիկ պատժեց :

1. Դարեն Բարեւոնէն զնաց Մարաց դէմ,  
որ նոյնպէս ապստամբեր էին. յետոյ Սկիւ-  
թացւոց վրայ ելաւ պատերազմի, որ այն ա-  
տենը Երուսիոյ Տաճկաստանին մեջ կրնա-  
կէին, ու Թրակացւոց երկրին մէկ մասին  
տիրեց : Այն պատերազմը դեռ չաւարտած՝  
Փոքր Ասիոյ Յոյն զառքականները գլուխ վե-  
րուցին. ուստի հարկ եղաւ որ նոցա վերայ  
երթայ. բայց ապստամբեալները Երուսիոյ  
Յոյներուն օգնութեամբը կարողացան դէմ կե-  
նալ Դարենի :

2. Այն միջոցին Պարսիկ նախարարներն ալ  
սկսան ապստամբիլ իրենց թագաւորին դէմ.  
որով այնչափ նուազեցուցին Պարսից տերու-  
թիւնն որ *Դարեն Կոդրմանիս* առենը՝ Մեծն  
Աղեքսանդր Մակեդոնացւոց թագաւորը զնաց  
բոլոր Պարսկաստանի տիրեց :

---

<sup>1</sup> Բարեւոնէն հար զնաց Դարեն :

<sup>2</sup> Ե՞րբ եւ ինչպէս վերջացաւ Պարսից թա-  
գաւորութիւնը :

ԵՒՐՈՊԱՅԻ ՀԻՆ ՏԷՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ.

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՅՈՒՆԱՅ.

Առաջին դարերը.—Պարսից պատերազմէն  
առաջ Յունաց պատմութիւնը.

*Յունաստանի հին քնակիչներն ու lingua  
lyrolifը.*

Մինչեւ, ցայս վայր Ասիոյ եւ Ափրիկէի մեջ  
զտնուած ազգաց եւ թագաւորութեանց վրայ  
խօսեցանք:

1. Եւրոպայի մեջ այն ժամանակները մեկ  
երկիր միայն կար անուանի, որոյ մեջ Յոյնք  
կրնակէին, եւ կասուէր *Յունաստան* կամ  
*Երասա*:

Հին ատենը Եւրոպայի մեջ ինչ երկիր կար  
անուանի:

1. Յունաստանի երեք կողմէն Միջերկրական ծովը պատած է, ու միայն հիւսիսային կողմը ցամաք է. արեւմտեան կողմը Յունիական ծովն է, եւ արեւելեան դին Արշիպեղագոսը, որ երկրին մեջերը մտնելով՝ քանի մի թերակղզիներ ձեւացուցեր է :

2. Յունաստան՝ մեջի լեռներուն նայելով երեք մասն կրճնուած է, Հիւսիսային, Միջին եւ Հարաւային : Հիւսիսային Յունաստանը երեք կողմէն լեռներով պատած է. չորրորդ կողմէն Արշիպեղագոս ծովն է : Միջին Յունաստանը Հիւսիսային Յունաստանէն ու կորնթոսի ծոցէն մինչեւ Միջերկրական ծովը կրհասնի :

3. Այն երեք մասանց իւրաքանչիւրին մեջ եւս զանազան գաւառներ կային, որոց զբլխաւորներն էին՝ Հիւսիսային Յունաստանի մեջ *Թեսսաղիա* ու *Եպիրոս* .

Միջինին մեջ *Փոյկիա*, ուր էր նաեւ Պառնասոս լեռը եւ Դեղփիս քաղաքը՝ յԱտտիկէ,

---

<sup>1</sup> Յունաստանի սահմանները որոնք են :

<sup>2</sup> Քանի մասն կրճնուեալ Յունաստան :

<sup>3</sup> Երեք մասանց մեջ ինչ երեւելի գաւառներ ու քաղաքներ կային :



որոյ մեջ էին Արեւիք, Բեռլին, Քիւրք եւ այլ երեսելի քաղաքներ .

Հարաւային Յունաստանի գլխաւոր գաւառներն էին Աթալիոյ ծոցին երկայնութեամբը Եղիս, Յունիական ծոցին քովը : Անկեց քիչ մի վար էր Լալկոնիս գաւառը՝ հանդերձ Սպարտա քաղաքովը : Արեւելեան կողմն էր Արգոնդիս գաւառը :

1. Յունաստանի չորս քովի կղզիներն ալ Յունաց ձեռքն էին , եւ Միջերկրական ու Սեւ ծովուն եզերքները նոցա գաղթականները կրնակէին :

2. Նախնի Յունաց երկիրը շատ գեղեցիկ էր , ողբ բարեխառն , հովիտները զուարճալի եւ մանր ազրիւրներով ու վազուկ ջրերով լեցուն :

3. Այն երկրին բուն հին բնակիչը Պեղասցեանք ասուած ազգն էր : Միքա ի սկզբանանկիրք եւ վայրենի մարդիկ էին , եւ ան-

---

<sup>1</sup> Յունաստանի կղզիները որոնց ձեռքն էին :

<sup>2</sup> Յունաստանի երկիրն ինչպէս էր :

<sup>3</sup> Յունաստանի բուն հին բնակիչներն ո՞րք էին :

տառներու ու քարանձառներու մեջ կրնա-  
կէին : Իրենց կերածը խոտեղէն ու արմատե-  
ղէն էր , եւ գործը աւագակութիւն : Սոցա ար-  
հեստ սորվեցընողները Փիւնիկեցի , Լիւդացի  
եւ Եգիպտացի գաղթականներն եղան :

1. Փիւնիկէն եկաւ Կաղմոս , Բեովտիա գա-  
ւառը բնակեցաւ , եւ քաղաք մի շինեց հոն  
(1500 տ. Ք. առաջ) , որ յետոյ *Թերք* ասուե-  
ցաւ :

2. Եգիպտոսէն եկաւ Կեկրոպս ու Ատտիկէ  
գաւառը բնակեցաւ : Հարաւային Յունաստան  
եկող գաղթականներուն առաջնորդներն էին՝  
Եգիպտոսէն *Դանաւոս* , եւ Լիւդիայէն *Պե-  
դոպս* , ուստի եւ բոլոր Հարաւային Յունաս-  
տանը *Պեդոպոնէս* ասուեցաւ : Այն գաղթա-  
կանները սորվեցուցին Պեդասզեանց երկրա-  
գործութիւն , պտղաբեր ծառեր տնկել , քա-  
ղաքներ եւ նաւեր շինել եւ զիր զրել :

3. Նոյն ժամանակը ուրիշ քաջ ազգ մըն ալ  
եկաւ Յունաստան , որ իրենց Հելլենոս քաղա-

---

<sup>1</sup> Փիւնիկէն ո՞վ եկաւ Յունաստան :

<sup>2</sup> Եգիպտոսէն ո՞վ եկաւ :

<sup>3</sup> Ուրիշ ինչ երեսելի ազգ կ'իշուի Յունաս-  
տան եկած :

տորին անուանովը *Հեղե՛նք* ասուեցան : Հեղե-  
նոսը Գեակալիոնի որդւոց մեկն էր :

1. Յունաց պատմիչներուն ասածին նալե-  
լով՝ Հեղենք Յունաստան զալէն առաջ Կով-  
կաս լեռներուն քովերը կրնակին եղեր . բայց  
տեղի հաւանական է որ Հեղենք ու Պեղաս-  
գեանք մեկ ցեղէ լինին :

2. Այն երկու ազգը մեկմեկու հետ միանա-  
լով՝ ընդհանրապէս Յոյնք ասուեցան , ու չորս  
ճիւղ բաժնուեցան , որք են *Եւոդացիք*, *Դով-  
րացիք*, *Յոնիացիք* եւ *Աքայեցիք* : Գովրա-  
ցիք հիասիսային Յունաստանը տեղաւորուե-  
ցան , Եւոդացիք Սիջին Յունաստանի մեջ , եւ  
Յոնիացիք Սիջինն ու Հարաւայինը . իսկ Ա-  
քայեցիք Հարաւային Յունաստանի մեջ բնա-  
կեցան :

3. Նախնի Յունաց կրօնքը բոլորովին տար-  
բեր էր ուրիշ հին ազգաց կրօնքներէն . վասն  
զի ոչ նոցա պէս մեկ ընդհանուր աստուած  
ունէին եւ տաճար , ոչ հաւատքի զրքեր , եւ

---

<sup>1</sup> Հեղենացւոց բուն հին հայրենիքը ո՞րն էր :

<sup>2</sup> Յոյնք քանի՞ գլխաւոր ճիւղ կը բաժնուէին :

<sup>3</sup> Հին Յունաց կրօնքն ինչ էր :

ոջ մոզեր . եւ սակայն հերանոս եւ կռապաշտ  
էին , վասն զի երկինքը , երկիրս , լուսինն եւ  
ուրիշ արարածներ ' մարդու կերպարանքնե-  
րով կձեռացնէին ու Սատուծոյ տեղ դրած կը-  
պաշտէին :

1. Յունաց գլխաւոր ջաստուածն էր *Դիուս*  
կամ *Արամազդ* , որ տիրող էր երկնի եւ երկ-  
րի , եւ միանգամայն հայր համարեալ միւս  
ջաստուածներուն : Ծերունի մարդու կերպա-  
րանքով եւ երկայն մազերով կձեռացնէին  
զինքը , սովորաբար մեկ ձեռքը երկրագունտ  
բռնած ' եւ միւսը գաւազան :

2. Դիուսի կինն էր *Հերաս* , երկնի եւ երկրի  
ջաստուածուհին : Որդին էր *Ապոդոն* , արեգա-  
կան ջաստուածը : *Անանիտ* կամ *Արտեմիս*  
*Ապոդոնի* քոյրն էր , եւ լուսնի ջաստուածու-  
հին կհամարուէր :

3. *Պասիդոն* ծովային ջաստուածը ձիու վե-  
րայ կձեռացնէին սովորաբար , ձեռքը երեք-  
ժանի բռնած :

---

<sup>1</sup> Յունաց գլխաւոր ջաստուածը ո՞րն էր :

<sup>2</sup> Դիուսէն ետեւ գլխաւոր ջաստուածները  
ո՞րք էին :

<sup>3</sup> Պոսիդոնը ո՞վ էր եւ ինչպէս կձեռացնէին :

1. Ըստ կարծեաց նախնի Յունաց՝ արարածական ջաստուածներէն զատ՝ մարդկային զանազան յատկութիւններն ու առաքինութիւններն եւս ջաստուածներ ունէին . զոր օրինակ սիրոյ եւ գեղեցկութեան Աստղիկ կամ Ափրոդիտէ ջաստուածուհին, իմաստութեան Պաղլաս կամ Արեւաս, ճարտարախօսութեան Հերսէս, եւ այլն :

2. Յոյնք ջաստուածներու տեղ կղնէին նաեւ երեւելի մարդիկ, մանաւանդ դիւցազուններ, որոց մեռնելէն ետքը քուրմերը գեղեցիկ սեղաններու վրայ ծաղիկներով զարդարած կովեր կգոհէին :

3. Խիտ անտառներու եւ մութ ձորերու մեջ Յոյները իրենց գլխաւոր ջաստուածներուն գեղեցիկ կռատուններ կշինէին, ու անոնց մեջ փայտէ, քարէ, ոսկիէ եւ արծաթի արձաններ կղնէին :

4. Գիրահաւան Յոյները կարծէին թէ ջաս-

---

<sup>1</sup> Ուրիշ ինչ տեսակ ջաստուածներ ունէին Յոյնք :

<sup>2</sup> Մարդ ալ կպաշտէին ին Յոյները :

<sup>3</sup> Յունաց կռատուններն ինչպէս էին :

<sup>4</sup> Գուշակութիւններն ու պատգամախօսութիւնները ինչպէս կընէին :

տուածները կրնան մարդու հետ խօսիլ, եւ  
զաղտնի տեղեր զանազան նշաններով նոցա  
ապագան յայտնել : Այն նշաններուն մեկնու-  
քիւն տուողները քուրմերն էին . իսկ գուշա-  
կողը *պատգամախօս* կասուեր :

1. Երեւելի պատգամները *Պատնաստու* լե-  
րան ստորոտը՝ Ապողոնին նուիրուած Դեդ-  
փիսի կռատունեն կը տրուէին : Հոն նշանա-  
կեալ օրերը *Պիւրիա* ասուած պատգամախօսը  
քարանձաւի մի մեջ *Լոռտասիի* վրայ նստած՝  
քարանձաւեն ելած գարշելի հոտերէն մարելու  
պէս լինելով՝ կսկսէր բերնէն եկածը դուրս  
տալ, եւ քուրմերը՝ այն առանց կասլի խօս-  
քերը զրի առնելով՝ ժողովրդեան իբրեւ գու-  
շակութիւն կմեկնէին :


2. Մեկ ուրիշ երեւելի պատգամատուն ալ  
Եպիւռոս նահանգին մեջ կար *Դոդոնէ* քա-  
ղաքը, որոյ քուրմերը մարդուս ապագան ծա-  
ռոց տերեւներուն շրշիւնէն՝ վազած ջրերուն  
ու պղնձե ամաններուն հանած ձայներէն կը-  
գուշակէին, եւ ժողովուրդը կհաւատար նոցա :

---

<sup>1</sup> Որոնք են գլխաւոր պատգամախօսները :

<sup>2</sup> Դոդոնէի պատգամախօսը հօր էր եւ ինչ  
կերպով պատգամներ կուտար :

## ԴԻԻՅԱԶՈՒՆԻ ՅՈՒՆԱՅ.



Արգոնաւորդաց արշաւանիչը. — Տրոյիոյ  
պատերազմը.

1. Յունաց պատմիչներուն խօսքին նայելով՝  
Յոյնք անուանի եղած են նաեւ հին ժամա-  
նակները իրենց դիւցազնական գործքերովը :  
Նոցա կնիկ մարդիկը շատ պարկեշտ էին բնու-  
թեամբ եւ աշխատասէր . եւ մինչդեռ իրենց  
ամուսինները պատերազմական խաղերով կը-  
զբօսնուին , եւ կամ աւազակներու եւ զազան-  
ներու դէմ կը կռուէին , Յոյն կանայք տները  
նստած՝ ըոք մանելով ու կտաւ գործելով կան-  
ցնէին օրերը :

2. Այն դիւցազանց մեջ երեսելիներն էին  
Հերակլէս կամ Հերքիշէս եւ Յաստիս :

---

<sup>1</sup> Հին ժամանակի Յունաց բարքը ինչպէս  
էր :

<sup>2</sup> Հին դիւցազանց մեջ խիստ անուանիները  
ոյք էին :

1. Երբոր Յոյնք նաւ շինել սովբեցան, սկսան ծովով երկայն եւ հեռաւոր ճամբորդութիւններ անել: Այն ճանապարհորդութեանց մեջ ամենէն անուանին է Յունաց Սեւ ծովուն արեւելեան եզերքը երթալը:

2. Յունաց բանաստեղծներուն նայելով, — որ շատ անգամ սուտ բաներ ալ կգրեն, — Յունաց թագաւորներէն մեկուն *Փոխքսոս ու եղէ* անուններով տղաքը, իրենց չար մօրը ձեռքէն ազատելու համար, *ոսկեգեղմն*<sup>1</sup> այսինքն ոսկիէ բուրդ ունեցող ոչխարի մի վրայ հեծած՝ օդուն մեջէն բռնելով գնացին դեպ ի արեւելեան կողմերը: Սեւ ծովու նեղուցէն փախած ատենները՝ Ելլէն ջրին մեջ ընկաւ խեղդուեցաւ, որով նեղուցն ալ *Եղեապոսնոս* կոչուեցաւ. իսկ Փոխքսոս անվտանգ հասաւ Սեւ ծովուն արեւելեան եզերքը, ու *Կողքիւ* ասուած տեղը իջնելէն ետեւ՝ ոսկեգեղմն խոյր գոհ բերաւ չաստուածոց, եւ նորա ոսկեթել բուրդը անտառին մեջ պահեց: Կողքիսի թագաւորը գտաւ այն ոսկեգեղմը ու գողցաւ: Այս լսելով Յու-

---

<sup>1</sup> Յոյնք ինչպէս սկսան նաւագնացութիւն անել:

<sup>2</sup> Ոսկեգեղմին պատմութիւնը ինչ է:



նաց Յասովն դիւցազնը, ընկերներ ժողովեց որ  
երբայ ոսկեգեղմը ետ առնէ:

1. Յասովնի հետ եղած գլխաւոր դիւցա-  
զունքն էին (1250) Հերքիւշէս եւ Թեւեռու: Սո-  
քա ամենքը մեկտեղ մեծ նաւ մի բռնեցին՝ ու  
անով ճանապարհ ելան: Ծովուն վրայ զանա-  
զան հրեշներու դեմ պատերազմելէն եւ շատ  
նեղութիւններ կրելէն վերջը Կողքիս հասան,  
ոսկի գեղմը ետ առին, եւ դարձան եկան  
Յունաստան:

2. Այն դիւցազունքը Կողքիս տանող ու ետ  
բերող նաւին անունն էր Արգոս, ուստի եւ  
ճանապարհորդութիւնն ալ Արգոնաւորդաց  
արշաւանք ասուեցաւ:

3. Արգոնաւորդաց ճամբորդութենէն ետքը  
Յոյնք այնպէս սեր ձգեցին նաւագնացութեան  
որ 50 տարի վերջը մեծ նաւատորմիդ ունե-  
ցան, որով կրցան Արշիպեղազոս ծովէն Ասիա

---

<sup>1</sup> Յասովն ու իր ընկերները խնչպէս արին  
իրենց արշաւանքը:

<sup>2</sup> Յասովնի նաւին անունն խնչ էր:

<sup>3</sup> Արգոնաւորդաց արշաւանքովը խնչ յա-  
ռաջադիմութիւն արին Յոյնք:

անցնիլ ու Տրոյիոյ բնակիչներուն դեմ պատերազմիլ (1200) :

1. Այն կռուոյն պատճառն եղաւ Տրոյիոյ թագաւորին *Պարիս* անուանով որդին : Սա Յունաստանի մեջ ճամբորդութիւն արած ատենը՝ Սպարտայի *Մենէղաւոս* թագաւորին *Հելիէնէ* անուանով կնիկը առեր փախեր էր : Յոյնք ասոր վրայ սաստիկ բարկացած, 1200 նաւով, 100,000 զօրքով եւ իրենց թագաւորներովը, որոց գլուխն էր *Ագամեմնոն*, պատերազմի ելան Տրոյիոյ վրայ :

2. Մեծամեծ քաջութիւններ արին Յունաց թագաւորները, մանաւանդ քաջն *Մենէղաւոս*, խորագետն *Ողիսեւս*, քաջասիրտն *Աքիլլէս*, որ Յունաց դիւցազանց ամենէն քաջն էր, եւ ուրիշ շատ յոյն դիւցազունք :

3. Տրոյիա քաղաքին չորս քովը ամուր պարիսպ քաշած էր, եւ մեջը բաւական զօրք

---

<sup>1</sup> Տրոյիոյ պատերազմին պատճառն թնջ էր :

<sup>2</sup> Յունաց քաջերուն մեջ անուանիները ո՞յք էին :

<sup>3</sup> Տրոյիան թնջ վիճակի մեջ էր, եւ ո՞վ էր անոր պաշտպանողը :


կար : Տրովացւոց գորավարն էր Պրիամոսի  
եկտոր որդին : Տասը տարի դիմացան Տրովա-  
ցիք գորքերուն դեմ , բայց վերջը Յոյնք խա-  
րեութեամբ առին քաղաքը :

1. Ողիսեսի խորհրդով Յոյները մեծ ձի մի  
շինեցին փայտե . մեջը հարիւրաւոր զինուոր-  
ներ լեցուեցան , ձին անխնէրու վրայ դնելէն  
ետեւ՝ Տրոյիոյ դրան առջեւը բերին , եւ այն-  
պէս ձեւացուցին որ իբր թէ Տրովացւոց հետ  
հաշտուիլ կուզեն . եւ ի նշան սիրոյ խնդրեցին  
որ այն ձին ընդունին իբրեւ պարգեւ . յե-  
տոյ իրենց նաւերը քաշուեցան : Տրովացիք  
միամտաբար ձին քաղաք առին : Չիուն մեջ  
պահուրտած Յոյները զիշերով դուրս ելան ,  
քաղաքին դուռը բացին , դրսի Յունաց հետ  
միանալով՝ յարձրկեցան Տրովացւոց վրայ , եւ  
շատ մարդ ջարդելէն ետեւ՝ քաղաքը բո-  
լորովին ջնջեցին , ու հարուստ աւարով իրենց  
հայրենիքը դարձան :

---

<sup>1</sup> Ի՞նչ հնարքով առին Յոյնք Տրոյիան :

ՅՈՒՆԱՅ ՀԱՍԱՐՍԿԱՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ.



1. Տրոյիոյ պատերազմէն առաջ Յունաստանի գաւառները կառավարողները բազաւորներ էին, եւ ժողովուրդը զանոնք չաստուածոց յաջորդները կարծէր : Այն բազաւորներէն շատը Տրոյիոյ պատերազմին մէջ մեռան . ոմանք պատերազմէն ետ դարձած ատենները ծովն ընկղմեցան . եւ ոմանք քեւ կրցան տեղերնին դառնալ՝ բայց մեծ անկարգութեանց մէջ գտան իրենց հայրենիքը . վասն զի իրենց պանդխտութեան ատենը՝ ուրիշ բազաւորներ եկեր բռներ էին այն տեղերը :

2. Այն անկարգութեանց պատճառաւ Յունաց գաւառները մեկմեկու դեմ պատերազմ բացին , եւ բնակիչները տեղէ տեղ փոխադրուեցան : Լեոնարնակ Գովբացիք Հերակլեանց առաջնորդութեամբը՝ Թեսաղիայէն ե-

---

<sup>1</sup> Տրոյիոյ պատերազմէն ետքը ինչ վիճակի մէջ էր Յունաստան :

<sup>2</sup> Յունաստանի հին բնակիչները ինչ կերպով տեղէ տեղ փոխադրուեցան :

յան ու հարաւային Պեղոպոնեսի Լակոնիա  
գաւառին տիրեցին . իսկ Պեղոպոնեսի բուն  
բնակիչները , այսինքն Աքսայեցիք եւ Յոնիա-  
ցիք , ասղիս անդին ցրուեցան . որը Արշիպե-  
ղագոսի կղզիները գնացին , որը Փոքր Ասիա ,  
որը հարաւային Իտալիա , եւ որը հիւսիսային  
Ափրիկէ : Այն գաղթականները իրենց գնացած  
տեղերը քաղաքներ հիմնեցին , եւ նոցա մեջ  
բնակեցան :

1. Այն ժամանակները Յունաստանի գա-  
ւառներէն քաղաւորական իշխանութիւնը վեր-  
ցաւ , ու ամեն քաղաք իրեն համար զատ հա-  
սարակապետութիւն ունեցաւ .<sup>1</sup> մասնաւոր օ-  
րէնքներով ու կարգադրութիւններով :

2. Յունաց հասարակապետութիւններուն կա-  
ռավարիչները տեղ տեղ ազնուականք էին ,  
տեղ տեղ հարուստք , եւ տեղ տեղ ժողովուր-  
դը : Բայց վախնալով որ այնպիսի մանր քա-  
ժանմունքով մեջերը անհամաձայնութիւն կամ

---

<sup>1</sup> Յունաստանի կառավարութիւնն ինչպէս  
էր :

<sup>2</sup> Յունաց հասարակապետութիւնները ինչ-  
պէս կկառավարուէին :

կո.իւ. չբացուի, քաղաքները մեկմեկու հետ դաշնակցութիւն արին այն պայմանաւ՝ որ ամենեւնի պատուաւոր քաղաքներէն մեկը զլուսի ճանչցուի: Ի նշան այն դաշնադրութեան ընդհանուր ժողով մը հաստատեցին Գեղիխա քաղաքը, եւ անունը դրին *Ամփիկոտիսեան ժողով*.—զանազան ազգային խաղեր յօրինեցին, եւ մեկ կրօնք հաստատեցին բոլոր Յունաց ազգին համար:

1. Յունաց խաղերուն մեջ ամենեւնի անուանին էր *Ողիմպիական* խաղը, որ *Եղիս* գաւառին մեջը կլինէր: Այն տեղ կժողովուէին բոլոր Յունաստանի ժողովուրդը, որը իւր ոյժն ու ճարտարութիւնը ցուցնելու, եւ որն ալ միայն տեսնելու համար: Այն խաղերուն մեջ Յունաց երիտասարդները ընդարձակ դաշտի մեջ ձիւրնքաց եւ կառարշաւ կանէին, այսինքն երկու ձի լծած երկանիս կառքերու մեջ ոտքի վրայ կայնած՝ մեկզմեկ անցնելու կաշխատէին, կամ քարեր կնետէին, եւ կամ գօտեկո.իւ կանէին: Ո՛վ որ նշանակուած տեղը առաջ կհասնէր, կամ քարը անելի հեռու կձգէր, եւ կամ մենա-

---

† Յունաց խաղերուն մեջ ո՞րն էր ամենեւնի անուանին:

մարտութեան մեջ կյաղթեր, իբրև պարգև. ձի-  
թենիէ պսակ կղնէին գլուխները, եւ քաղաք  
մտած ատենները բոլոր քաղաքակիցքը եր-  
գելով ընդառաջ կելլէին, եւ փառաւորապէս  
կընդունէին զանոնք: Այն խաղերուն մեջ կը  
գտնուէին նաեւ ուսումնականք, եւ իրենց շա-  
րաղբութիւնները հրապարակաւ կկարդային.  
պատկերահանները իրենց նկարած պատկեր-  
ները ժողովրդեան դիմացը կղնէին, եւ ար-  
հեստաւորները իրենց աշխատութիւնները: Ե-  
րողոտոս պատմաբանը իւր շարաղբած Յունաց  
պատմութիւնը՝ այն խաղերուն մեջ կարդացեր  
էր, եւ շատ գովեստներ լսեր էր ամենէն:

1. Ողիմպիական խաղերը շատ օգտակար  
էին Յունաց, վասն զի այն առթով մեկտեղ  
կուգային, մեկմեկէ բան կսովրէին եւ իրարու  
կմօտենային:

2. Յունաց հասարակապետութեանց մեջ ա-  
մենէն երեսելի եղան *Սպարտա* եւ *Աթենք* քա-  
ղաքները:

---

<sup>1</sup> Ի՞նչ օգուտ ունէին ողիմպիական խաղերը:

<sup>2</sup> Յունաց հասարակապետութեանց մեջ զր-  
խաւորները որո՞նք էին:

*Սպարսացիք. — Լիկուրգոս.*

1. Գովրացւոց Սպարտայի տիրելէն ի վեր այն քաղաքը երկու բազաւորք կկառավարէին. բայց նոցա մեկմեկու հակառակ լինելուն՝ ժողովուրդը չէր գիտեր թէ որո՞ւ հրամանը կատարէ: Գովրացիք իբրեւ տիրող ազգ, Աքայեցւոց շատ նեղութիւն կուտային. ուստի բոլոր ժողովուրդը սաստիկ խռովութեան եւ տերութիւնը անկարգութեան մեջ էր: Այն վիճակը շատ վնասակար էր Սպարտայի: Լիկուրգոս անունով մեկը՝ բազաւորի որդի, իւր ազգը այն խեղճութենէն ազատեց:

2. Շատ տարի օտար երկիրներ քայելով՝ մանաւանդ Եգիպտոս ու Փռքը Ասիա, քննեց տեսաւ այն տեղերուն բարեկարգութիւնն ու օրէնքները, ու հայրենիքը դառնալէն վերջը իւր քաղաքակիցներուն համար նոր ու խիստ օրէնքներ գրեց, որով առաջուան անկարգութիւնները վերցուեցան:

---

<sup>1</sup> Սպարտայի կառավարութիւնն ինչպէս էր:

<sup>2</sup> Լիկուրգոս ինչպէս կրցաւ օրէնքներ դնել Սպարտացւոց:



1. Լիկուրգոսի օրենքովը բոլոր Սպարտայի կայուածները Գովրացոց տրուեցան : Աքայեցոց մէկ մասը ազատեցաւ եւ մանր կայուածոց տէր եղաւ, բայց այս պայմանաւ որ հարկատու լինին Գովրացոց : Մնացեալ Աքայեցիք գերի եղան Սպարտացոց, եւ անոնց երկիրներուն մէջ բնակելով՝ իրենց տերերուն ծառայութիւն կանեին :

2. Տերութիւնը կառավարելու համար՝ առաջուան պէս երկու թագաւոր դրաւ Լիկուրգոս . բայց նոցա վրայ միշտ աչք ունենալու համար՝ ձերակոյտ մի սահմանեց, եւ որոշեց որ պետք եղած ատենը ժողովրդեան խորհուրդ հարցանեն : Այս կերպով Սպարտայի կառավարութիւնը միապետական, ազնուապետական եւ հասարակապետական եղաւ միանգամայն :

3. Ժողովուրդը քաջ եւ ուժով անելու համար Լիկուրգոս ջարքաշութեան սովրեցուց

---

<sup>1</sup> Ժողովրդեան մէջ ինչ բաժանմունք արաւ Լիկուրգոս :

<sup>2</sup> Բանի թագաւոր ունեին Սպարտացիք :

<sup>3</sup> Ժողովուրդը կրթելու համար ինչ օրենքներ դրաւ Լիկուրգոս :

Սպարտացիները, այսինքն հրամայեց որ հասարակ հագուստներ հագնին, հողի վրայ պառկին, կերակուրները սննդարար եւ միանգամայն հասարակ լինին. այն կերակուրները ամենը մեկտեղ հրապարակի մեջ պիտի ուտեին: Կերակուրներուն մեջ սովորականն էր խոզի արփանով եփած սեւ ապուրը:

1. Հարստութիւնները հասասար բաժնեց ժողովրդեան մեջ. եւ որպէս զի հարուստ եւ աղքատ չլինի մեջերնին, ոսկիէ ու արծաթէ ստակները վերուց, անոնց տեղը երկաթէ ըստակ կտրեց:

2. Տղայոց կրթութեան համար դրած օրէնքները առասել եւս խիստ էին: Լիկուրգոս կասեր թէ տղաք ծնողացը չեն, այլ տերութեանն են. ուստի տղայ մի աշխարհք եկածին պէս անոր կազմուածքը կնայեին, եթէ բոլորովին առողջ չլինէր, խակոյն ջուրը կըձգէին. վասն զի մտքերը դրած էին թէ վատառողջ տղան մեծնալէն ետեւ չկրնար իւր հայրենիքը

---

<sup>1</sup> Հարստութեան կողմանէ ինչ կարգադրութիւն արաւ:

<sup>2</sup> Տղայոց կրթութեանը համար ինչ օրէնք սահմանեց:

քշնամեաց դեմ պաշտպանել: Առողջ տղան մինչեւ եօթը տարեկան հասնելուն տունը ծնողաց քով կկենար. այնուհետեւ ծնողաց հոգը վրայէն կվերնար, եւ տղան հասարակաց վարժատունը կը դրուէր, ուր խիստ կանոններու տակ կմնար եւ ջարքաշ կմեծնար: Այն վարժատանց մէջ տղայոց կսովբեցնէին ցատքել, վազել, բարձր տեղեր ելլել, եւ համբերութեան վարժիլ: Գողութեան համար այն ատեն միայն կպատժուէին տղայք, երբոր գողութիւնը վարպետ կերպով ջէին աներ: Խեղճ զերիներուն զինի կըխմցընէին, եւ այնպէս տղոց առջեւ կհանէին, որպէս զի տղաքը զինի եւ արբեցութենէ զգուեցընեն:

1. Տղայք եւ երիտասարդք պարտական էին ծերերուն հնազանդ լինել եւ պատիւ տալ. իրենց խօսակցութիւնը կարճ պիտի լինէր. անկեց է որ մինչեւ ցայժմ կարճ խօսակցութիւնը *Հապտակասն ուն* կասուի. եւ ասելիքները աղէկ մտածելէն վերջը պիտի հանէին բերաններէն:

2. Ուսումը հարկաւոր չէր համարեր Լի-

---

<sup>1</sup> Տղայոց վարմունքն ու խօսակցութիւնը թնջպէս պիտի լինէր:

<sup>2</sup> Սպարտացիք ուսում ունէին:

կուրգոս , եւ կարծեր թէ մարդուս աւելի պետք է ոյժ եւ քաջութիւն՝ քան թէ ուսում : Անոր համար էր որ Սպարտացիք կտրիճ եւ պատերազմասեր ազգ եղան , բայց ուսումնական կրթութիւն ամենեւին չունեին :

1. Սպարտացիք իրենց քաջութիւնը դրացի ազգաց հետ ունեցած պատերազմներուն մեջ ցուցուցին . այն դրացիներն էին Մեսսենիացիք , Արգիացիք եւ ուրիշ ժողովուրդներ :



### *Աթենացիք. — Սողոն.*

2. Աթենացիք թեպէտեւ Սպարտացւոց պէս կջանային իրենց մարմինը զանազան կրթութիւններով ամբցնել , բայց միանգամայն մշտքերն ալ կրթէին . որով միւս Յոյներէն շատ աւելի անուանի եղան՝ թէ խելքով եւ թէ ճարտարութեամբ :

---

<sup>1</sup> Սպարտացիք ինչ պատերազմներու մեջ ցուցուցին իրենց քաջութիւնը :

<sup>2</sup> Աթենացիք ինչո՞վ վեր էին Սպարտացիներէն :

1. Աթենացւոց այնչափ լուսաւորութեան, աշխատասիրութեան եւ անուններուն փառաւորութեան պատճառը Սոդոն իմաստասիրին օրենքներն եղան: Սկիզբները Աթենացիք թագաւոր ունէին. բայց երբոր *Կոդրոս* անունով թագաւորը (1068) Գովրացւոց պատերազմին մեջ մեռաւ, թագաւորական իշխանութիւնը վերուցին, ու տեղը *Արխոններ*, այսինքն իշխաններ դրին: Արխոնները հարուստներուն կարգէն կընտրուէին: Ի սկզբան մեկ հատ արխոն միայն կար, բայց յետոյ նոցա թիւը աւելցաւ եւ մինչեւ իննի հասաւ:

2. Արխոնները ինքնիշխանաբար կկառավարէին ժողովուրդը, եւ շատ նեղութիւն կուտային անոր: Ի սոցանէ մեկը *Դրակոն* անունով՝ խիստ եւ անիրաւ օրենքներ գրեց, որով ամէն յանցանք՝ թէ մեծ եւ թէ փոքր, մահով կպատժուէր: Այն օրինաց սաստկութեանը չղիմանալով՝ հասարակ ժողովուրդը ոտք ելաւ իշխանաց դէմ, եւ քաղաքական պատերազմ բացաւ՝ որ 30 տարի քշեց. վեր-

---

<sup>1</sup> Աթենացւոց օրենսդիրն ո՞վ եղաւ:

<sup>2</sup> Արխոններուն կառավարութիւնն ինչպէս էր:

ջապէս Սողոմն նոր օրէնքներ հրատարակելով  
հազիւ կրցաւ ժողովուրդը խաղաղացնել ու  
տեղութիւնը կարգի դնել :

1. Եսիս եւ առաջ Սողոմն աղքատաց վիճակը  
բերեցրնելու ետեւէ եղաւ , որ այն ատենը  
հարուստներուն պարտատէր մնալով՝ ձեռքե-  
րէն շատ նեղութիւն կկրէին : Յետոյ բոլոր  
ժողովուրդը ըստ աստիճանի հարստութեան՝  
չորս կարգ բաժնեց : Վերջին կարգին մէջ էին  
տնանկ աղքատները . սորա ամէն տուրքի  
ազատեց Սողոմն , եւ միւս երեք կարգի ժողո-  
վրդեան վրայ ձգեց տուրքերը : Բայց աղքատ-  
ները տուրքերէ ազատ մնացածներուն համար՝  
պաշտօնի չէին կրնար հասնիլ :

2. Տերութեան կառավարութիւնը ժողովրդ-  
դեան դատարանին յանձնեց Սողոմն , եւ անոր  
մէջ քսան տարեկանէ վեր եղող ամէն քաղա-  
քացի իրաւունք ունէր մտնելու : Ժողովրդեան  
կտրած դատաստանը քննելու համար 400  
հոգիէ ծերակոյտ մի հաստատեց , եւ անկեց

---

<sup>1</sup> Սողոմն ինչ կարգեր որոշեց ժողովրդեան  
մէջ :

<sup>2</sup> Տերութեան կառավարութիւնն ու դատաս-  
տանները որո՞ւ ձեռքն էին :

վեր դրաւ. *Արիստրագոսի* ատենանք՝ որոյ ար-  
դարութեան եւ իմաստութեան համբաւը բոլոր  
աշխարհք տարածուեցաւ :

1. Տղոց համար օրէնք դրաւ. Սողոմն որ մին-  
ջեւ 16 տարեկան հասնին՝ ծնողաց քով դաս-  
տիարակութիւն, յետոյ քաղաքի դպրոցները  
դրուին : Այն դպրոցներուն մէջ տղոց սովորա-  
մներն էին մարզք, այսինքն մարմնոյ կրքու-  
րիւն, երաժշտութիւն եւ զանազան գիտու-  
թիւնք : Իրենց հռչակաւոր *Հովնիստ* քերթողա-  
հօրը *Եղիակասն* եւ *Ողիասկասն* կոչուած բա-  
նաստեղծութիւնները կարդալով՝ ազգասիրա-  
կան ոգւով կլեցուէին : Այն կարգադրութիւն-  
ներով Արեւնացւոց մէջ խաղաղութիւն անելէն  
ետեւ՝ Սողոմն նորէն օտար աշխարհներ քա-  
լելու ելաւ :


2. Անկարգութիւնն ու խռովութիւնը նորէն  
տիրեցին Արեւնքի մէջ Սողոմնի բացակայու-  
թեան ատենը, բայց բազաւորազն եւ հարուստ  
*Պիսիստրատ* անունով Սողոմնին ազգականը վե-

---

<sup>1</sup> Տղայոց կրքութիւնն ինչպէս էր Արեւնա-  
ցւոց մէջ :

<sup>2</sup> Սողոմնին ճարտորդութեան ատենը Արեւնք  
ինչ վիճակի մէջ էր :

րուց այն խռովութիւնը, ու ինքը թագաւոր  
եղաւ: Պիսիստրատ խելքով եւ արդարութեամբ  
կառավարելով Աթենքը՝ սիրելի եղաւ ժողո-  
վրդեան. բայց իրմէն ետքը իւր *Իպպարքոս*  
եւ *Իպպիաա* որդիքը սկսան նեղել Աթենացի-  
ները, որով ասելի եղան նոցա, եւ քաղա-  
քական պատերազմի մի մեջ՝ Իպպարքոսը  
սպաննուեցաւ. իսկ Իպպիաս փախաւ Պարս-  
կաստան, եւ սկսաւ Պարսից Դարեհ թագա-  
ւորը ընդդէմ Յունաց զրգռել:



ՄԱՐՍԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԷՆ ՄԻՆՁԵԻ ՄԱԿԵՂՈ-  
ՆԱՅԻՈՑ ԱՏԵՆԸ.

*Մարական պատերազմը.*

1. Կիւրոս թագաւորին ատենէն Պարսիկնե-  
րը Փոքր Ասիոյ Յունաց քաղաքներուն տիրե-  
րու իւրաքանչիւրին մեջ յոյն կուսակալներ

---

<sup>1</sup> Մարական պատերազմին պատճառն ինչ  
էր:



դրեր էին : Դարեհի թագաւորութեան ատենը Միլետոսի Աքիատագորաւ անուանով կուսակալը միտքը դրաւ որ Ասիոյ Յունաց քաղաքները Պարսից ձեռքէն ազատե. ուստի զօրք ժողովեց, եւ համոզեց Արենացիքն որ եւրեա կղզիին երեսորիա քաղաքէն նաւատորմիդ յուղարկեն իրեն օգնութեան : Պարսիկները դեռ կռուի պատրաստութիւն չտեսած՝ Յոյները յանկարծ Մարդիս քաղաքին վրայ վազեցին, առին քաղաքը, եւ քաղաքապետը բռնեցին : Պարսիկները Մարդիսի առնուիլը լսածներուն պէս՝ Միլետոսի վրայ հասան, կործանեցին զայն եւ մեջի ապստամբեալները հանդարտեցուցին . իսկ հոն գտնուող եւրոպացի Յոյները փախան գնացին Յունաստան : Այն ատենը Իպպիաս յորդորեց Դարեհն որ եւրոպացի Յոյները պատժե՝ ապստամբողներուն օգնութիւն տուածներուն համար : Դարեհ Իպպիասին խորհրդովը Յունաց դէմ պատերազմ բացաւ՝ որ յիսուն տարի քշեց :

1. Առաջի պատերազմին (496) Պարսից Մարդնիսու զօրավարը ամենեւին յաջողութիւն

---

1. Առաջիև Մարական պատերազմը ինչպէս եղաւ :

ջունեցաւ. իբնն նետեալ գօրքը Թեաղիոյ մէջ շարդուեցաւ, իսկ նաւատորմիդը բուրդովին ոչնչացաւ.:

1. Երկրորդ պատերազմին Դարե՛ն 100,000 գօրք եւ 600 նաւ ոչկեց Յունաստան, եւ անոնց գօրապետ դրաւ Դառն ու Արաւախենէկաք: Սուրա ճամբու վրայ եղած Յունաց կրդգիները նուաճեցին, բնակիչները կողոպտեցին, եւ Երեսոքիս քաղաքը կործանելէն ետքը՝ Պարսից գօրքը եկան Արենքի քով Մարաթոն ասուած հովիտը ելան նաւերէն: Արենացիք նեղը մտած՝ Սպարտացացոց դիմեցին. բայց անոնք չուզեցին օգնել: Արենացիք մինակ մնացած՝ շատ դժուարութեամբ 10,000-ի չափ գօրք ժողովեցին, զերիներն ալ մեկտեղ, ու Միլտիադէսը գօրավար դրին անոնց վրայ: Պարսիկք եւ Յոյնք Մարաթոնի դաշտը դիմացե դիմաց ելան: Միլտիադէս երկու կողմէն Պարսից վրայ յարձրկեցաւ, ու զարկաւ կոտրեց զանոնք. մնացեալները նաւերը նրստան ու փախան Ասիա:

2. Այն յաղրութենէն ետքը Միլտիադէս ա-

---

<sup>1</sup> Երկրորդ Մարական պատերազմը ինչպէս եղաւ.:

<sup>2</sup> Արենացիք ինչպէս վարուեցան Միլտիադէսի նկատ.:

ուաշարկեց Արեւացւոց՝ որ բող տան իրեն  
Յունաց կղզիները Պարսից ձեռքն ազատելու :  
Արեւացիք տուին հրամանը . բայց որովհետեւ  
Պարսե կղզին չկրցաւ Պարսից ձեռքն ետ առ-  
նել , ապերախտ Արեւացիք բանտ դրին Միլ-  
տիադեսը , ուր եւ քիչ ատեննէն մեռաւ : Միլ-  
տիադեսի տեղը Արեւացիք խելացի եւ փա-  
ռաստեր Թեմիստոկոսը դրին , որ Արեւացւոց  
նաւերը շատցուց :

1. Այն ձախորդութիւններն վերջը Գարեհ  
նորէն գօրք ժողովեց Յունաց դէմ . բայց պատ-  
րաստութիւն տեսած ժամանակը ընկաւ մե-  
ռաւ : Նորա որդին Բսերքսէս՝ իւր գօրաց բազ-  
մութեանը ապաւինելով՝ ելեապոնտոսի վրայ  
նաւակամորջ մի շինել տուաւ , եւ անոր  
վրայէն մեկ միլիոնի չափ գօրք անցուց եւ-  
րոպա . իսկ ծովէն 1200 մեծ նաւ դրկեց եւ  
3000 բեռնակիր նաւեր , որոց մեջ դրուած էր  
գօրքերուն պաշարը :

2. Այն սարսափելի բազմութիւնը տեսնելով՝

---

<sup>1</sup> Գարեհ կրցաւ վերջացրնել Մարական պա-  
տերազմը :

<sup>2</sup> Բսերքսէսի դէմ ինչ պատրաստութիւն տե-  
սան Յոյնք :

զրեք բոլոր Յոյները վախերէն հնազանդեցան Քսերքսեսի՝ բաց ի Սպարտացիներէն, Աթենացիներէն եւ քանի մի ուրիշ քաղաքներէ, որ սկսան պատերազմի պատրաստութիւն տեսնել: Բոլոր Յունաց հետեւակ զօրքը՝ վեց հազար, եւ անոնց զօրավարը *Լեոնիդաս* բազաւորն էր. իսկ նաւատորմիդը բոլորովին Թերմոստոկղեսի յանձնուեցաւ:

1. Հիւսիսային Յունաստանը Միջին Յունաստանէն բարձր լեռներով կրածնուի. այն լեռներուն ծայրը մինչեւ ի ծով ջհասած՝ ծովուն ու լեռան մէջ նեղ կիրճ մի կայ՝ որ *Թերմոսիլէ* կկոչուի: Յոյնք տեսնելով որ այն տեղը միայն կրնան Պարսից անհամար զօրքին դէմ կենալ, Լեոնիդասը ղրկեցին հոն 3000 քաջ Սպարտացիներով, եւ նոցա ետեւը Յունաց մնացեալ զօրքը տեղաւորուեցաւ. կրճին մօտ շարուեցաւ նաեւ բոլոր Յունաց նաւատորմիդը:

2. Քսերքսես իմանալով որ Յոյները Թեր-

---

<sup>1</sup> Թերմոսիլէն ինչ տեղ է, եւ ինչով անուանի եղաւ:

<sup>2</sup> Թերմոսիլէի կիրճը ինչպէս պատերազմեցան Սպարտացիք:

մոպիլէն փակեր են, եւ չեն ուզեր իրեն ճանապարհ տալ, հրամայեց որ իսկոյն անձնատուր լինին, եւ ունեցած զենքերը իրեն տան: „Եկ ինքդ առ.“ պատասխանեցին Յոյները. իսկ երբոր Պարսիկները Քսերքսեսին հրամանաւր ուզեցին բռնութեամբ կրճէն անցնիլ, քաջ Սպարտացիք մէկ ձեռքերը վահան եւ միւսը երկայն նիզակներ բռնած՝ այնպիսի սաստիկ հարուածներ տուին Պարսից՝ որ երկու օրուան մէջ (480) հազարաւոր մարդիկ մեռուցին:

1. Գծբաղդարար Յունաց մեջէն մատնիջ մի կլաւ որ Պարսիկները լեռներուն մեջէն գաղտնի եւ նեղ ճամբաներով ներս մտցուց: Այն ատեն Լեոնիդաս ետ դարձուց Յունաց զօրքը, եւ միայն իւր Սպարտացիներովը մնալով՝ պատերազմեցաւ Պարսից դէմ: Նախ ինքը Լեոնիդաս վիրաւորուեցաւ ընկաւ. իրմէ ետքը բոլոր զինուորներն ալ նոյնպէս սպանուեցան մեռան. իսկ Պարսիկները իրենց կողմէն խիստ շատ մարդ կորուսին:

Նոյն միջոցին Յունաց նաւատորմիդը Ար-

---

1 Թերմոպիլէի պատերազմը ինչպէս վերջացաւ:

տեմխախտի նեղուցին մեջ յաղթուելով՝ Արենքի մօտ Սաղամիևա կղզին քաշուեցաւ :

1. Թերմոպիլի պատերազմէն ետքը Պարսիկք մտան Յունաստան, եւ բրով ու կրակով բոլոր Ատտիկէն անապատ դարձուցին . իսկ Արենք քաղաքը բոլորովին այրեցին, եւ Արենքի ծովուն երեսը անհամար նաւերով ծածկեցին : Յունաց նաւերը միայն 380 հատ էին, իսկ Պարսիցք 1200 հատ մեծամեծ նաւեր . եւ Յունաց նաւերը նաւահանգստին մեջ զանուելով, Պարսիկները կրնային փակել զանոնք եւ բոլոր զօրքերը կոտորել : Այն դժուարութենէն ազատելու համար Թեմիստոկղէս հրաման արար իւր նաւերուն որ Սաղամիևայի եւ Արենքի մեջտեղի նեղուցը մտնեն ու մեծ պատերազմի պատրաստուին :

2. Այն կարգադրութենէն ետեւ՝ ծածուկ իմացուց Բսերքսեսին կեղծ բարեկամութեամբ՝ իրր բէ Յոյնք փախչիլ կուզեն Սաղամիևայէն, եւ ինքը խորհուրդ կուտայ որ անոնց վրայ ան-

---

<sup>1</sup> Պարսիկները ինչ աւերմունքներ արին Յունաստանի մեջ :

<sup>2</sup> Թեմիստոկղէս ինչ հնարքով ազատեց Յունաստանը Պարսից ձեռքէն :

յապառ յարձրկի: Քսերքսես հաստաց խօսքին, եւ նրամայեց իրեն նաւերուն՝ որ Յունաց նաւերուն կեցած նեղուցը մտնեն եւ պատերազմի սկսին: Բայց երբոր Պարսից անագին նաւերը Սաղամինայի նեղ ծոցը մտան, տեսան որ զրեք անկարելի է շարժելը. իսկ Յունաց փոքրիկ նաւերը դիւրաւ շարժելով՝ զրեք բոլոր Պարսից նաւերը կոտորտեցին: Նոյն միջոցին Պարսից հետեւակ զօրաց մեծ մասը Յունաստանի մեջ քաղցածութենէ եւ զանազան ցաւերէ ջարդուեցաւ:

1. Այն ձախորդութիւններէն ետքը Քսերքսես դարձաւ Ասիա, եւ իւր տեղը Մարդուխու զօրապետը ձգեց 300,000 զօրքով, որպէս զի պատերազմը առաջ տանի: Արխատիդէս Արենացին եւ Պառլասնիաս Յունաց քազաւորը 100,000 զօրքով սաստիկ ջարդ յուին իրեն: Նոյն օրն ալ Պարսից մնացեալ նաստորմիւր Պլատեայի քովերը Յոյներէն ջարդուեցաւ:

2. Այնուհետեւ Պարսիկները չհամարձակե-

---

<sup>1</sup> Քսերքսեսի զօրացը ինչպէս յաղթեցին Արխատիդէս ու Պառլասնիաս:

<sup>2</sup> Յոյնք Պարսիկները Յունաստանէն քշելէն ետքը ինչ ըրին:

ցան այլ եւս Յունաստանի վրայ արշաւելու .  
իսկ Աթենացիք բաւական չսեպելով անոնց  
քշուիլը , իրենց *Կիմոն* զօրավարին հետ մեկ  
քանի անգամ Պարսկաստան գնացին , եւ հոն  
յաղթութիւններ արին ծովու եւ ցամաքի վրայ :



*Աթենիի նախապատուութիւնը . — Պերիկ-  
լես.*

1. Յոյնք Պարսից յաղթելէն ետեւ ' անոնցմէ  
կողոպտած զանձերովը սկսան Աթենքը նորէն  
շինել : Այն ատենները (*444*) երեսելի եղաւ  
*Պերիկլէս* անունով Աթենացին , որոյ վրայ մեծ  
համարմունք ունէր ժողովուրդը ' խելքին , ճար-  
տասանութեան եւ առաքինութեանը համար :  
Այս մարդը այնչափ սիրելի էր իւր քաղաքա-  
կիցներուն ' որ իրեն հրամանները բազաւո-  
րական հրամանի պէս կկատարուէին : Բնու-  
թեամբ արդարասէր' եւ ազնիւ էր Պերիկլէս ,  
եւ Աթենքի փառքին ու երջանկութեանը հա-  
մար աւելի հոգ ունէր ' քան թէ իւր անձնա-  
կան շահին :

---

1 Ի՞նչ կերպով զօրացան Աթենացիք :



1. Աթենացոց նաւատորմիդը այնչափ շատցուց եւ զօրացուց Պերիկղես՝ որ Աթենքը Յունաստանի ամենէն երեսելի քաղաքն եղաւ. հազարի չափ ուրիշ քաղաքներ Աթենացոց պաշտպանութեանը տակ մտան, եւ պաշտպանութեանը փոխարէն տարուեալ տարի հինգ միլիոն ֆրանքի չափ տուրք կուտային Աթենացոց: Պերիկղես այն ստրկովը Աթենքի մէջ փառասոր մեհեաններ եւ ուրիշ շէնքեր շինեց, եւ գեղեցիկ ճերմակ մարմարիոնեալ արձաններով բոլոր քաղաքը զարդարեց: Արձաններուն մէջ աւելի հռչակաւորն էր *Փիդիաս* անունով երեսելի քանդակագործին շինած *Աթենաս* չատուածուհւոյն արձանը՝ փղոսկրեալ եւ ոսկիեալ, ու հոյակապ մեհենի մէջ դրուած:

2. Այն շինութեանց համար բոլոր Յունաստանէն երեսելի ճարտարապետներ, քանդակագործներ եւ պատկերահաններ եկան Աթենք: Շատ բանաստեղծներ եւ ուսումնականք ալ կային հոն, որ իրենց շարադրութիւններովը ոչ միայն Յունաստանի մէջ անուանի եղան,

---

<sup>1</sup> Պերիկղես ինչպէս զարդարեց Աթենքը:

<sup>2</sup> Պերիկղեսի ատեն արուեստներն ու գիտութիւնները սրչափ ծաղկեցան Աթենացոց մէջ:

այլ եւ. բոլոր աշխարհիս լուսաւորեալ ազգաց մեջ: Նոցա զրուածքներուն շատը մեզի ալ հասան. ամենքը կզմայլին անոնց եւ. կզարմանան այն ատենի հեղինակներուն բարակամտութեանը վրայ: Այս կերպով Արեւացւոց հասարակապետութիւնը Պերիկղեսին ջանքովը Յունաստանի մեջ առաջին քաղաք եղաւ՝ թէ ուժով, թէ հարստութեամբ, թէ արուեստներով եւ. թէ գիտութեամբ. բայց այն փառաւորութիւնը շատ ջտեւեց:

*Պեղոպոնետական պատերազմը.*

(431 — 404)

1. Արեւքին նախապատուութեանը ամենէն աւելի նախանձողները Սպարտացիք էին. վասն զի Մարաց պատերազմէն առաջ Յունաստանի զլիաւոր քաղաքը Սպարտան կհամարուէր: Սպարտացիք պատճառ կրփնտուէին որ Արեւացւոց հետ պատերազմ բանան, եւ. նոցա

---

<sup>1</sup> Պեղոպոնետական պատերազմին պատճառն ինչ էր:

ոյժը կոտրեն: Ուստի երբոր Յունաստանի քաղաքներէն մեկուն մեջ հասարակ ժողովրդեան եւ ազնուականաց մեջ կո.իւ. ելաւ, եւ Արենացիք ազնուականներուն օգնեցին ժողովրդեան դեմ, Սպարտացիք հակառակութեամբ հասարակ ժողովրդեան կողմը բռնեցին, եւ սկսան Արենացւոց դեմ պատերազմիլ. Պերիկլէս այն ատենը դեռ ողջ էր:

1. Այն պատերազմը 27 տարի քշեց, եւ Պեղոպոնեաական ասուեցաւ, վասն զի բոլոր Պեղոպոնեսի ժողովուրդները իրենց դաշնակից Յոյներով Արենացւոց դեմ պատերազմի ելաւ: Արենացիք քիչ դաշնակից ունենալով (որովհետեւ Ասիոյ յոյն գաղթականներէն ու կղզիներուն բնակիչներէն զատ դաշնակից չունէին) յոյսերը իրենց նաւերուն, բերդերուն եւ հարստութեանը վրայ դրին:

2. Երբոր պատերազմը բացուեցաւ, Արենացիք սկսան ծովէն Սպարտացւոց վրայ յարձրկիլ, ու անոնց ծովեզերքները կողոպտել:

---

<sup>1</sup> Այն պատերազմը ինչո՞ւ Պեղոպոնեական ասուեցաւ:

<sup>2</sup> Ի՞նչպէս եղաւ Պեղոպոնեական պատերազմը:

եւ քանդել . իսկ Սպարտացիք ցամաքին Ատտիկէ մտնելով՝ բոլոր երկիրը տակն ու վրայ կանեին :

1. Պեղոպոնեսական պատերազմին սկիզբները Աթենքին մեջ սաստիկ ժանտամահ պատահեցաւ՝ որ հազարաւոր մարդ ջարդեց . Պերիկղես ալ այն հիւանդութենէն բռնուեցաւ մեռաւ : Այն ցաւին ատենը թեպէտ պատերազմը առաջ զնաց , բայց տասը տարի ոչ Աթենացիք կըրցան անկէց օգուտ մի քաղել եւ ոչ Սպարտացիք . ուստի երկու կողմն ալ լաւ համարեցան որ առ ժամանակ մի պատերազմը դադրեցընեն :

2. Զինադադարման ատենը Աթենքի մեջ Աղկիրիադէս անունով թեթեամիտ եւ փառասեր երիտասարդ մի կար Պերիկղեսի ազգական , որ մեծ ազդեցութիւն ունէր ժողովրդեան վերայ . անոր խօսքովն Աթենացիք իրենց նաւատորմիդը Սպարտացւոց դաշնակից Սիկիլիացւոց դէմ պատերազմի յուղարկեցին , եւ Աղկիրիադէսը ծովակալ դրին :

---

<sup>1</sup> Աթենքի ժանտամահը կըր եւ ինչպէս եղաւ :

<sup>2</sup> Ո՞վ էր Աղկիրիադէս :

1. Բայց նաևատորմիդը հազիւ թէ Սիրա-  
կուսա հասեր եւ քաղաքը սկսեր էր պաշարել,  
հրաման եկաւ Աղկիբիադեսին որ իսկոյն Յու-  
նաստան դառնայ: Երբոր Աղկիբիադ Ա.թեն.թեն  
եկաւ իւր նաւերովը, երկրորդ առաւօտը ժո-  
ղովուրդը քաղաքին մեջ եղած կուռքերը կո-  
տրտած գտան, ու կարծեցին որ Աղկիբիադին  
բանն է. իսկ նա փոխանակ Ա.թեն.թ գայու՝  
Սպարտա փախաւ, եւ սկսաւ Սպարտացիներ  
ըր գրգռել ընդդէմ Ա.թենացւոց, ասելով թէ  
իրեն հպարտ քաղաքակիցները գուր տեղը  
նեղութիւն կուտան Սիրակուսայի բնակիչնե-  
րուն, եւ կատիպէր Սպարտացիները որ երթան  
օգնեն նոցա: Սպարտացիք անոր խօսքովը  
Սիկիլիա գօրք դրկեցին, եւ ծովէն ու ցամա-  
քէն Ա.թենացւոց յաղթեցին ետեւ՝ անոնց գօր-  
քը գերի վարեցին (413) եւ գօրապետը մեռու-  
ցին:

2. Քանի մի տարի ետքը Աղկիբիադես Սպար-  
տացւոց հետ ալ կուռելով՝ ձգեց Պարսկաս-  
տան փախաւ. բայց Ա.թենացիք համոզեցին  
զինքն որ իւր հայրենիքը դառնայ, եւ իրենց

---

<sup>1</sup> Սիկիլիացւոց դէմ բացուած պատերազմը  
Բնչպէս եղաւ:

<sup>2</sup> Աղկիբիադի վերջն Բնչպէս եղաւ:

նոր շինած նաւատորմին վրայ նորէն ծովա-  
կայ լինի : Չորս տարի յաջողութեամբ ծովուն  
վրայ պատերազմ արաւ Սղկիբիադ իւր նա-  
ւերովը . բայց երբ Աքենացիք պաշտօնէ ձգե-  
ցին զինքը , Սպարտացոց քաջ եւ խորագեալ  
*Լիւսանդր* ծովակալը՝ ոչ միայն կոտրեաց Ա-  
քենացոց նաւատորմիդը ելլեալոնտոսի մէջ ,  
այլեւ Աքենքը առաւ , միջնաբերդը քանդեց ,  
նաւերուն տիրեց եւ քաղաքին կառավարու-  
թիւնը երեսուն բունաւորաց յանձնեց :

1. Այն բունաւորները շատ կնեղէին ժո-  
ղովուրդը . ունեցած ջուներցածները կկողոպ-  
տէին , եւ իրենց ջնաւնած մարդիկը սպաննել  
կուտային : Աքենացիք զարկին մեռուցին բրո-  
նաւորները , եւ նորէն առաջին կառավարու-  
թիւնը հաստատեցին . բայց այն փոփոխութիւ-  
նը անօգուտ եղաւ իրենց . վասն զի Պեղոպո-  
նեսական պատերազմով բոլոր իրենց ոյժն ու  
նախապատուութիւնը կորուսին , ու ոչ երբեք  
կրցան նորէն շտկուիլ :

---

<sup>1</sup> Երեսուն բունաւորներուն կառավարութիւ-  
նը ինչպէս էր :

## Նորագործն Յորևաց.

1. Պեղոպոնեսի պատերազմէն ետքը նախապատուութիւնը Սպարտացւոց անցաւ, որք ոչ միայն Յունաց քաղաքներուն եւ կղզիներուն տիրեցին, այլ եւ Փոքր Ասիոյ Յոյներուն: Ի սկզբան Յոյները շատ ուրախացան որ հրպարտ Արենացիները յաղթուեցան, որով ազատեցան իրենք նոցա խստութիւններէն. բայց վրան մեկ տարի չանցաւ, սկսան Յոյնք զանգատիլ Սպարտացւոց դէմ, լսելով թէ անոնք Արենացւոցմէ ալ զեշ կվարուին նեւերը: Նոյն միջոցին թերէի եւ Յունաց ուրիշ քաղաքներուն բնակիչները Պարսիկներէն եւ Փոքր Ասիոյ Յոյներէն սիրտ առնելով՝ ապստամբեցան:

2. Սպարտացւոց Ազեսիդայոս թագաւորը, որ Պարսից դէմ պատերազմի գնացեր էր, շուտ մի հաշտուեցաւ նոցա նեւ. որով Փոքր Ասիոյ Յոյները նորէն (387) Պարսից հպատակ եղան, եւ

---

<sup>1</sup> Սպարտացիք ինչ կերպով ձեռք ձգեցին Յունաստանի նախապատուութիւնը:

<sup>2</sup> Ազեսիդայոս թագաւորին ատենը ինչպէս զօրացան Սպարտացիք:

ինքը դարձաւ եկաւ Սպարտա, ապստամբած Յոյները խաղաղեցոց եւ անով Սպարտայի նախապատուութիւնը պահպանեց. բայց այն խաղաղութիւնն ալ շատի չզնաց. վասն զի Սպարտացիք Թերէի բերդը առնելէն ետքը, չորս տարի հոն մնալով՝ սկսան սաստիկ նեղել բնակիչները. այն պատճառաւ անոնցմէ շատերը հարկադրուեցան Աթենք փախչելու :

1. Պեղոպիդաս անուանով Թերացին ժողովեց իւր քաղաքակիցները (379), զնաց Թերէ, ու Սպարտացիները վարեց հանեց :

2. Քանի մի տարի անցնելէն ետեւ՝ Սպարտացիք Թերացոց վրէժը առնելու համար 25,000 զօրք յուղարկեցին նոցա վրայ. բայց Թերացոց *Եպամինոնդ* անուանով քաջ զօրապետը 6,000 զօրքով անոնց դէմ եկաւ. *Մակտիկեա* ասուած տեղը ու ջարդեց Սպարտացիները : Այն յաղթութեամբ Թերացոց անուանը շատ բարձրացաւ. իսկ երբոր *Եպամինոնդ* Պեղոպոնէս մտաւ, եւ հոն պատերազմի մեջ մեռաւ, Թերէի փառքն ալ անոր հետ անցաւ :

---

<sup>1</sup> Պեղոպիդաս Թերացին ինչ կերպով ազատեց իւր հայրենիքը :

<sup>2</sup> *Եպամինոնդ* ինչ յաղթութիւն արաւ Սպարտացոց դէմ :



1. Եպամինոնդի մահուանէն ետքը՝ մեկ քանի տարի եւս քշեց քաղաքական պատերազմը. եւ անոր պատճառը Փովկիսացուց Բեդփիսի մեհեանը կողոպտելն էր :

2. Բոյոր այն քաղաքական պատերազմները այնչափ ուժե ձգեցին Յունաստանն որ էրր Մակեդոնացիք եկան Յունաց դեմ պատերազմի, ամենեւին չկրցան սորա անոնց դեմ դրնել ու անձնատուր եղան :

---

*Բանաստեղծք, պատմաքանիք եւ իմաստաստեղծք Յունաց.*

3. Ինչպէս որ առաջ ասինք՝ Յունաստան շատ երեւելի բանաստեղծներ եւ գիտուն մարդիկ կային : Բանաստեղծներուն մեջ երեւելի էին՝ Համերոս՝ Յունաց քերթողահայրը, Եսքիդոս, Սոփոկղ, եւ Եւրիպիդես :

---

<sup>1</sup> Եպամինոնդի մահուամբը դադրեցան քաղաքական պատերազմը :

<sup>2</sup> Քաղաքական պատերազմները ինչ վնաս տուին Յունաստանի :

<sup>3</sup> Յունաց հին բանաստեղծներուն մեջ անուանիները ոյք եղան :

1. Պատմաբաններէն անուանին է *Երողութեան*, որ հին ազգաց պատմութիւնը զրեց ու մինչեւ Պարսից պատերազմը հասուց:

2. Փիլիսոփաներուն, այսինքն իմաստասէրներուն գործը մարդուս վրայ զննութիւններ անել էր. սոցա մեջ *Սոկրատես* կամ *Սոկրատ* անունով Արեւնացի փիլիսոփան ամենեկն երեւելի էր: Սա ետեւէ եղաւ զխոնարհութեամբ ինչ կերպով կրնայ երջանիկ լինել: Երբոր Գեղփիսի մեհենին վրայ „*Մանիք զրեզ* — ինքզինքդ ճանչցիր“ խօսքը կարդալով՝ սկսաւ իրեն վարած կեանքը քննել, տեսաւ որ աշխարհիս վրայ երջանիկ լինելու համար՝ պետք է նախ ըստ խղճմտանաց շարժիլ, եւ ապա ճշմարտին Աստուծոյ օգնութեամբ անել ամեն բան: Այն ստեղծեալ սկսաւ Սոկրատ չափաւոր կեանք վարել, եւ հասարակ հագուստներ հագնիլ, ուրախութիւններէ հեռու կենայ, որպէս զի ինքն իրեն կամքը կոտրէ. ուրիշներու հետ կռիւ չանելու համար՝ ինչ զեշ խօսքեր ասէին իրեն, համբե-

---

<sup>1</sup> Յունաց ամենեկն երեւելի պատմաբանը ո՞վ է:

<sup>2</sup> Փիլիսոփայից գործը ինչ էր, եւ ո՞վ եղաւ նոցա մեջ ամենեկն անուանի:

րութեամբ կը լսէր, եւ գիտցածը ուրիշներուն սովբեցնելու համար՝ աշակերտներ առաւ քովը, որոց հետը քաղաքին մէջ շրջելով՝ բարոյական խրատներ կուտար անոնց :

1. Սոկրատ շատ բշնամիներ ունէր, բայց գլխաւորները *խմաստակ* ասուած փիլիսոփաներն էին, որոց գործն էր ճարտար կերպով սուտը ճշմարտութեան տեղ քարոզել : Սոքրա Սոկրատեսին չափաւորութիւն եւ առաքինութիւն քարոզելուն ջնաւնելով՝ գրպարտեցին զինքը՝ իբր թէ աստուածոց ջնաւտար, եւ ամբարշտութիւն կսովբեցնէ ժողովրդեան : Սքենացիք այն փիլիսոփաներուն խօսքին նայելով՝ բանտ դրին Սոկրատը եւ ի մահ դատապարտեցին :

2. Բանտարկութեան ատեն Սոկրատայ աշակերտներէն մէկը ասաց իրեն՝ թէ „Ի՛նչ ցաւայի բան է որ անմեղ տեղը կդատապարտեն զքեզ : — Հապա կուգէիր որ լանցաւոր լինէի եւ անյնպէս դատապարտուէի“ պատասխանեց Սոկրատ : Ուրիշ անգամ մի աշակերտ-

---

<sup>1</sup> Ո՛չք էին Սոկրատայ բշնամիները :

<sup>2</sup> Ի՛նչ կերպով համբերեց Սոկրատ բանտարկութեան, եւ ինչպէս մեռաւ :

ներք առաջարկեցին իրեն՝ որ զինքը բանտէն  
փախցընեն . , Միքէ մոռցմք որ օրինաց հնա-  
զանդելու է՝, ասաց Սոկրատ, եւ դահճին  
բերած բոյնը խմելէն ետեւ (399) հանգիստ  
արտով մեռաւ :

1. Սոկրատայ աշակերտները թեպէտ եւ զի-  
տէին թէ մարդս երջանիկ լինելու համար որ-  
պիսի կեանք պէտք է վարէ, բայց նորա կա-  
նոնները աչքերուն խիստ երեւնալով՝ ուզեցին  
դիւրին կերպով հասնիլ երջանկութեան : Ուս-  
տի ոմանք երջանկութիւն զտնելու համար՝  
իրենք զիրենք բոլորովին գոարճութեան տուին,  
եւ այնպիսի փիլիսոփայքը *Եպիկուրեան* ա-  
տուեցան : Ոմանք իրենք զիրենք չարչարան-  
քի կզնէին եւ կջանային աշխարհիս ամեն  
բանէն պաղիլ, որպէս զի ոչ ուրախութեան  
համը առնեն եւ ոչ տրտմութեան ցաւը քա-  
շեն . սորա *Ստոյիկեան* փիլիսոփայք կոչուե-  
ցան : Ոմանք եւս դիտելով որ շատ անզամ  
մարդոս բարերադրութեան արգելք եղողը հա-  
րատութիւնն է, աղքատութեամբ սկսան ապ-  
րիլ . այսինքն փոխանակ տան մեջ բնակելու՝

---


<sup>1</sup> Ի՞նչ աշակերտներ բողոսց Սոկրատ. —  
Ո՞չք էին Եպիկուրեանք. — Ստոյիկեանք թնչ  
կսովընցընէին. — Շնականները ո՞չք էին :

գիշեր ցորեկ փողոցներու մեջ կկենային, եւ այն փիլիսոփաները *Շնակրան* ասուեցան :

2. Այս վերջիններուն մեջ ամենէն երեսելին *Դիոզինէս* փիլիսոփան էր, որոյ բնակարանը մէկ տակառի մեջ էր : Սեծն Աղեքսանդր Յունաստան եկած առեներ Դիոզինէսը տեսնելու զնաց . նորա տակառի մեջ բնակածին վրայ շատ զարմանայէն վերջը՝ „Խնդրէ ինձմէ ինչ որ կուզես, տամ քեզ“, ասաց Աղեքսանդր : — Ես բանի մի կարօտութիւն չունիմ, պատասխանեց Դիոզինէս . միայն խնդրեմ, արեւուն առջեւէն մեկդի զնա“ :

---

<sup>1</sup> Դիոզինէսի վրայ ինչ գիտելիք կայ :



ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՄԱԿԵՒՈՆԱՅԻՈՅ.

Մակեդոնիոյ պատմութիւնը մինչեւ Փի-  
լիպպոսի մահը.

1. Յունաստանի հիւսիսային կողմը լեռ-  
նային երկիր մի կայ, որոյ բնակիչները Բրիտ-  
տոսէ ուրը հարիւր տարի առաջ Յունաստա-  
նէն ելած գաղթականներ էին: Սորա բնիկ  
ժողովրդեան հետ խառնուեցան, եւ այն խառ-  
նուրդէն Մակեդոնացւոց ազգը ձեւացաւ, որ  
Պարսից եւ Յունաց տերութիւններուն ուժէ իյ-  
նայէն ետեւ՝ անուանի եղաւ իբրեւ զօրաւոր  
եւ պատերազմասէր ազգ:

---

<sup>1</sup> Մակեդոնիան ուր կիցնայ, եւ բնակիչքը  
ոյք էին:

1. Մակեդոնացիք Մարաց պատերազմէն ի վեր՝ Պարսից ձեռքին տակն էին . բայց յետոյ ազատեցան նոցա ձեռքէն :

2. Թերէի Եպամինոնդ զօրավարին մանուանէն մէկ տարի ետքը, Մակեդոնացւոց բազաւորն եղաւ խելացի եւ խորագեալ Փիլիպպոսը: Այն բազաւորը դեռ երիտասարդութեան ժամանակը Յունաստանի մէջ Եպամինոնդ զօրավարին տունը կենալով՝ պատերազմական արուեստը առեկ սովորեցաւ . միանգամայն Յունաստանի այն ատենի երկպառակութիւններուն լաւ տեղեկացաւ : Երբոր ընկերական պատերազմը բացուեցաւ, Փիլիպպոս այն երկպառակութիւններէն օգուտ քաղելու համար՝ Յունաց պաշտպան ցուցուց ինքզինքը, եւ իբր թէ պատրաստ էր օգնել նոցա : Յոյները անոր խօսքերուն հաւատալով՝ հրաւիրեցին զինքը որ գայ խաղաղութիւն ձգէ մեջերը :

---

<sup>1</sup> Մակեդոնացիք ազատ ազգ էին թէ հպատակ :

<sup>2</sup> Ո՞վ եղաւ Մակեդոնիոյ առաջին անուանի բազաւորը :

1. Դեմոսթենես անունով Յունաց ատենախօսը՝ Փիլիպպոսի կեղծաւորութիւնը հասկընալով՝ անդադար կյորդորէր ժողովուրդը ընդդէմ Մակեդոնացոց . բայց Յոյնք անոր խօսքին մտիկ չանելով՝ բողոսցին որ Մակեդոնացիք Թերմոպիլէէն անցնին եւ մտնեն Յունաստան :

2. Փիլիպպոս ներս մտածովը կեղծաւորութիւնը մեկդի դրաւ, եւ սկսաւ Յունաց հետ տիրարար վարուիլ : Յոյնք այն ատենը միայն հասկըցան իրենց բերեամտութիւնը եւ պատերազմի ելան անոր դէմ, բայց ուշ էր . Փիլիպպոս ջարդեց նոցա զօրքը, եւ (338) բոլոր Յունաստանի տիրեց :

3. Փիլիպպոսի միտքը միայն Յունաստանը ձեռք ձգել չէր, այլ Պարսկաստանի եւս կուզէր տիրել . ուստի խոստացաւ Յունաց որ երէյօժարին զինքը իրենց սպարապետ դնել, ա-

---

<sup>1</sup> Ի՞նչ կերպով մտաւ Փիլիպպոս Յունաստան :

<sup>2</sup> Ի՞նչպէս տիրեց Յունաստանի :

<sup>3</sup> Փիլիպպոս ուրիշ ինչ դիտաւորութիւններ ունէր :



գատութիւն տայ իրենց : Այն առաջարկութեան վրայ՝ Փիլիպպոս մեռաւ , եւ տեղը անոր քսան տարեկան *Աղեքսանդր* որդին ( 336 ) Յունաց սպարապետ եղաւ :

1. Աղեքսանդրի վրայ տղայութեան ատենէն գուշակութիւններ կային որ մեծ գօրավար եւ երեւելի աշխարհակալ պիտի լինի : Կասենք որ մի խստերախ ձի մի սանձեց՝ որ մեկը ջեր կրնար վրան հեծնիլ . հայրը այն կտրճութիւնը տեսնելով որդւոյն վրայ , , Որդեակ , ասաց , քեզի համար ուրիշ տերութիւն գտիր , վասն զի իմա քեզի բաւական պիտի ջլինի “ :

2. Աղեքսանդր ուսմանց մեջ եւս յառաջադիմութիւն արաւ , եւ իւր վարժապետը *Արիստոտել* անունով երեւելի փիլիսոփան էր : Աղեքսանդրի սիրական գիրքը Հոմերոսի երգերն էին , որոց մեջ Յունաց դիւցազանց քաջութիւնները կարդալով՝ երեւակայութիւնը կրվառուէր . եւ այնչափ սէր կապեց աշխարհակայութեան՝ որ իր հօրն արած յաղթութեանցը վրայ անգամ կնախանձէր :

---

<sup>1</sup> Աղեքսանդրի մանկութիւնը ինչպէս էր :

<sup>2</sup> Աղեքսանդր ուսում ունէր թէ ոչ :

Մակեդոնացւոց տիրութիւնը Մեծիկ Ա-  
ղեքսանդրի ասեւնը.

1. Աղեքսանդր բազաւոր նստածովը Մակեդոնիոյ եւ Յունաստանի մեջ 35,000 ընտիր զօրք ժողվեց, անով ելլեալոնատոսէն անցաւ Փոքր Ասիա մտաւ: Հոն Գրանիկոն գետին քովը Պարսից զօրքերը դիմացն ելան, եւ Աղեքսանդր իրեն զօրքերովը նոցա վրայ յարձրկեցաւ: Պատերազմին մեջ երկու Պարսիկ անոր փայլուն եւ փետրազարդ սաղաւարտը ճանչնալով, վրան վազեցին որ սպաննեն զինքը. բայց Կոնիլէս անունով Մակեդոնացի զօրավարը վրայ հասաւ, եւ Պարսիկներէն մեկուն վեր վերուցած ձեռքը կտրեց. իսկ զմիւսը Աղեքսանդր իր ձեռքով զարկաւ մեռոց: Այն պատերազմին մեջ Մակեդոնացիք յաղրեցին Պարսից, եւ Փոքր Ասիոյ տիրեցին:

---

<sup>1</sup> Աղեքսանդրի առաջին արշաւանքը նրն եղաւ:

1. Յաջորդ տարին Պարսից *Դարեն* Կադոմանու թագաւորը անձամբ՝ բոլոր պալատականներով՝ ընտանեօք եւ շատ զօրքով (333) Ադեքսանդրի վրայ եկաւ : Այն անգամ պատերազմը *Իսսու* ասուած քաղաքին քով եղաւ : Ադեքսանդր այնպիսի կոտորած տուաւ Պարսիկներուն, որ Դարենին մայրը, կնիկն ու տղաքը եւս չկրցան ազատիլ, գերի բռնուեցան . իսկ ինքը Դարեն Պարսկաստան փախաւ :

2. Ադեքսանդր Փոքր Ասիայէն անցաւ Փիանիկէ . այն տեղի քաղաքները սարսափած՝ ամենքն եւս անձնատուր եղան իրեն՝ բաց ի *Տիւրուս* քաղաքէն, որոյ բնակիչքն ուզեցին դէմ կենալ անոր : Ադեքսանդր քաղաքը առնելու համար հրամայեց որ ցամաքէն մինչեւ Տիւրոսի կղզին կամուրջ շինեն, եւ ծովէն նաւերը երբան կղզին պաշարեն : Կամրջին շինութիւնը շատ դժուարութեամբ եղաւ . վասն զի Տիւրացիք անդադար Մակեդոնացւոց վրայ յարձրկելով՝ չէին բողոք որ զործը առաջ

---

<sup>1</sup> Իսսոսի քով ինչ յաղթութիւն արաւ Ադեքսանդր :

<sup>2</sup> Տիւրոս քաղաքին ինչպէս տիրեց :

երբայ . բայց Աղեքսանդր (332) առաւ քաղաքը , քանդեց բոլորովին , եւ բնակիչներուն շատը քրէ անցուց :

1. Հրեայք , որ այն ժամանակները Պարսից նպատակ էին , վախցան որ Մակեդոնացոց քաղաւորը իրենց դէմ եւս պատերազմի ելլէ . ուստի երբոր Աղեքսանդր Երուսաղեմի մօտեցաւ , բոլոր քահանաները դիմացն ելան , ու մեծ պատուով քաղաք ընդունեցան զինքը : Աղեքսանդր Հրեից քահանայապետին ձեռքէն բռնած ' Երուսաղեմի տաճարը մտաւ , գոն մատուց Սատուծոյ , եւ ուշադրութեամբ կարդաց մարգարեաներէն մեկուն իւր վրայ արած գուշակութիւնը :

2. Երուսաղեմէն Աղեքսանդր Եգիպտոս զընաց , եւ առանց դժուարութեան բոլոր Եգիպտոսի տիրելէն ետեւ . ' Միջերկրական ծովուն եզերքը նոր քաղաք մի շինեց , անունը դրաւ *Աղեքսանդրիա* : Այն քաղաքը շատ ծաղկեցաւ . վաճառականութեամբ . որովհետեւ Երոպայի եւ Ասիոյ ապրանքները այն տեղը կրտարուէին ծախելու :

---

<sup>1</sup> Հրեից հետ ինչպէս վարուեցաւ :

<sup>2</sup> Ի՞նչ կերպով տիրեց Եգիպտոսի , եւ ինչ քաղաք կանգնեց այն տեղը :

1. Աղեքսանդր Ափրիկեի մեջ նորէն գօրք ժողովեց, եւ անով Հրեաստանի վրայէն Պարսկաստան անցաւ: Ասորեստանի մեջ Տիգրիս գետին քովերը Արբեղա քաղաքին մօտ նորէն յաղթեց Դարենի, անոր Բարեղուն, Շօշ եւ Պերսեպոլիս մայրաքաղաքներուն տիրեց, ու անոնց մեջ պահուած անհամար գանձերը ձեռք ձգեց:

2. Դարեն յաղթուելէն ետեւ ձգեց վախաւ. Աղեքսանդր զինքը բռնել ուզելով՝ ետեւէն ընկաւ գօրքով, եւ այնպիսի աւագոտ, չոր եւ ընդարձակ անապատ մի մտաւ՝ որ գօրքը անտանելի նեղութեանց մեջ մնաց: Այն նեղութեան ատեն զինուորին մեկը սակաւիկ մի ջուր գտնելով՝ սաղաւարտովը Աղեքսանդրին առջեւը բերաւ. բայց Աղեքսանդր տեսնելով որ գօրքը սաստիկ ծարաւի է, ջուրը գետինը թափեց ասելով. «Որովհետեւ դուք ջուր չունիք, ես եւս չեմ ուզեր խմել»: Այս բանը զինուորաց սրտին այնպէս քաղցր եկաւ որ ամենքը սկսան կանչել. «Մենք ջուր չենք ուզեր, ուր որ կուգես տար զմեզ. քեզի պէտք ազատորի հետ մեք մեռնելէ չենք վախնար»:

---

<sup>1</sup> Արբեղայի քով ինչպէս յաղթեց Պարսից:

<sup>2</sup> Աղեքսանդր ինչպէս գնաց Պարսկաստան:

1. Մակեդոնացիք Պարսկաստանի մեջ շատ նեղութիւն կրեցին, վասն զի լեռնաբնակ քաջ ազգաց դեմ սլատերագմելէն զատ՝ բնական արգելքներ ալ շատ ունեին. տեղ տեղ մեծամեծ սրբնքաց գետեր կելլէին առջեւները, տեղ տեղ բարձր լեռներ եւ տեղ տեղ ընդարձակ անապատներ: Աղեքսանդր միշտ զօրաց առջեւէն կքալէր առանց երկխղի. նորա նայելով զինուորները եւս սիրտ կառնէին: Այսպիսի դժուարութեանց յաղթելով՝ Աղեքսանդր ջորս տարուան մեջ բոլոր Պարսկաստանի տիրեց, ու Դարեհին տեղը ինքն եղաւ Պարսից թագաւոր:

2. Պարսկաստանի տիրելէն ետեւ՝ Աղեքսանդրի աշխարհակալութեան փափաքը սլակսելու տեղը աւելցաւ. ուստի քիչ մի ատեն հանգչելէն ետեւ՝ իւր զօրքը դեպ ի Հնդկաստան տարաւ: *Ինչոս* գետին քով Հնդկաց *Պոլշոս* թագաւորին զօրքը կոտորեց, եւ թագաւորը գերի բռնեց: Այնուհետեւ Աղեքսանդր ուզեց որ աւելի խորունկները երթայ, բայց իրեն զօրքը ոտք ելաւ, ջուզեց երթալ հետը:

---

<sup>1</sup> Ինչ նեղութիւններ կրեցին Մակեդոնացիք Պարսկաստանի մեջ:

<sup>2</sup> Հնդկաստանի արշաւանքը ինչպէս արաւ Աղեքսանդր:

Այնպէսով հարկադրուեցաւ Աղեքսանդր եւ զառնայու. զօրքին մեկ մասը ծովով Պարսկաստան յուղարկեց, եւ ինքը մնացեալ զօրքովը ցամաքէն Բաբելոն դարձաւ.:

1. Այս կերպով Աղեքսանդր տասը տարուան մեջ՝ Յունաստանի, Եգիպտոսի եւ Ասիոյ տիրեց, այսինքն ինդոս գետէն մինչեւ Միջերկրական ծովը եղած այն ամենայն տերութիւններուն՝ որ Պարսից ձեռքն էին: Աղեքսանդր բոլոր այն երկիրներէն մեկ տերութիւն մի կազմեց, եւ անոր մայրաքաղաք *Բաբելոն* արաւ: Երկիրներուն զանազան ազգերը մեկմեկու հետ միացնելու համար, հրամայեց որ Յոյնք եւ Մակեդոնացիք պարսկական կենցաղավարութեան ձեւը եւ Պարսից սովորութիւններն ընդունին. Պարսից երիտասարդներուն վրայ ալ պարտք դրաւ որ յունական կրթութիւն առնեն: Իւր պալատին մեջ Պարսից սովորութիւններ հաստատեց, եւ ինքզինքը փափկութեան ու գեղխութեան տուաւ: Այն կարգադրութիւններով Ասիացիք Յունաց արուեստներն ու գիտութիւնները սովրեցան, իսկ Երոպացիք Պարսից կենցաղավարութեան կերպը առին: Այն ատենէն ի վեր Եգիպտոսի,

---

<sup>1</sup> Աղեքսանդրի աշխարհակալութիւններուն հետեւանքը ինչ եղաւ:

Պաղեստինու, Ասորեստանի եւ այլ երկիրներու մէջ Յունաց լեզուն տարածուեցաւ :

1. Այնչափ երկիրներու տիրելէն ետքը՝ Աղեքսանդր ուզեց որ իւր ընդարձակ տերութեանը զանազան կարգեր կանոններ դնէ, բայց նպատակին չհասաւ . վասն զի վրան շատ ջանցաւ՝ հիւանդացաւ մեռաւ. Բարեւոնի մէջ :

2. Աղեքսանդր միայն 12 տարի թագաւորեց. բայց այն կարճ միջոցին այնչափ երեւելի գործեր արաւ. Երոստայի, Ասիոյ եւ Ափրիկէի մէջ, որ ոչ Կիւրոս կրցեր եր անել եւ ոչ առաջ եղած թագաւորները. ուստի եւ Աղեքսանդր *Մեծն* կոչուեցաւ :

---

*Մեծին Աղեքսանդրի տիրութեան քաժանութիւնը .*

---

3. Աղեքսանդր մեկ որդի միայն ունէր, որ դեռահասակ լինելով՝ տերութիւնը կառավար-

---

<sup>1</sup> Ուրիշ ինչ դիտաւորութիւններ ունէր Աղեքսանդր :

<sup>2</sup> Քանի տարի թագաւորեց Աղեքսանդր, եւ ինչո՞ւ Մեծ ասուեցաւ :

<sup>3</sup> Աղեքսանդրին ո՞վ յաջորդ եղաւ :



ընչու պիտի ջկրնար . ուստի մեռնելու ատենն Աղեքսանդր ասաց՝ որ իւր տեղը արժանաւորագոյնը լինի թագաւոր : Այն անորոշութեան պատճառաւ՝ զօրապետներուն մեջ կռիւ ելաւ , վասն զի իւրաքանչիւրը ինքզինքը ուրիշներէն աւելի արժանի կհամարէր թագաւորութեան : Կռուոյն հետեւանքը պատերազմ եղաւ , որ 22 տարի քշեց :

1. Պատերազմին ատենը Աղեքսանդրի բոլոր ազգականները մեռան , եւ զօրապետները վերջին անգամ Փոքր Ասիոյ *Իսպառ* քաղաքին քովերը պատերազմելէն ետքը , խորհուրդ արին որ Աղեքսանդրի ընդարձակ տերութիւնը կտոր կտոր բաժնեն իրենց մեջ :

2. Այն բաժանմունքով *Պտղոմէոս* զօրավարին բաժին ընկաւ Եգիպտոս , *Սելեւկոսին* Ասորոց երկիրը , որ այն ատենէն *Սելեւկիս* ասուեցաւ . Սելեւկոսին տրուեցան նաեւ Մակեդոնիա եւ Յունաստան . իսկ *Նեոպտոլո-*

---


<sup>1</sup> Աղեքսանդրի յաջորդութեան պատերազմը թնջակս վերջացաւ :

<sup>2</sup> Ի՞նչ կերպով բաժնուեցաւ Աղեքսանդրի տերութիւնը իւր զօրավարացը մեջ :

մեռախնի ընկաւ. Հայաստան: Ասոնցմէ զատ  
Ասիոյ մեջ մանր մանր տերութիւններ ալ ձե-  
ւացան, ինչպէս Պերզամուն, Բիւքարաճիա,  
Բակտրիա՝ Պարսկեւաց երկիրը, եւ այլն:

1. Հրեաստանն ի սկզբան Սելեւկոսին բա-  
ժինն էր, բայց յետոյ բաժնուեցաւ. Ասորոց  
երկրէն եւ զատ տերութիւն եղաւ (176),  
քեւ. Եզիպտացիք շատ աշխատեցան ձեռք  
բերելու այն երկիրը:

Բոլոր այն տերութեանց մեջ երկպառակու-  
թիւնն ու քաղաքական պատերազմները ան-  
պակաս էին՝ մինչեւ Հռովմայեցոց զայն ու-  
անոնց ամենուն տիրելը:




---


<sup>1</sup> Հրեաստանը միւս բաժին ընկաւ:

## ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Հ Ո Ռ Վ Մ Ա Յ Ե Յ Ի Ո Յ .



Նախնի Իսայիոյ վիճակը եւ նորա  
բնակիչները .



1. Խտալիան Երոսպայի հարաւային կողմն  
է . դիրքը Միջերկրական եւ Ազրիական ծո-  
վերուն մեջ տեղն է , եւ Ապեննեան լեռնե-  
րով երկու կտոր կրածնուի՝ հիասիսէն դեպ  
ի հարաւ : Այն երկայն եւ նեղ բերակոյզին  
Երոսպայի ամենէն գեղեցիկ երկիրն է : Բոլոր  
Խտալիան զարդարուն պարտիզի կնձանի . ձո-  
րերն ու հովիտները այգիներով , բզենիներով  
եւ ուրիշ պտղաբեր ծառերով լի են :

---

1 Խտալիոյ դիրքն ու երկիրը ինչպէս է :

1. Իտալիոյ մեջ բաց ի Հոռովմայեցիներէն կրնակէին նաեւ *Ետրուրացիք*, *Լատինացիք*, *Սարինացիք*, *Սամնիացիք*, եւ ուրիշ ազգեր, որ յոյն եւ սպանիացի գաղթականաց սերունդներէն լինելով, իւրաքանչիւրը իւր լեզուն եւ սովորութիւններն ունէր: Ետրուրացիք Յունաց գաղթականներէն էին, եւ ի սկզբան Հիւսիսային եւ Միջին Իտալիոյ արեւմտեան կողմը կրնակէին. անոնցմէ վար Լատինացոց գանազան ցեղերը կրնակէին. Սարինացիք եւ Սամնիացիք Լատինոնին արեւելեան կողմի լեռները կրնակէին. իսկ հարաւային Իտալիա բոլորովին Յունաց գաղթականներուն ձեռքն էր:

2. Ի սկզբան Հոռովմայեցի ասելով միայն Հոռով քաղաքին բնակիչ կիմացուէր. եւ այն քաղաքը Լատինոնի, այսինքն Լատինացոց երկրին մեջ *Տիրերիս* գետին եզերքը շինուած էր:

3. Հոռովմայեցիք զօրաւոր եւ պատերազմա-

---

<sup>1</sup> Իտալիոյ հին բնակիչները ո՞յք էին:

<sup>2</sup> Հոռովմայեցի ասուողները ո՞յք էին: — Ո՞ւր էր Հոռով:

<sup>3</sup> Քաջութեան կողմանէ ինչպէս էին Հոռովմայեցիք:

սեր մարդիկ էին : Պատերազմի ատեն կարգով եւ կտրճութեամբ թշնամիներուն վրայ կըյարձրկէին ու ամենեւին ետ չէին փախչեր :

1. Սոքա նախ իրենց դրացի ազգերը նուաճեցին , եւ ապա հետ զհետեւ առաջ քալելով՝ 500 տարուան մեջ՝ նախ բոլոր Իտալիոյ եւ Սիկիլիա կղզւոյն տիրեցին , եւ յետոյ այն յաջողութիւններով քաջալերուած՝ Երոսպայի , Ասիոյ եւ Ափրիկէի զանազան տեղուանքը յաջողութեամբ պատերազմելով՝ բոլոր այն ատենի ծանօթ երկիրներուն տիրապետեցին :

2. Խաղաղութեան ատեն Հռովմայեցիք երկրագործութիւն կանէին . եւ այն արուեստը այնչափ յարգի էր՝ որ մեծամեծ զօրապետներն եւս իրենց երկիրները իրենց ձեռօքը կմշակէին :

3. Հռովմայեցիք իրենց կրօնքը Յունաստանէն ընդունելով՝ անոնց չաստուածներն ու չաստուածուհիները կպաշտէին , եւ նոցա մեջ

---

<sup>1</sup> Ի՞նչ կերպով ընդարձակեցին Հռովմայեցիք իրենց տերութիւնը :

<sup>2</sup> Խաղաղութեան ատեն ինչ բանի հետ կըլինէին :

<sup>3</sup> Հռովմայեցւոց կրօնն ինչ էր :

գլխաւորներն էին Դիտո կամ Արամազդ եւ  
Արեւ :

1. Հռովմայեցիք Յունաց պէս պատգամա-  
խօսներ ջուռնէին , այլ անոնց տեղը քուրմերը  
քոջուններուն քոջիլը դիտելով , կամ գոհերուն  
փորոտիքը նայելով՝ ժողովրդոց կյայտնէին  
ջաստուածներուն կամքը : Այն գուշակութիւն-  
ները անող քուրմերը Հաւանմայք կասուէին :

2. Յունաց պէս Հռովմայեցիք եւս հանդի-  
սաւոր խաղեր ունէին , այն է ձիւրնթաց , կա-  
ռարշաւ եւ մենամարտութիւն . անկեց ի գատ  
ունէին նաեւ զանազան տեսարաններ :

3. Հռովմայ կառավարութիւնը առաջ Թա-  
գաւորութիւն էր , յետոյ Հասարակապետու-  
թիւն դարձաւ , եւ վերջը եղաւ Միապետու-  
թիւն :



---

<sup>1</sup> Հռովմայեցւոց կրօնն ինչ էր :

<sup>2</sup> Ի՞նչ տարրերութիւն ունէր Հռովմայեցւոց  
կրօնը հին Յունաց կրօնէն :

<sup>3</sup> Հանդիսաւոր խաղեր ունէին Հռովմայեցիք :

ԹՄԳԱԻՈՐԲ ՀՈՌՎՄԱՅ.

Հոովմայ հիմնարկութիւնն ու թագա-  
ւորները .

1. Լատինացւոց երկիրը նուաճառք անու-  
նով թագաւոր մի կար, որոյ Ամուշիոս ան-  
ունով անգութ եղբայրը թագաւորութիւնը  
ձեռքէն առնելէն ետեւ՝ նուաճառքի որդին եւս  
մեռուց, ու անոր երկուորեակ թուերը Տիրե-  
րիս գետը ձգեց. բայց չխոչոյեցան, վասն զի  
հովուին մեկը գտաւ այն երկուորեակները,  
քովն առաւ, մեծցուց, եւ մեկուն անունը Հոու-  
մուշուս դրաւ կասեն, իսկ միւսինը Հուեմուս:  
Տղոցը մեծնայէն ետեւ՝ հովիւը պատմեց նո-  
ցա թէ որո՞ւ տղաքն են, եւ ինչ կերպով գտեր  
է զիրենք. իմացուց եւս Ամուշիոսի արած ջա-  
րութիւնները: Հոումուշուս եւ Հուեմուս իրենց  
դրացի հովիւները ժողվեցին, գնացին Ամու-  
շիոսը մեռուցին, եւ անոր տեղը թագաւոր  
դրին իրենց մեծ հայրը:

---

<sup>1</sup> Ի՞նչ կերպով կպատմուի Հոովմայեցւոց  
ազգին ու տերութեան սկզբնաւորութիւնը:

1. Նուսիտոր այս բանիս շատ ուրախանալով՝ առաջարկեց թոռերուն որ ուզեն իրմէ ինչ որ կամենան. նորա ալ խնդրեցին որ օգնէ իրենց՝ Տիրերիս գետին եզերքը *Պաշատիկեան* ասուած տեղը քաղաք շինելու : Նուսիտոր ուրախութեամբ կատարեց այն խընդիրքը, եւ գործաւորներ յուղարկեց որ քաղաքը շինեն : Բայց երբոր (753) քաղաքը շինուեցաւ, երկու եղբարց մեջ կռիւ ելաւ. բե՛ով պիտի լինի անոր տերը : Հռոմուլոս սպաննեց Հռեմոսը, ինքը թագաւոր եղաւ եւ քաղաքին անունը *Հռոմ* դրաւ :

2. Հռոմուլոս զօրք կազմեց եւ անձնական պաշտպանութեան համար թիկնապահներ ընտրեց իրեն . իսկ Հռովմայ ժողովրդեան մեջէն աւելի փորձ եւ խելացիները՝ իրեն խորհրդական արաւ, որպէս զի անոնք ժողովրդեան գործերը հոգան : Այն խորհրդականները *ժերք* կամ *սէնա՛րոռ* կոչուեցան, եւ խորհրդարանը *ժերակոյտ* կամ *սէնա՛րուս* ասուեցաւ : Ծերակուտի անդամները հարիւր հոգի էին,

---

<sup>1</sup> Հռոմուլոս եւ Հռեմոս ինչպէս շինեցին Հռոմ քաղաքը :

<sup>2</sup> Ի՞նչ կարգեր դրաւ Հռոմուլոս Հռովմայ կառավարութեանը մեջ :



եւ նոցա գործն եր քաղաւորին նետ մեկտեղ  
օրենք դնել, պատերազմ բանալ եւ հաշտու-  
թիւն անել :

1. Ծերակուտին անդամները Հարք եւս կա-  
սուեին, ըստ Լատինաց Փա՛րրէս, անոր հա-  
մար ծերակուտին ցեղերէն եղողները պատ-  
րիկ կոչուեցան՝ որ ազնուական ասել է. իսկ  
մնացեալ Հոռվմայեցիք ժողովրդականք ա-  
սուեցան : Ուստի բոլոր Հոռվմայ ժողովուրդը  
երկու կարգ բաժնուեցաւ, պատրիկներ եւ  
ժողովրդականք : Ետքերը ժողովրդականաց  
կարգը մտան նաեւ Հոռվմայեցւոց յաղբած  
ազգերը, որոց կայուածները պատրիկներուն  
տրուեցան :

2. Հոռմուլոս իւր հպատակները շատցընե-  
լու համար հրաման տուաւ որ ուրիշ տեղ ե-  
րես ջուներցող փախստականները զան ազա-  
տաբար բնակին Հոռվմայ մեջ : Այն հրամա-  
նին վրայ քեպետ երիկ մարդիկ շատցան, բայց  
կնիկ մարդ ամենեւին չկար : Հոռմուլոս դրա-  
ցի ազգերէն խնդրեց որ իրենց աղջիկները

---

<sup>1</sup> Ժողովրդեան մեջ ինչ աստիճաններ կային :

<sup>2</sup> Ի՞նչ կերպով շատցուց Հոռմուլոս Հոռվ-  
մայ բնակիչները :

Հոռմ դրկեն . բայց երբ տեսաս որ նորա խր խնդիրը կատարել չուզեցին , խարեօքիւն բանեցուց :

1. Հրաման հանեց որ Հոռմմայ մեջ օր մի մեծ հանդես լինի , ու այն հանդիսին բոլոր զբացի քաղաքաց բնակիչները հրաւիրեց . եւ նորա , մանաւանդ Սարինացիք , իրենց կնիկներովն ու աղջիկներովը Հոռմ եկան որ հանդեսը տեսնեն : Խաղերուն առենը մինչդեռ բոլոր հանդիսատեսներուն աչքը սապարեգին վրայ էր , Հոռմմայեցի երիտասարդները յանկարծ յարձրկեցան ու ամենը մեկմեկ աղջիկ առին փախան իրենց տները : Աղջկանց ծնողքը առաջ սարսափած ձգեցին ետ փախան . բայց խելքերը գլուխները գալեն ետքը՝ սկսան Հոռմմայեցուց դեմ վրեժխնդրօքիւն անելու պատրաստուիլ :

2. Այն միջոցին Սարինացի կնիկմարդիկն ու աղջիկները իրենց նոր երիկներուն այնպես վարժեցան որ Սարինացուց զօրքը Հոռմմայե-

---

<sup>1</sup> Դրացի ազգաց հետ խնամութիւն անելու համար ինչ հնարք բանեցուց Հոռմույոս :

<sup>2</sup> Սարինացուց ու Հոռմմայեցուց պատերազմը ինչ վերջ ունեցաւ :

ցւոց վրայ եկած ատենը՝ իրենք մեջ բնական  
եւ հայրերն ու եղբայրները համոզեցին որ  
չպատերազմին. Սարինացիք այ ոչ միայն  
հաշտուեցան Հոռվմայեցւոց հետ, այլ եւ ի-  
րենց թագաւորին հետ եկան բնակեցան Հոռվ-  
մայ քովը *Կապիտոլիոն* ասուած բլրին վրայ :

1. Ետքերը Ետրուրացւոց մեծ մասն այ ե-  
կաւ բնակեցաւ Հոռվմայ քովի մեկ ուրիշ բլ-  
րին վրայ, ու այն երեք զաղքականներէն,  
այսինքն ի Հոռվմայեցւոց, Ետրուրացւոց եւ  
Սարինացւոց ձեւացաւ Հոռվմայ տերութիւնն  
ու Հոռվմայեցի ասուած ազգը :

2. Սարինացւոց Հոռվմայեցիներուն հետ  
միաբանիլը վեց տարի եղեր էր երբոր Հոռ-  
մույոս Սարինացւոց թագաւորը մեռուց, եւ  
երկու ազգին վրայ ինքը մինակ թագաւոր ե-  
ղաւ : Բայց վրան շատ ջանցաւ, ձերակոյտը  
զինքն այ սպաննեց, ու ձայն հանեց ժողո-  
վրդեան մեջ թէ Արես երկինք առեր է զՀոռ-  
մույոս :

---

<sup>1</sup> Ուրիշ ինչ ժողովուրդներ միացան Հոռվ-  
մայեցւոց հետ :

<sup>2</sup> Հոռմույոսի վերջն ինչպէս եղաւ :

1. Հոռմուլոսէն ետեւ Հոռվմայեցիք իրենց թագաւոր ընտրեցին Նուամա Պոմպիլիոս անունով Սարինացին՝ որ խոհեմ, արդար եւ կրօնասէր մարդ մի էր: Նա շատ ջանաց որ Հոռվմայեցիներն աշխատասէր եւ խաղաղասէր լինին, երկրագործութեան հիմն ալ ինքը դրաւ նոցա մէջ՝ որ մինչեւ ետքի ժամանակներն եւս ազնիւ արուեստ կհամարուէր:

2. Նուամա Պոմպիլիոս շինեց նաեւ *Basilius* ջաստուածոյն մեհեանը, եւ պարտք դրաւ ժողովրդեան վրայ որ ջերմեռանդութեամբ աղօթք անեն անոր: Հոռվմայեցիք Նուամայի խօսքէն դուրս չէին ելլեր, դրացի ազգաց հետ ալ խաղաղութեամբ եւ սիրով կվարուէին. անոր համար իրենք ալ երջանկութեան մէջ էին:

3. Երբոր խաղաղասէրն Նուամա Պոմպիլիոս մեռաւ, անոր յաջորդը Ալքայեցոց դեմ պատերազմի ելաւ, յաղթեց անոնց ու Հոռվմ բնակեցուց. իսկ անոնց քաղաքները հիմնայատակ կործանեց:

---

<sup>1</sup> Հոռմուլոսի ոմ յաջորդեց:

<sup>2</sup> Նուամա ինչ անուանի մեհեան շինեց:

<sup>3</sup> Նուամայէն վերջը ինչպէս եղաւ Հոռվմայ կառավարութիւնը:

1. Անկէ ետքը եկող թագաւորները Հռովմայ մօտիկ Սարինացւոց, Ետրուրացւոց եւ Լատինաց քաղաքներուն գրեթէ բոլորովին տիրեցին, ու անոնց բնակիչները Հռովմ բերին: Այս կերպով Հռովմ քաղաքը քանի գնաց մեծցաւ, եւ ժողովուրդն այնչափ շատցաւ որ *Սերուխոս Տուղոսի* ժամանակը, որ Հռովմայ վեցերորդ թագաւորն էր, միայն զինուորականք 80,000 հոգի էին քաղաքին մեջ:

2. Որպէս զի այն ընդարձակ քաղաքը կառավարելը դիւրին չինի, Սերուխոս Տուղոս 5 աստիճան կամ կարգ բաժնեց բոլոր Հռովմայ ժողովուրդը՝ նոցա հարստութեանը նայելով. առաջին կարգի մեջ էին ամենահարուստ քաղաքացիները, իսկ տնանկ աղքատները վերջի կարգին մեջ: Ասոնք ամենքը՝ բաց ի յետին աղքատաց՝ տուրք, զօրք, եւ զօրաց պիտոյքը տերութեան տալու պարտական էին. աւելի հարուստներն աւելի տուրք կուտային, եւ միջակները պակաս. աւելի տուրք տուողներն աւելի ալ պատիւ ու իրաւունքներ ու-

---

<sup>1</sup> Ի՞նչպէս եւ ճիշտօրէն ատենի մեջ մեծցաւ Հռովմ քաղաքը:

<sup>2</sup> Սերուխոս քանի կարգ բաժնեց Հռովմայ ժողովուրդը, եւ ինչ պարտքեր դրաւ վրան:

նէին տերութեան մեջ . իսկ այն առքատներն որ ամենեւին տուրք չէին տար՝ ամեն տեսակ քաղաքական իրաւունքներէ զուրկ էին :

1. Տեսնելով որ ազնուականները տժգոհ էին այն կարգադրութեանց վրայ, Սերուիոսի փեսան *Տարկուինիոս Գոռոզ*, որ քազաւոր լինելու աջք ունէր, օր մի բոլոր իւր բարեկամները ծերակուտին մեջ հրաւիրեց, ու ինքը յանկարծակի ելաւ քազաւորական արուք նստաւ : Այն որ տեսաւ Սերուիոս՝ ուզեց դուրս վարել զինքը ծերակուտէն, բայց Տարկուինիոս խորհրդարանին բարձր աստիճաններէն վար գլորեց Սերուիոսը մինչեւ ի հրապարակը, ու հրամայեց որ սպաննեն :

2. Տարկուինիոսի բարեկամները քակտ եւ քազաւոր ճանչցան զինքը, բայց թշնամի աշատ ունէր . մանաւանդ ծերակուտի անդամները սաստիկ կատէին Տարկուինիոսը՝ իրեն հպարտ եւ բռնաւոր բնութեանը համար : Տարկուինիոս թշնամիներէն վախնալով՝ միշտ բիկնապահներով կըքայէր՝ որ օտար ազգերէ ժող-


---

<sup>1</sup> Տարկուինիոս Գոռոզն ինչպէս քազաւորեց :

<sup>2</sup> Տարկուինիոս ինչպէս արաւ քազաւորութիւնը :

վուած էին . ժողովուրդն ալ պարապ չձգելու համար՝ Հոռովմէն դուրս շէնքեր շինել տուաւ, որոց գլխաւորներն էին Արամազդայ մեհեանն ու Կապիտոլիոնի բերդը : Մեկ կողմանէ այս կերպով ժողովուրդը կչարջարէր, միւս կողմէն ալ ծերակուտին անդամները անիրաւութեամբ ի մահ կղատապարտէր, նոցա հարստութիւնները կկողոպտէր եւ բոլոր քաղաքացւոց պէսպէս նեղութիւններ կուտար :

1. Հոռովմայեցիք Տարկուինիոսի ըրածներուն չղիմանալով՝ իշխաններէն սկսեալ մինչեւ յետին աղքատները ոտք ելան ու Հոռովմէն աքսորեցին գինքն ու իւր ընտանիքը :



---

<sup>1</sup> Տարկուինիոսի վերջն ինչպէս եղաւ :

ՀԱՍԱՐԱԿԱՊԵՏՈՒԹԻՒՆ ՀՌՈՎՎԱՍՅԵՑԻՈՑ.

(509 — 530, նախ քան գԻրխտոս).

Պատերազմ Հռովմայեցւոց ընդդէմ ԵՏՐՈՒ-  
ՐԱՅՄԱՆԵՆ ԵՒ ԼԱՏԻՆԱՅ :

*Որասխոս-Կոնկղես, Մուկխոս-Սկերոչա.*

1. Տարկուիւնիոս Հռովմայ վերջի թագաւորն եղաւ. վասն զի նորա աքսորուելէն ետքը Հռովմայ կառավարութիւնը հասարակապետութիւն փոխուեցաւ՝ այս կերպով : Ամեն տարի իշխանաց մեջէն երկու մարդ կընտրէին. մէկն զժողովուրդը կկառավարէր, եւ միւսը զօրագլուխ էր. սոքա *հիւպատոս* (լատինէրէն *քո'նսուլ*) կասուէին, ու թագաւորի պատիւ ունէին ժողովրդեան առջեւ. միայն թէ թագաւորական իշխանութիւն չունէին, այսինքն ոչ նոր օրէնք դնել կրնային, ոչ պատերազմ բանալ եւ ոչ հաշտութիւն անել. այս բաներուն իշխանութիւնը ծերակուտի ձեռքն էր :

---

<sup>1</sup> Հռովմայ կառավարութիւնը ինչ կերպով հասարակապետութիւն փոխուեցաւ :



1. Մինչդեռ Հոռովմայեցիք այս կարգադրութեանց հետ էին, Տարկուինիոս աքսորուելէն ետքը՝ Հոռովմայ հիւսիսային կողմը գնաց, Ետրուրացոց *Պորսելենա* անունով թագաւորը շատ յորդորեց ու համոզեց՝ որ Հոռովմայեցոց դէմ պատերազմի երթայ. նա ալ իւր զօրքերովը մինչեւ Տիբերիս գետին վրայ շինուած փայտե կամուրջը հասաւ, որ վրայէն Հոռովմունէ :

2. Հոռովմայեցիք տեսնելով որ պիտի ջկարենան նոցա դէմ դնել՝ քաղաքը քաշուեցան. այն ատեն *Որատիոս-Կոկղէս* անունով Հոռովմայեցի քաջ երիտասարդը՝ կայնեցաւ կամրջին մեջտեղն ու սկսաւ պատերազմիլ թշնամեաց դէմ : Հոռովմայեցիք այն քաջութիւնը տեսնելով՝ ոյժ առին, կամուրջը քակեցին, Կոկղէս ջուրն ընկաւ, ու լողալով մինչեւ Հոռովմայ եզերքն ելաւ ազատեցաւ :

3. Երբոր Ետրուրացիք իրենց բանակովը Հոռովմայ մօտեցան ու սկսան քաղաքը պաշար-

---

<sup>1</sup> Տարկուինիոս աքսորուելէն ետքը ինչ վնասարաւ Հոռովմայեցոց :


<sup>2</sup> Որատիոս-Կոկղէս ինչ քաջութիւն ցուցուց :

<sup>3</sup> Մուկիոս-Սկեռոյային վրայ ինչ կպատմուի :

րել, ուրիշ ճարտար կտրիճ մը Մուկիոս-Սկե-  
ռոչա անունով՝ հասարակ զինուորի հազուս-  
տով Ետրուրացոց բանակը գնաց, ու մինչեւ  
թագաւորին վրանը մտաւ՝ որպէս զի թագա-  
ւորն սպաննէ: Այն տեղն երկու մարդ միա-  
կերպ հազուստով նստած գտնելով, անոնցմէ  
մէկը գարկաւ մեռուց, որ Պորսեննան չէր, այլ  
հասարակ Ետրուրացի մը: Իսկոյն բռնեցին  
Մուկիոսը, հարցուցին թէ ինչ պատճառաւ  
սպաննեց Ետրուրացին: Պատասխան տուաւ  
թէ „ես Հոովմայեցի եմ, եւ անունս Մուկիոս  
„ե. իմ միտքս գրեզ սպաննել էր, ո՞վ թագա-  
„ւոր, վասն զի դու մեր թշնամին ես. զիտ-  
„ցիր որ գրեզ սպաննել ուզող երիտասարդ-  
„ներ շատ կան Հոովմայ մեջ, որ ամեն ժամ  
„կրնան սպաննել գրեզ“: Պորսեննա այն խօս-  
քերն որ լսեց, սաստիկ բարկացաւ ու հրա-  
մայեց որ իրեն խորհրդակիցները յայտնէ. ե-  
թէ ոչ՝ գրեզ ողջ ողջ այրել կուտամ, ասաց:  
Մուկիոս ձեռքը քովի կրակարանին մեջ խո-  
թեց ու դարձաւ ըսաւ թագաւորին. „Տես թէ  
Հոովմայեցիք իրենց կեանքը ինչպէս ամենե-  
ւին բանի տեղ չեն դնել“: Չարմացաւ թա-  
գաւորը այս բանիս վրայ, ազատեց զինքն եւ  
հրաման տուաւ որ Հոովմ դառնայ: Բայց Մու-  
կիոս երբայու ատենը Պորսեննայի սիրտը վախ  
ձգելու համար „Գիտցիր, ասաց, որ ինձի պէս

300 կտրիճ կայ Հոռմ, որ երդում ըրեր են գրեզ մեռցընելու: Պորսեննան վախցաւ այն խօսքերէն ու դարձաւ գնաց իւր երկիրը:

1. Տարկութիոս տեսնելով որ Ետրոբացւոց պատերազմէն իրեն օգուտ մը չեղաւ, սկսաւ Լատինները պատերազմի գրգռել Հոռվմայեցւոց դէմ. բայց Հոռվմայեցիք իրենց *դիկտատորի*, այսինքն իշխանապետին առաջնորդութեամբը, որ միանգամայն բազաւորական իշխանութիւն ունէր զօրաց վրայ՝ յաղթեցին Լատիններուն. եւ այն ժամանակէն սովորութիւն եղաւ ամէն մեծ պատերազմներու ատեն վեց ամսուան համար դիկտատոր կամ իշխանապետ մի ընտրել:



*Ազնուականաց ու ժողովրդականաց կոխները. — Տրիքուլիֆ. — Տասնապեճֆ:*



2. Ստեպ ստեպ եղած պատերազմները շատ վնասակար եղան Հոռվմայեցւոց, մանաւանդ

---

<sup>1</sup> Լատիններուն ինչ կերպով յաղթեցին Հոռվմայեցիք:

<sup>2</sup> Հոռվմայեցւոց ազնուականները ինչպէս կվարուէին ժողովրդականաց հետ:

հասարակ ժողովրդեան . պատրիկներն ալ շատ  
նեղութիւն կուտային նոցա , ու քաղաւորա-  
կան կայուածներուն եկամուտը ձեռքերը լի-  
նելով , իրենք շատ կհարստանային . իսկ հա-  
սարակ ժողովուրդը ամենեւին եկամուտ չու-  
ներ , ու երբոր պատերազմի երթային՝ իրենց  
երկիրները պատրիկներուն քով գրաւի կդնե-  
ին , անոնք ալ բոլոր երկիրները կաւրէին կա-  
պականէին . որով ժողովուրդը աղքատութեան  
մեջ ընկաւ , ու սկսաւ պատրիկներէն տոկոսով  
ստակ առնել . եւ երբ ժամանակին չկարե-  
նային իրենց պարտքը տալ , պատրիկները  
սաստիկ անիրաւութեամբ կվարուէին անոնց  
հետ :

1. Պատրիկներուն այն ըրած անիրաւու-  
թեանցը չդիմանալով հասարակ ժողովուրդը  
ոտք ելան , ձգեցին դուրս ելան Հոռովմէն , ու  
քաղաքին քովը *Նուիրակասն* կոչուած լեռան  
վրայ (որ Հոռովմայ մօտ էր) քաշուեցան , այն  
տեղ նոր քաղաք շինելու մտքով : Այս որ տե-  
սաւ ծերակոյտը , իսկոյն մեկ քանի իշխան-  
ներ խրկեց որ քաղաք դառնան , խոստանա-  
լով որ բոլոր ունեցած պարտքերը բողոսն .

---

Վ ժողովուրդը ինչպէս ազատեցաւ պատ-  
րիկներուն բռնութիւններէն :

եւ ժողովրդեան իրաւունքը պաշտպանելու համար՝ նոցա մեջէն երկու մարդ դնել տուաւ խորհրդարանին մեջ :

1. Այն խոստմունքներուն վրայ ժողովուրդը Հռովմ դարձաւ, ու իրեն պաշտպանութեանը համար ծերակուտին մեջ նախ երկու *տրիքուշ* դրաւ, յետոյ հինգ, վերջը տասը :

2. Երբոր ծերակուտին անդամները խորհուրդ անելու կ'ժողովուէին, տրիքունները դրան քովը նստած՝ նոցա խորհուրդները մտիկ կանէին. եւ եթէ մէկը ժողովրդեան վնասակար ընէր մի առաջարկեր, իշխանութիւն ունէին *արգելուշմ* (չատիներէն *վե'րօ*) ասելու. որով ծերակուտին որոշմունքները չէին կրնար ընդունելի լինել :

3. Պատրիկներուն շատը ջհանեցան ժողովրդեան այնչափ իրաւունք տրուելուն. ուստի կջանային որ տրիքուններուն իշխանութիւնը

---

<sup>1</sup> Ի՞նչ պայմանով Հռովմ դարձաւ ժողովուրդը :

<sup>2</sup> Տրիքուններն ինչ կերպով կկատարէին իրենց պաշտօնը :

<sup>3</sup> Ո՞ր պատրիկն ասելի նեղութիւն տուաւ ժողովրդեան :

ձեռքերէն առնուն: Նոցա մեջ ամենէն առելի ժողովրդեան բշնամի էր *Կորիոյանոս* անունով պատրիկը:

1. Այն միջոցին Հռովմայ մեջ սով պատահելով՝ Սիկիլիա կղզիէն ցորեն բերին. Կորիոյանոս առաջարկեց ձերակուտին որ հասարակ ժողովուրդը ջկարենայ այն ցորենէն զնել, մինչև որ տրիբուններն իրենց պաշտօնէն ջելլեն: Այս որ լսեց ժողովուրդը, սաստիկ բարկացաւ ու Կորիոյանը քննութեան տակ ձգելով՝ Հռովմէն քշեց: Կորիոյանոս սաստիկ ատելութեամբ լցուած, վոլսկեանց երկիրը գնաց, ու այն տեղը գօրք ժողովելով՝ Հռովմայեցւոց դէմ պատերազմի ելաւ. բայց մօրն ու քրոջը խնդիրքովը նորէն ետ քաշուեցաւ, ու իւր հայրենիքէն դուրս մեռաւ:

2. Կորիոյանոսի աքսորուելովը Հռովմայեցւոց մեջէն երկպառակութիւնները ջվերցան: Հասարակ ժողովուրդը կպահանջէր որ գրաւոր ու հաստատուն օրէնքներ դրուին ոջ միայն

---

<sup>1</sup> Կորիոյանոսին հետ ինչպէս վարուեցաւ ժողովուրդը:

<sup>2</sup> Կորիոյանոսի աքսորուելով խաղաղութիւն եղամ. Հռովմայեցւոց մեջ:

իրենց, այլ եւ պատրիկներուն: Այս բանիս պատրիկները առաջ դեմ կեցան, վասն զի զիտեին թէ իրենց իշխանութիւնն անով պիտի պակսի. բայց տեսնելով որ ժողովուրդը ոտք կկոխէ, պետք եղաւ որ քանի մը մարդ զրկեն Աթենք՝ անկեց օրենք քերելու:

1. Այն օրենքները Հռովմայեցիք իրենց յարմարցընելու մտքով՝ տասը հոգի նշանակեցին որ *Տասնապետք* կոչուեցան. ասոնք օրենք յօրինելէն զատ՝ հիւպատոսի ու տրիբունի իշխանութիւն ալ ունեին, վասն զի այն միջոցին այն իշխանութիւնները վերցուած էին Հռովմէն:

2. Այն օրենքները տասուերկու հատ էին. տախտակներու վրայ գրուեցան ու հրապարակի մեջ զրուեցան, որպէս զի ամէն մարդ կարդայ զանոնք:

3. Տասնապետները բաւական ժամանակ կառավարեցին Հռովմայ ժողովուրդը. բայց ետ-

---

<sup>1</sup> Հռովմայեցւոց օրենքներն ո՞վ կարգի դրաւ:

<sup>2</sup> Ի՞նչպէս հրապարակուեցան Հռովմայեցւոց օրենքները:

<sup>3</sup> Տասնապետները ո՞րչափ ժամանակ կառավարեցին զՀռովմ:

քերը այնչափ նեղութիւն տուին հասարակ ժողովրդեան՝ որ բոլոր տասնապետներն սպանուեցան, ու նոցա տեղը նորէն հիւպատոսներ եւ տրիբուններ դրուեցան :

---

### Գաղղիացւոց Հոովմ արշաւելը.

---

1. Մինչդեռ պատրիկներն ու ժողովուրդը երկպառակութեան մեջ էին, դրացի ազգերը անդադար պատերազմի կելլէին Հոովմայեցւոց վրայ : Բաջ Հոովմայեցիք ամեն անգամ յաջողութեամբ կվարէին զանոնք. բայց ետքերը այնպիսի զօրաւոր թշնամի եկաւ վրաներն որ անկարելի եղաւ նորա յաղթել :

2. Այն ատենները այժմեան Գաղղիոյ մեջ պատերազմասէր եւ զօրաւոր ազգ մի կար որ *Կեղտք* կամ *Գաղղիացիք* կասուէին : Սոքա

---

<sup>1</sup> Իրսի ազգերէն ինչ նեղութիւն կրեցին Հոովմայեցիք :

<sup>2</sup> Գաղղիացիք ո՞վ էին, եւ ինչ կերպով արշաւեցին Հոովմայ վրայ :



նիւսիսային Իտալիոյ կողմերը նուաճելէն ետ-  
քը՝ Ետրուրացոց վրայ պատերազմի ելան :  
Հռովմայեցիք Ետրուրացոց դաշնակից լինե-  
լով՝ փութացին օգնել նոցա : Գաղղիացոց  
Բրեննոս զօրապետը այն որ իմացաւ, զօրքե-  
րը ժողվեց ու գնաց Հռովմ քաղաքն առաւ .  
մեջի բնակիչներն ալ քաղաքը մնացած զօր-  
քերուն հետ կապիտուլիոնի բերդը փախան որ  
Տարկուինիոս Գոռոզը շինել տուած էր . իսկ  
Հռովմայ մեջ միայն ծերակուտի անդամները  
մնացին, որ իրենց պահեստի հազուատները  
հազած ու տներուն դիմացը նստած՝ իրենց  
հայրենեացը համար մեռնելու պատրաստ կե-  
ցեր էին :

1. Գաղղիացիք երբոր քաղաք մտան ու տե-  
սան այն ծերունիները, շատ զարմացան, կար-  
ծելով թէ նոքա մեկմեկ աստուածներ կամ  
կուռքեր են . բայց երբ այն ծերունիներէն  
մեկը Գաղղիացոյն մեկուն գլխին գաւազանո-  
վը գարկաւ՝ մօրուքը շփածին համար, զայրա-  
ցան Գաղղիացիք, ու զամենքը թրէ անցուցին,  
քաղաքին ալ կրակ տուին այրեցին :

---

<sup>1</sup> Ի՞նչ առիթով եւ ինչպէս ջարդեցին Գաղ-  
ղիացիք Հռովմի ժողովուրդը :

1. Բրեննոս ուզեց նաեւ Կապիտուլիոնը առնել. բայց այն բերդը ամուր պարսպով պատած լինելով, պէտք եղաւ որ պաշարմամբ առնէ: Կպատմեն թէ պաշարման ատենը մեկ քանի Գաղղիացիք զիշերով պատին վրայէն ներս մտեր եւ ուզեր են բերդին դուռը բանալ: Այս բանս Հռովմայեցիք չեն տեսած՝ զիշերուան սաստիկ մթութենէն. բայց նոցա քով եղած սազերը սկսեր են աղաղակել. բերդի պահապաններն ալ արբըննալով, թշնամեաց վրայ հասեր ու զանոնք ժայռէն վար գլորեր են:

2. Կապիտուլիոնի պաշարումը եօթը ամիս քշեց. բայց ետքերը սովն ու հիւանդութիւնը այնպէս տիրեր էին բերդին մեջ՝ որ Հռովմայեցիք հարկադրեցան հաշտութիւն անելու՝ Գաղղիացւոց հազար լիտր ոսկի տալով:

3. Մինչդեռ ոսկին կշռելու վրայ էին՝ Բրեննոս զօրապետը իւր թուրն ալ կշիռքին մեջ դրաւ, ու անոր քաշովն ալ ոսկի կպահանջեր:

---

<sup>1</sup> Կապիտուլիոն բերդը ինչպէս ուզեց առնուլ Բրեննոս:

<sup>2</sup> Կապիտուլիոնի պաշարումը ո՞րչափ ատեն քշեց:

<sup>3</sup> Գաղղիացիք ինչպէս դուրս քշուեցան Հռովմէն. — Ո՞վ ազատեց զՀռովմայեցիս Գաղղիացւոց ձեռքէն:

Այս միջոցին յանկարծ Հոռվմայեցի Կամիլլոս  
զօրապետը իւր զօրքերովը վրայ հասաւ ու  
Փաղղիացւոց զօրացը մեծ ջարդ տալով՝ Հոռվ-  
մայ սահմաններէն դուրս վարեց զանոնք :

1. Այն յաղթութենէն վերջը խեղճ Հոռվմայե-  
ցիք ուզեցին Ետրուրացւոց երկիրն երթալ ու  
իրենց բնակութիւնը այն տեղ հաստատել, ո-  
րովհետեւ իրենց քաղաքը բոլորովին այրած  
ու աներակ դարձած էր . բայց Կամիլլոս խօսք  
անցուց նոցա՝ որ Հոռվմ երթան ու նորէն շի-  
նեն քաղաքը . Հոռվմայեցիք ալ հնազանդե-  
ցան, ու եկան նորէն Հոռվմ քաղաքն սկսան  
զարդարել :

2. Այն պատերազմին վնասները դեռ չան-  
ցած, պատրիկներուն ու ժողովրդեան մեջ  
կռիւները նորէն սկսան, եւ այն ատենը միայն  
դադարեցան՝ երբոր պատրիկներուն եւ ժողո-  
վրդեան իրաւունքներն ու արտօնութիւնները  
հաւասար եղան : Նոյն ժամանակէն սկսան  
նաեւ հասարակ ժողովրդէն դիկտատորներ ու  
հիւպատոսներ ընտրել :

---

<sup>1</sup> Հոռվմ ինչ կերպով շէնցաւ Փաղղիացւոց  
արշաւանքէն ետքը :

<sup>2</sup> Փաղղիացւոց արշաւանքէն ետքը Հոռվ-  
մայեցիք խաղաղութեամբ ապրեցան :

Ս Ա Մ Ն Ի Ա Յ Ի Ո Ց Պ Ա Տ Ե Ր Ա Ջ Մ Ը

(343 — 320 ն. ք. գ՛րքիստ.)

---

ԱՐԵԱԼԱՆԻ ՊԻՆՈՍԻ .

( 282 — 277 )

Դեկիտս . — Փաքրիկիտս .

---

1. Հոռվմայեցիք Գաղղիացւոց պատերազմեն ետքը երբ փոքր մի զօրացան, զօրք ժողվեցին եւ նորեն պատերազմի ելան : Հոռվմայ մօտ եղող ազգաց մեջ ամենեն ուժով ու ամենեն վտանգաւոր դրացիները՝ պատերազմասեր Սամնիացիքն էին, որոց երկիրն այժմեան Ապենեալե ասուած լեռներուն մեջն էր : Սոցա դեմ Հոռվմայեցիք 70 տարիի ջափ պատերազմ արին :

---

<sup>1</sup> Գաղղիացւոց երթալեն ետքը ո՛ր ազգին հետ պատերազմ ունեցան Հոռվմայեցիք :

1. Սկիզբները Հոռվմայեցիք յաղբեցին Սամնիացոց. բայց երբ Լատիններն ալ Հոռվմայեցոց վրայ ընկան՝ Սամնիացիք այն միջոցին քիչ մը սիրտ առին ու գորացան :

2. Լատինաց ու Հոռվմայեցոց գորքերը Վեսուլ լեռան ստորոտը մեկմեկու դիմաց ելան, պատերազմին բորբոքած ատենը *Դեկիոս* անունով Հոռվմայեցին յարձրկեցաւ. թշնամեաց վրայ, եւ այնպիսի շփոթութիւն ձգեց մեջերն որ բոլորովին յաղթուեցան Լատինք :

3. Այն պատերազմէն ետքը երկու անգամ եւս պատերազմեցան Լատիններուն դեմ, ու երկու անգամին ալ յաղթողները Հոռվմայեցիք եղան : Սամնիացիք այն յաղթութիւնները տեսնելով՝ սկսան նախանձիլ Հոռվմայեցոց վրայ, ու նորէն պատերազմ բացին անոնց դեմ :

Այն երկրորդ պատերազմին ալ նախ Հոռվմայեցիք յաղբեցին. բայց յետոյ Սամնիացիք խարեութեամբ այնպիսի նեղ կրճի մը մեջ ձգե-

---

<sup>1</sup> Հոռվմայեցոց ու Սամնիացոց պատերազմին մեջ յաղթողն ո՞վ եղաւ :

<sup>2</sup> Դեկիոսի քաջութիւնն ինչպէս երևցաւ :

<sup>3</sup> Լատիններուն պատերազմը ինչպէս եղաւ. Հոռվմայեցոց նկատ :

ցին Հոռվմայեցիներն՝ որ կամ ամենքը պիտի մեռնէին բշնամիներէն, կամ անձնատուր պիտի լինէին: Հոռվմայեցւոց զօրագլուխները, որ երկու հիւպատոսք էին, իրենց զօրքովը անձնատուր լինել յանձն առին, եւ ի նշան այս հնազանդութեան՝ պետք եղաւ որ մերկ թրի տակ անցնին (\*):

1. Բայց վրան շատ ջանցաւ, Հոռվմայեցիք ըստ կամաց ծերակուտին՝ նորէն Սամնիացւոց վրայ պատերազմի եղան: Առջի զարնուածքին յաջողութիւն չունենալով՝ Սամնիացիք Եւրուրացւոց եւ Գաղղիացւոց հետ միացան, որպէս զի կարենան դէմ դնել բշնամիներուն: Բայց Հոռվմայեցիք ամեն տեղ անոնց զօրքերը կոտորեցին ու Սամնիացւոց երկիրը տակն ու վրայ արին:

2. Այն պատերազմներով Հոռվմայեցիք բո-

---

(\*) Մերկ թուր ասուածը երեք նետէ ճեւացած դուռ մի էր. երկու նետերուն ծայրը զետինը խորած, եւ միւսը այն երկուքին վրայ երկնցուցած, անոր տակն անցնիլը նշան էր անձնատուր լինելու:

<sup>1</sup> Սամնիացւոց պատերազմը ինչ կերպով վերջացաւ:

<sup>2</sup> Ինչ պատճառաւ Եպիւռացւոց բազաւորը պատերազմի եղաւ Հոռվմայեցւոց դէմ:

լոր միջին ու հարաւային Իտալիոյ տիրեցին .  
բայց որովհետեւ հարաւային Իտալիան Յոյն  
գաղթականաց ձեռքն էր , Յունաստանի Եպի-  
սոս նահանգին Պիւռոս անունով քաղաքը  
վրեժխնդիր եղաւ անոնց համար , ու քսան եւ  
հինգ հազար զօրքով եւ քսան փղով Իտալիա  
եկաւ որ անոնց օգնէ :

1. Հռովմայեցիք բեպետ քաջութեամբ պա-  
տերազմեցան Պիւռոսի զօրացը դէմ , բայց հե-  
ծելագօրաց ձիերը փիղերէն վախնալով՝ ետ  
փախան . անով Հռովմայեցւոց զօրքին մեջ շը-  
փոթութիւն ընկաւ ու յաղթուեցան : Այն ժա-  
մանակը Պիւռոս հաշտութեան պայմաններ ա-  
ռաջարկեց Հռովմայեցւոց . բայց Հռովմայեցիք  
հաշտութեան անունն անգամ չուզեցին լսել :

2. Այն միջոցին Հռովմայ հիւպատոսը Փար-  
րիկիոս անունով խոհեմ , ազնուարարոյ եւ  
անաչառ մարդն էր : Պիւռոս կաշառք խոս-  
տացաւ անոր՝ որ Հռովմայեցիներուն խօսք  
հասկըցնէ հետը հաշտուելու . բայց Փարրի-

---

<sup>1</sup> Հռովմայեցիք ինչպէս պատերազմեցան  
Պիւռոսի դէմ :

<sup>2</sup> Փարրիկիոսի արդարասիրութիւնը ինչ առ-  
թով յայտնի եղաւ :

կիոս ոչ միայն կաշառքը չառաս, այլ եւ երբոր Պիւռոսին բժիշկը նամակով առաջարկեց իրեն որ եթէ ստակ տան ուզածին չափ՝ պատրաստ է Պիւռոսին բոյն խմցընելու, Փարբիկիոս այն նամակը խսկոյն Պիւռոսին դրկեց : Պիւռոս այն ուղղութիւնը տեսնելով՝ ասաց զարմացմամբ . « Ասելի դիւրին է արեգական ճանապարհը փոխել տալ, քան թէ Փարբիկիոսին ծուռ բան մը անել տալ » :

1. Անկեց վերջը եղած երկու պատերազմին մէջ ալ Պիւռոս յաղթեց . բայց երբորդին ատենը երբոր փղերը նորէն պատերազմին մէջ մտան, Հռովմայեցիք ջահերով վրայ վազեցին . փղերն ալ այն կրակէն վախնալով՝ խրտեցան ու իրենց վրայ եղած զինուորները վար ձգեցին՝ ետ փախան ու մեծ շփոթութիւն ձգեցին Պիւռոսին զօրացը մէջ . Հռովմայեցիք բնկան նոցա վրայ ու սկսան անխնայ ջարդել, եւ Պիւռոս մնացած զօրքովը փութացաւ Իտալիայէն դուրս ելլելու :

---

<sup>1</sup> Պիւռոս ինչ կերպով յաղթուեցաւ Հռովմայեցիներէն :



ԱՌՍԶԻՆ ՊՈՒՆԻԿԵԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

( 261 — 211 ).

Հ ո ե գ ո շ ղ ո ս .

1. Հոռվմայեցւոց հասարակապետութիւնը , ինչպէս որ առաջ տեսանք , անդադար պատերազմ ունէր , մերթ Գաղղիացւոց , Ետրուրացւոց , եւ Լատինաց ղեմ , եւ մերթ Սամնիացւոց եւ Յունաց գաղթականներուն ղեմ : Այն պատերազմներով 250 տարուան մեջ Հոռվմայեցիք բոլոր Իտալիոյ տիրեցին , ու երեւելի եւ զօրաւոր ազգ եղան : Բայց անով չբաւականացան . քիչ ժամանակէն Ափրիկէ անցան , ու այն տեղն եւս սկսան պատերազմիչ :

1 Հոռվմայեցիք ո՞ր ազգաց ղեմ պատերազմ ունէին :

1. Իտալիոյ դիմացը Ափրիկէի եզերքը Հռովմայ ժամանակակից քաղաք մի կար *Կարքեղոն* կամ *Կարքազիսէ* անուանով, որ Քրիստոսէ 900 տարի առաջ Տիւրոսի բազաւորին *Դիդէ* քոյրը հիմներ էր :

2. Իսկզբան Կարքեղոնացիք հպատակ էին Լիբեացոց. բայց քանի մը հարիւր տարի անցնելէն ետքը՝ երեսելի տերութիւններէն մէկն եղան : Այն ատենները շատ զօրք եւ մեծ նաւատորմիդ ունէին, որով իրենց քովի երկիրներուն ու Միջերկրական ծովուն մէկ քանի կղզիներուն դիւրաւ տիրեցին. մինչեւ Սպանիոյ մէջ եւս գաղթականներ ունէին :

3. Կարքեղոնի կառավարութիւնը ծերակուտի ձեռք էր, որոյ մէջ 30 իշխան կար. եւ սոցա գլուխ դրուած էին երկու դատաւորք :

4. Կարքեղոնացիք եւ Հռովմայեցիք քանի որ կամեծնային՝ այնչափ աւելի նոր նոր եր-

---

<sup>1</sup> Ո՞ւր էր Կարքեղոն :

<sup>2</sup> Կարքեղոնացիք ինչպէս մեծցան :

<sup>3</sup> Իրենց կառավարութիւնն ինչպէս էր :

<sup>4</sup> Առաջին Պունիկեան պատերազմին պատճառն ինչ էր. — Ինչո՞ւ համար այն պատերազմները Պունիկեան ասուեցան :

կիրներու տիրապետել կուգին : Երկուքին աչքն ալ գեղեցիկ եւ բարեբեր Սիկիլիա կըղգուոյն վրայ եր :

Այն կղզուոյն մեջ Իտալիայէն եկած վարձուոր զօրքեր կային՝ որ *Մամերտացիք* կասուէին . սոքա Սիկիլիոյ Մեսինա քաղաքին վրայ յարձակեցան , ու սկսան կղզուոյն բնակիչները կողոպտել : Սիրակուսայի բնակիչներն այն անկարգութիւնները դադրեցրնել ուզեցին . Մամերտացոց մէկ մասը օգնութիւն խնդրեց Կարքեղոնացիներէն , իսկ միւս մասը Հոռովմայեցիներէն : Ասոր վրայ Հոռովմայեցոց զօրքը մտաւ Սիկիլիա , ու Մեսինայէն Կարքեղոնացիները վարելէն ետեւ՝ քաղաքին տիրեց : Եւ այսպէս Կարքեղոնացոց եւ Հոռովմայեցոց մեջ պատերազմ սկսաւ , որ շատ տարիներ քշելէն ետքը՝ Կարքեղոնի կործանմամբը վերջացաւ : Այն պատերազմները *Պուլնիկեան* ասուեցան , որովհետեւ Կարքեղոնացիները *Պուլնիացիք* կամ *Փիւլնիկեցիք* եւս կկոչուէին :

1. Հոռովմայեցիք Կարքեղոնացոց դէմ պատերազմելու համար հարկադրեցան նաւատոր-

---

<sup>1</sup> Ծովու վրայ ինչպէս կըցան Հոռովմայեցիք պատերազմիլ :

միդ ունենայու, որ կարող լինին նոցա հետ  
գլուխ ելել. վասն զի Կարքեղոնացիք բաւա-  
կան ոյժ ունեին ծովու վրայ: Պատերազմը  
սկսածին սկս' երկու ամսուան մեջ նաւեր  
շինեցին. բայց որովհետեւ ծովու վրայ կռուիչ  
չգիտեին, գործիք մի հնարեցին, որով բըշ-  
նամեաց նաւերը կկարքէին ու ծովուն վրայ  
իբրեւ ի ցամաքի կպատերազմէին:

1. Առաջին պատերազմին Հռովմայեցւոց  
*Գուիլլիոս* հիւպատոսը յաղբեց Կարքեղոնա-  
ցւոց, ու Սիկիլիա կղզին ձեռքերէն առաւ.  
յետոյ Հռովմայեցիք իրենց նաւատորմիդով  
Հռեգուդոսին առաջնորդութեամբը Ափրիկե  
անցան ու Կարքեղոնացւոց երկիրը մտան:  
Կարքեղոնացիք չկրնալով դէմ դնել նոցա,  
հարկադրեցան Սպարտացիներէն զօրք վար-  
ձել: Նոցա օգնութեամբը յաղբեցին Հռովմայե-  
ցւոց, եւ Հռեգուդոս զօրապետը գերի բռնե-  
ցին. չորս տարի իրենց քով պահելէն ետքը՝  
արձրկեցին որ իր հայրենիքը դառնայ, որպէս  
զի Հռովմայեցիները իրենց հետ հաշտեցրնելու  
աշխատի. բայց խօսք առին իրմէ որ երե  
հաշտեցրնելու հնարքը չգտնէ՝ դառնայ զայ  
նորէն Կարքեղոն:

---

<sup>1</sup> Գուիլլիոս ու Հռեգուդոս զօրավարներուն  
ձեռքովն ինչ ըրին Հռովմայեցիք:

1. Հոեգուդոս Հոովմ դարձաւ, ու փոխանակ հաշտութեան՝ Կարքեղոնացւոց դէմ պատերազմի կյորդորեր զամենքը՝ ասելով. „Կարքեղոնացիք ամենեւին ոյժ չունին, եւ նոցա յաղքելը շատ հեշտ է“։ Իսկ ինքը խօսքին վրայ հաստատ կենալով՝ նորէն դարձաւ Կարքեղոն, ուր եւ ծանր տանջանքներով սպաննուեցաւ։

2. Հոովմայեցիք նորէն մեծ նաւատորմիդ յօղարկեցին Կարքեղոնացւոց դէմ։ Կարքեղոնացիք եւս իրենց կողմանէ աղէկ պատրաստութիւն տեսած էին, ուստի հարկաւ երկար քշեց պատերազմը, յորում երբեմն մեկը կը ջաղքեր, եւ երբեմն միւսը։ Վերջապէս Հոովմայեցիք գլուխ եղան, ու ծանր ծանր պայմաններով հաշտութիւն արին. անով Կարքեղոնացիք ոչ միայն Սիկիլիա կղզին ձեռքելին հանեցին, այլ եւ շատ ստակ տուին Հոովմայեցւոց (264-241)։

---

<sup>1</sup> Հոեգուդոսի վերջն ինչպէս եղաւ։

<sup>2</sup> Ի՞նչ կերպով վերջացաւ առաջին Պունիկեան պատերազմը։

ԵՐԿՐՈՐԴ ՊՈՒՆԻԿԵԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

( 218 — 201 ).

Ս.ՆՆԻՔԱՊ, ՍԿԻԱՅԻՈՆ ԱՎԵՐԻԿԵՅԻ.

1. Կարքեղոնացիք իրենց անյաջող պատերազմեն ետքը շատ առքատացան: Նորեն հարստանալու եւ ոչ ժ առնելու համար՝ Սպանիացոց դէմ պատերազմ բացին, որպէս զի այն տեղի հարստութիւնները ձեռք ձգեն. որովհետեւ լսած էին թէ Փիւնիկեցիք ժամանակով Սպանիայէն շատ արծաթ բերած են: Կարքեղոնացիք 16 տարուան մեջ Սպանիոյ մեծ մասին տիրեցին: Հռովմայեցիք նոցա վրայ նախանձելով՝ կատիպէին Կարքեղոնացիքը որ Սպանիոյ պատերազմը դադրեցընեն. բայց Կարքեղոնացիք նոցա առաջարկութեանը չընայեցան ու բոլոր Սպանիոյ տիրեցին: Այն ատեն Հռովմայեցիք նորեն պատերազմի ելան, եւ անով սկսաւ *Երկրորդ Պունիկեան պատերազմը*, որ 17 տարի քշեց:

---

<sup>1</sup> Երկրորդ Պունիկեան պատերազմէն առաջ Կարքեղոնացիք ինչ վիճակի մեջ էին:

1. Այն պատերազմին ատենը Կարքեղոնացւոց գորագլուխը քաջն Աննիրաղ էր: Սորա հայրը Ամիլկար, Սպանիոյ պատերազմին մեջ Կարքեղոնացւոց գորագլուխ եղած ատենը՝ որդին եւս հետն առած էր, որ այն ժամանակը 9 տարեկան տղայ էր: Ամիլկար Սպանիա երթալէն առաջ՝ երդում անել տուած էր որդւոյն որ մինչեւ մահը թշնամի լինի Հոռովմայեցւոց: Աննիրաղ այն երդումը ճիշդ կերպով կատարեց:

2. Հոռովմայեցիք զիտնալով որ Աննիրաղ անպատճառ պիտի պատերազմի իրենց դէմ, նաւատորմիդ յուղարկեցին Միջերկրական ծովը, որպէս զի առջեւն առնուն. քայց Աննիրաղ այնպիսի ճամբով մի եկաւ որ մեկուն խելքէն չէր անցներ: 60,000 զօրքով Պիրենեան լեռներուն վրայէն Գաղղիա մտաւ, անկեց Ալպեան ձիւնապատ լեռներէն անցնելով՝ յանկարծակի Իտալիա իջաւ. քայց այն ետքի անցքին ատենը Աննիրաղայ զօրքին կեսէն աւելին փճացաւ. վասն զի զինուորներէն ոմանք ձիւներուն մեջ կրաղուէին կմնալին, ոմանք

---

<sup>1</sup> Կարքեղոնացւոց գորագլուխն ո՞վ էր:

<sup>2</sup> Ի՞նչ կերպով եւ որչափ զօրքով Աննիրաղ Իտալիա մտաւ:

խորունկ փոսերու մեջ կիյնային ու հոն կը-  
մեռնէին, շատն այ ցուրտէն կապաղէին կը-  
մնային. այս կերպով 34,000 զինուոր կորան  
Ալպեան լեռներուն վրայ, ու միայն 26,000-ը  
յոզնած դադրած՝ կրցան մտնել Իտալիա :

1. Հռովմայեցիք Աննիբաղին Իտալիա մը-  
տածն որ խնացան՝ փութապէս զօրք ժողովե-  
ցին ու դիմացն ելան : Աննիբաղ զանոնք ջա-  
րաջար կոտրելէն ետեւ, երկու անգամ եւս  
վրան եկող զօրքերուն յաղթեց ու զնաց Հռով-  
մայ մօտեցաւ :

2. Հռովմայեցիք նորէն զօրք ժողովեցին, ու  
խեղացի եւ պատերազմափորձ Փարիոսը՝ որ  
դիկտատոր էր՝ սպարապետ դրին : Փարիոս  
Աննիբաղայ դէմ ազատօրէն պատերազմելէն  
վախնայով՝ ասդիս անդին կփախչրտեր . Ան-  
նիբաղ այ ետեւէն քայելով՝ զնաց նեղ կիրճ  
մի մտաւ : Հռովմայեցիք կրճին ելքերը փակե-  
ցին, ու կարծեցին թէ կարքեղոնացիները  
բռնուեցան : Բայց Աննիբաղ դուրս ելլելու  
ճարը գտաւ :

---

<sup>1</sup> Հռովմայեցիք Աննիբաղայ դէմ ինչ պատ-  
րաստութիւն արին :

<sup>2</sup> Փարիոս ինչ կերպով վարուեցաւ Աննիբա-  
ղայ հետ :



1. Հետը որչափ որ եզ ունէր՝ մեկտեղ ժողովեց, ամեն մեկուն եղջիւրներուն վրայ ջորխտա կապեց ու զիշեր ատեն ի՞նչտերուն կրակ տուաւ: Եզները կրակէն ու լուսէն խրտած զայրացած՝ Հոռվմայեցոց զօրքերուն վրայ վազեցին, որ կրճին բերանները բռնած էին. նոքա ալ զիշերուան մութին այն վառած խտտերը երկնային կրակ կարծեցով՝ սարսափեցան ու ցիրուցան եղան: Այն ատեն Աննիբաղ կրճէն դուրս ելաւ ու Հոռվմայ շրջակայ տեղերը այրեց աւերեց:

2. Փարիոսին տեղը Հոռվմայեցիք ուրիշ զօրապետ դրին, բայց նա եւս բան մի չկրցաւ անել: Աննիբաղ Մակեդոնացոց օգնութեամբը Հարաւային Իտալիոյ մեջ Կաննէ քաղաքին քովը՝ նորէն սաստիկ ջարդ տուաւ Հոռվմայեցոց. այն պատերազմին մեջ 50,000 Հոռվմայեցի մեռաւ:

Այնպիսի յաղթութիւններէն ետքը Աննիբաղայ անունը այնչափ ահարկու եղաւ. Իտալիոյ մեջ՝ որ մինչեւ մանր տղայքը վախցրնելու համար՝ մայրերը նորա անունը կուտային:

---

1 Ինչ հնարքով ազատեցաւ Աննիբաղ Փարիոսի պաշարմանէն:

2 Կաննէի պատերազմին մեջ յաղթողն ո՞վ եղաւ:

1. Վերջի պատերազմին Աննիբադ ինքն ալ քառական մարդ կորսնցուց, եւ մնացեալ զօրքովք հարկադրեցաւ Իտալիոյ հարաւային ծայրը երբայու. եւ որովհետեւ Կարքեդոնէն օգնութիւն չարին իրեն, 16 տարի այն տեղը մնաց առանց պատերազմի:

2. Այն երկար միջոցին Հռովմայեցիք դարձեալ զօրացան, նորէն զօրք ժողվեցին ու Սկիպիոն Ափրիկեցւոյն առաջնորդութեամբը Սպանիա յուղարկեցին: Սկիպիոն բոլոր Սպանիոյ տիրելէն ետքը՝ իւր զօրքովք Ափրիկեանցաւ: Կարքեդոնացիք նեղը մտնելով՝ Աննիբադը Իտալիայէն կանչեցին, բայց բուն առաջին պատերազմին մեջ եւս Սկիպիոն կոտորեց անոր զօրքը, որով ստիպուեցան Կարքեդոնացիք հաշտութիւն խնդրելու՝ այս պայմաններովս. Կարքեդոնացիք պիտի տային Հռովմայեցւոց բոլոր իրենց նաւերն ու փիղերը, եւ շատ փող, անկէ զատ, խօսք տուին որ առանց Հռովմայեցւոց ճրամանին պատերազմ չբանան ուրիշներու հետ (218—201):

---

<sup>1</sup> Ի՞նչ պատճառաւ Աննիբադայ գործը միջեւ վերջը յաջող չգնաց:

<sup>2</sup> Սկիպիոն Ափրիկեցին ինչ քաջութիւններ արաւ Կարքեդոնացւոց դէմ:

Հոովմայեցոց Մակեդոնիոյ եւ Յու-  
նաստանի տիրելը, ու Պունիկեան եր-  
րորդ պատերազմով Կարֆեդոնի կործա-  
նումը :

1. Հոովմայեցիք երկրորդ Պունիկեան պա-  
տերազմին յաջողութենէն սիրտ առած, նորա-  
նոր աշխարհակալութեանց ետեւ եղան : Նախ  
Մակեդոնացոց դէմ պատերազմ բացին (197) :  
Սոցա վրայ Հոովմայեցիք ռի ունէին՝ Սանի-  
բադին Կաննէի պատերազմին ատենը օգնու-  
թիւն տուածներուն համար :

2. Հոովմայեցիք Մակեդոնացոց երկու ան-  
գամ յաղթեցին, եւ նոցա երկիրներուն տի-  
րեցին, որով բոլոր Մակեդոնիան Հոովմայ  
տերութեան մէկ գաւառն եղաւ (148) : Վրան  
երկու տարի անցնելէն ետեւ՝ Հոովմայեցիք Յու-  
նաստանի եւս տիրեցին, եւ այն տիրապետու-  
թիւնը դիւրաւ եղաւ, վասն զի այն երկրին մեջ

---

<sup>1</sup> Ի՞նչ պատճառաւ պատերազմ բացին Հոով-  
մայեցիք Մակեդոնացոց դէմ :

<sup>2</sup> Ի՞նչպէս տիրեցին Մակեդոնիոյ եւ Յու-  
նաստանի :

Մեծին Առեքսանդրի մահուանն ետքը երկ-  
պառակութիւնն ու անկարգութիւնը պակաս-  
ջեին :

1. Յունաստանի տիրելէն ետքը՝ Հռովմայե-  
ցոց զօրքը Սկիաքիոնի առաջնորդութեամբը  
Սսիա եւս անցան, ու Սնտիոքոսի տերութեան  
մեծ մասին տիրեցին : Այն միջոցին Կարքե-  
դոնացիք նորէն սկսան զօրանալ. Հռովմայե-  
ցիք եւս շատոնց ռիս պահած լինելով անոնց  
վրայ՝ պատճառ կփնտռեին որ կործանեն Կար-  
քեդոնը :

2. Նոյն ատենը նաեւ Հռովմայեցոց նիգա-  
կակից Նումիդացոց Մասինիսա թագաւորը  
Կարքեդոնացոց վրայ արշաւեց. եւ գիտնա-  
լով թէ Կարքեդոնացիք առանց Հռովմայեցոց  
նրամանին ուրիշի նետ պատերազմիչ չեն կր-  
նար՝ սկսան նոցա քաղաքներուն մեկմեկու  
ետեւ տիրել : Կարքեդոնացիք ի սկզբան համ-  
բերեցին, բայց յետոյ հարկադրեցան իրենք  
զիրենք գէնքով պաշտպանելու :

---

<sup>1</sup> Ի՞նչ կերպով Սսիոյ տիրել սկսան Հռով-  
մայեցիք :

<sup>2</sup> Երրորդ Պունիկեան պատերազմին սրտ-  
ճառն ինչ էր :

1. Հոռվմայեցիք այն պաշտպանութիւնը դաշ-  
նադրութեան պայմանին դեմ համարելով՝ պա-  
տերազմ հրատարակեցին Կարքեղոնացւոց վը-  
րայ, եւ պահանջեցին որ բոլոր ունեցած գէն-  
քերն ու նաւատորմիդը իրենց տան. Կարքե-  
ղոնացիք եւս սարսափած՝ փութապէս կատա-  
րեցին անոնց պահանջմունքը: Բայց երբ խնա-  
ցան թէ Հոռվմայեցւոց միտքը Կարքեղոնը բո-  
լորովին կործանել է, կատաղեցան, եւ մտքե-  
րը դրին որ գոհ լինին իրենց հայրենեացը:  
Սկսան գօրք ժողովել, զանազան մետաղներէ  
գէնքեր շինել, տուները աւրել ու անոնց մեջի  
տախտակներէն նաւեր շինել, մինչեւ կանայք  
եւս իրենց գլխուն մազերը կտրեցին՝ աղեղի  
լար շինելու համար. մեկ խօսքով՝ ամեն մարդ  
ձեռքէն եկածը ջեր խնայելը հայրենեաց պաշտ-  
պանելու համար:

2. Մինչդեռ Կարքեղոնացիք այն սրատրաս-  
տութեանց հետ էին՝ Հոռվմայեցիք Ափրիկէ  
անցան (149—146), եւ Կարքեղոնը երկու տա-  
րի պաշարելէն ետեւ՝ վերջապէս մտան մեջը,  
վեց օր սաստկապէս պատերազմելով՝ կէս մի-

---

<sup>1</sup> Ի՞նչ կերպով իրենք գիրենք պաշտպանե-  
ցին Կարքեղոնացիք Հոռվմայեցւոց դեմ:

<sup>2</sup> Կարքեղոնի կործանումն ինչպէս եղաւ:

լիոնէն աւելի քաղաքացի կոտորեցին, քաղաքին ալ կրակ տուին : Այն հրդեհը 17 օր քշեց, որով գեղեցիկ եւ ընդարձակ կարքեղոն քաղաքը մոխիր դարձաւ : Քաղաքին ողջ մնացած բնակիչներն եւս, որ 40,000 հոգիի կհասնէին, գերի տարուեցան :

Այսպէս վերջացաւ երրորդ եւ վերջին Պոսիկեան պատերազմը :

---

Հռոմէացեաց մէջ հոր անկարգութիւններ եւ երկպառակութիւններ ընկնիլը :

---

### Գրականութեան.

1. Հռոմէացեցիք Ասիացեաց դէմ պատերազմելով՝ նոցա գեղխութեանը վարժեցան, որ մինչեւ այն ատենը չունէին : Այնպիսի կենցաղավարութիւնը թեպէտ եւ մեծ ծախքի դուռ էր՝ բայց իրենց փոյթը չէր, որովհետեւ թշնա-

---

<sup>1</sup> Ասիոյ պատերազմները ինչ վնաս բերին Հռոմէացեաց :

միներէն առնուած գանձերով շատ հարստացած էին, մանաւանդ զինուորականները :

1. Հռովմայեցւոց զեղխութիւնը ջափե դուրս բան էր. մինչեւ 200,000 դանեկանի արժեքով ճաշեր կանէին, եւ զինով պարտեզի ծաղիկները կոռոզէին : Տները ջափե դուրս փառաւոր, եւ կան կարասիքը ոսկիե եւ արծաթե կլիներ. այն տներուն մեջ հագարաւոր սպասաւորներ ու ծառաներ կային, որ ամենն ալ նուաճեալ երկիրներու բնակիչներէն էին եւ զերի կհամարուէին :

2. Իսկ Հռովմայ հասարակ ժողովրդեան մեծ մասը՝ պատերազմներուն պատճառաւ սաստիկ աղքատութեան մեջ էր, եւ այն խեղճութենէն ելլելու ճարը չէր գտներ : Զայն տեսնելով՝ մեկ քանի մարդիկ սկսան ժողովրդեան պաշտպանութիւն անել, եւ նոցա մեջ ամենէն երեւելիներն էին երկու եղբարք — *Տիբերիոս* եւ *Գայիոս Գրակրոսեանք*, որք միանգամայն տրիրոն էին (133) :

---

<sup>1</sup> Հռովմայեցւոց զեղխութիւնը այն ժամանակները թնչ աստիճանի էր :

<sup>2</sup> Հռովմայ հասարակ ժողովուրդը թնչ վիճակի մեջ էր :

1. Մտքա առաջարկեցին ըստ հին Հռովմայեցւոց օրինաց, որ մեկ Հռովմայեցի մի իրանոսնք չունենայ 500 արտավարեն աւելի քաղաւորական հողի տեք լինել, եւ մնացեալ հողը բաժնուի աղքատ քաղաքացւոց. իսկ այն չափէն աւելի հող ունեցողներուն՝ իրենցմե առնուած հողերուն փոխարեն քաղաւորական զանձէն ստակ տրուի:

2. Իշխանները այն առաջարկութեանը չըհաւնելով՝ խռովութիւն հասեցին. նախ մեկ Գրակքոսը սպանեցին, յետոյ միւսը, եւ ետքա կողմնակիցներէն քանի մի հազար հողի:

---

<sup>1</sup> Գրակքոսեանց առաջարկութիւնն ինչ էր:

<sup>2</sup> Գրակքոսեանց վերջն ինչ եղաւ:



Հոռվմայեցւոց Ափրիկէի մէջ Յուզուրթա  
թագաւորին դէմ, եւ Իսալիոյ մէջ Կիսքրա-  
ցւոց եւ Տէւտոնացւոց հետ արամ պատե-  
րագմներ:

(119 — 101).

---

Մ ա ռ ի ռ ա.

---

1. Հոռվմայեցի իշխանները իրենք գիրենք  
շահասիրութեան եւ արծարսիրութեան տալով՝  
առաջուան արդարութիւնը եւ անաջատութի-  
ւնը ձեռք ձգեցին. այս բանս շատ յայտնի  
կերպով երեցաւ Յուզուրթեան պատերազմին  
ատենը:

2. Յուզուրթ կամ Յուզուրթա Նուսիրացւոց  
Միկիպաս թագաւորին ազգականն էր: Սա

---

<sup>1</sup> Յուզուրթեան պատերազմին ատենը Հոռվ-  
մայեցիք ինչ վիճակի մէջ էին:

<sup>2</sup> Ի՞նչ էր Յուզուրթեան պատերազմին պատ-  
ճառը:

Հոովմայ ծերակուտին կաշառք առաւ որ Մի-  
կիպսայի որդւոցը երկիրներուն տիրելու իրեն  
արգելք չլինի : Տրիրունք այն բանին դեմ կե-  
ցան , եւ ոտք կոխեցին որ Յուզուրբայի դեմ  
զօրք յուղարկուի Հոովմէն . բայց զօրքը երբոր  
Ափրիկէ մտաւ , իսկոյն Յուզուրբայէն կաշառք  
առաւ եւ ջուզեց պատերազմիլ : Վերջապէս  
Հոովմայ հիւպատոսը Մարիուս<sup>1</sup> յաղքեց Յու-  
զուրբայի (118) :

1. Մարիոս քեպէտ եւ հասարակ ու անկիրք ,  
բայց շատ անվախ եւ քաջ մարդ էր , եւ Հոով-  
մայեցիք այնչափ սեր ունեին վրան<sup>2</sup> որ վեց  
անգամ հիւպատոս բնորեցին զինքը : Մա-  
րիոսի քաջութիւնը աւելի յայտնի եղաւ Կիմ-  
բրացւոց եւ Տեւտոնացւոց պատերազմին ա-  
տենը :

2. Այն բարբարոսները ամենքն ալ բարձրա-  
հասակ եւ զօրաւոր մարդիկ էին . հազուաափ  
տեղ ուսերուն վրայ եզան կաշի կձգէին , եւ  
զլուխները եզան զլխու մէջ կանցընէին<sup>3</sup> որպէս  
զի անարկու երեւնան : Այն ազգերը , Հոով-

---

<sup>1</sup> Մարիոս ինչպէս մարդ էր , եւ Յրր յայտ-  
նի եղաւ իւր քաջութիւնը :

<sup>2</sup> Ո՞չք էին Կիմբրացիք ու Տեւտոնները :

մայեցւոց գօրքերուն Սփրիկէ եղած ժամանակը՝ այժմեան Գերմանիայէն ելան իրենց ընտանեօքը եւ մտան Իտալիա (113) :

1. Հռովմայեցիք այն ազգը տեսնելով սարսափեցան, մանաւանդ երբ լսեցին նոցա կատաղի ձայները. վասն զի Տեւտոնացիք իրենց ձայնովը բշնամեաց սիրտը վախ ձգելու մըտքով՝ վահանները կծակէին, ու բերանները այն ծակերուն դնելով՝ բշնամեաց դէմ կկանչէին : Հռովմայեցիք հինգ անգամ գօրք հանեցին անոնց դէմ. հինգ անգամին եւս կիմքրացիք եւ Տեւտոնք այնպիսի ջարդ տուին նոցա որ յուսահատեցան :

2. Այն միջոցին Մարիոս Յուզուրբային պատերազմը վերջացրնելով՝ հիւպատոսութենէն ելաւ : Հռովմայեցիք ուզեցին նոր հիւպատոս դնել, բայց ոչ ոք յանձն առաւ այն իշխանութիւնը. վասն զի հիւպատոս եղողը գօրապետ պիտի լինէր, եւ բշնամեաց դէմ պիտի պատերազմէր : Պէտք եղաւ որ նորէն Մարիոսն ընտրեն :

---

<sup>1</sup> Հռովմայեցիք ինչպէս դէմ ելան Տեւտոններուն :

<sup>2</sup> Մարիոս ինչ կերպով նորէն հիւպատոս ընտրուեցաւ :

1. Մարիոս մեկէն ի մեկ պատերազմի մըտնել չուզեց, այլ ամառուան սպասեց: Յետոյ զօրքերը հանեց այնպէս շարեց թշնամեաց զէմ, որ արեգական ճառագայթները անոնց երեսին կզարնէին. սաստիկ հովէն փոշին եւս նոցա աչքերը մտնելով՝ մեծ նեղութիւն կուտար թշնամեաց, որով ուզեցածներուն պէս պատերազմիչ չէին կրնար: Այսու ամենայնիւ Կիմրրացիք ու Տեւոննացիք լաւ ծեծկուեցան. իրենց կանայքը եւս ձեռքերը տապարներ բրունած՝ ետեւները կեցած էին, որպէս զի պատերազմէն փախչելու միտք ունեցողները զարնեն մեռցրնեն:

Մարիոս մեծ քաջութեամբ եւ ճարտարութեամբ նախ Տեւոննացւոց զօրքը կոտորեց, յետոյ Կիմրրացւոցը: Քիչ մարդ ազատեցաւ այն ջարաջար կոտորածէն, նոքա եւս գերի տարուեցան ի Հռովմ:

---

<sup>1</sup> Մարիոս ինչպէս յաղթեց Կիմրրացւոց եւ Տեւոննացւոց:

Առաջին բնկերական պատերազմի Հոռոմ.

Մարիոս եւ Սիլլա:

1. Մարիոս Կիմերացւոց եւ Տեւտոնացւոց յաղթելովը այնչափ սիրելի եղաւ Հռովմայեցւոց որ նոքա ազատարար հայրենեաց կոչեցին զինքը, եւ իրենց երատախազիտութեանը նշան՝ վեցերորդ անգամ հիւպատոս բնտրեցին:

2. Միայն պատրիկները չէին սիրել զՄարիոս, որովհետեւ նա իրենց պէս ազնուական չէր. եւ առելի պատիւ կանկին Սիլլա անունով գորապետին, որ Լատինացւոց, Ետրուրացւոց եւ Իտալիոյ ուրիշ ժողովրդոց պատերազմներուն մեջ շատ քաջութիւններ արած էր, եւ ինքը կրթեալ եւ ազնուատոնմ էր: Ուստի Հռովմայ ժողովուրդը երկու բաժնուեցաւ. մեկ մասը Միլլայի կողմը կրօնէր, եւ միւսը Մարիոսին, երկուքն ալ մեկմեկու բըշնամի: Հիւպատոսական իշխանութիւնը Մա-

---

<sup>1</sup> Հռովմայեցիք ինչ փոխարէն արին Մարիոսի քաջութեանը:

<sup>2</sup> Մարիոս Հռովմայեցւոց ամենուն ալ հաճոյ էր: — Ո՞վ էր Սիլլա:

րիտսն առնուեցաւ ու Սիլլային տրուեցաւ :

Այն միջոցին Հռովմայեցիք պատերազմի կրպատրաստութիւն ընդդէմ մեծին Տիգրանայ եւ Պոնտոսի Միհրդատ քաղաւորին, որ Փոքր Ասիոյ մեջ Հռովմայեցոց քանի մի երկիրներուն ախրեցէն զատ՝ 100,000 Հռովմայեցի սպաննել տուեր էր ( 88 ) :

1. Հռովմայեցիք զօրք յուղարկեցին Մինըրդատայ դէմ, եւ սպարապետ դրին Սիլլան : Մարիոս այս քանիս շատ բարկացաւ . բռնադատեց ծերակոյտը որ զինքը դնեն սպարապետ : Սիլլան այն միջոցին Հարաւային Իտալիա դրկուած էր՝ որ այն տեղի ոտք ելած ազգերը հնազանդեցնէ . լսելով Մարիոսին իրեն դէմ արածները, Սիլլա իւր զօրքովը Հռովմեկաւ, եւ յաղքեց թշնամեաց . իսկ Մարիոս Ասիրիկէ փախաւ :

2. Հռովմայ մեջ խաղաղութիւն լինելէն ետեւ, Սիլլա իւր զօրքովը Յունաստան գնաց, եւ անկեց Փոքր Ասիա անցաւ, որպէս զի Մինըրդատայ դէմ պատերազմի : Մինչդեռ նա այն պատրաստութեան հետ էր, Մարիոս ասդիկն

---

<sup>1</sup> Մարիոս ինչո՞ւ թշնամացաւ Սիլլայի դէմ :

<sup>2</sup> Հռովմայ մեջ ինչ խաղաղութիւններ արաւ Մարիոս :

անդին գօրք ժողովեց՝ մեծամեծ պարգևներ  
խոստանալով նոցա, մտաւ. Հոովմ ու հինգ  
տարուան մեջ Սիլլայի կուսակիցներուն ստա-  
ցուածները կողոպտելէն ետքը՝ շատ մարդ եւս  
սպաննեց :

1. Անդին Սիլլան արդէն քանի մի անգամ  
յաղքեր էր Միհրդատայ. բայց Մարիոսին Հը-  
ոովմ գալը իմացածին սկսե՛ նաշտուքին ա-  
րաւ. Միհրդատայ նետ, ու փութապէս Իտա-  
լիա դարձաւ: Նոյն միջոցին Մարիոս մեռաւ,  
բայց նորա կուսակիցները Սիլլային գլուխ  
խոնարհեցրնել ջուրելով՝ սկսան անոր դեմ  
պատերազմիլ: Վերջապէս Սիլլան յաղքեց, ու  
Հոովմայ տիրելէն ետքը սկսաւ Մարիոսին  
կողմնակիցները սպաննել: 40,000 մարդ կո-  
տորուեցան քաղաքին մեջ այն ատենը, եւ  
նոցա բոլոր ստացուածքը Սիլլային գօրքերուն  
տրուեցաւ:

Սիլլա այս կերպով իւր բշնամիները ջրն-  
ջելէն ետեւ՝ ինքզինքը մշտնջենաւոր դիկտա-  
տոր անուանեց. բայց այն անսահման իշխա-  
նութիւնը երեք տարի բանեցնելէն ետեւ հրա-  
ժարեցաւ, ու վրան շատ ջանցաւ մեռաւ՝ իւր  
վարուց անկարգութեանը համար:

---

<sup>1</sup> Սիլլա լինչպէս վարուեցաւ իւր բշնամեա-  
ցը հետ:

Առաջին եռասպէսներ.

Պոմպէոս, Կրասսոս, Յուլիոս Կեսար.

1. Սիլլայի մահուանէն ետքը Հռոմէացի մեծերէք երեւելի անձինք եղան, Պոմպէոս, Կրասսոս եւ Յուլիոս Կեսար: Պոմպէոս քաջ զօրավար էր, եւ շատ տեղ յաջողութեամբ պատերազմներ արած էր: Առաջ Սպանիա դրկուեցու՝ որ այն տեղի ապստամբեալ ժողովուրդը զսպէ. Սպանիայէն Հռոմի դարձածին պէս՝ պէտք եղաւ որ Հռոմէացեաց ապստամբեալ սարուկներուն դէմ երբայ:

2. Այն ժամանակները Հռոմէացեցիք մեծ խատութեամբ կվարուէին իրենց սարուկներուն հետ, եւ շատ անգամ զուր տեղը կրտապանեին զանոնք, նաեւ ժամանակէ ժամա-

<sup>1</sup> Առաջին եռասպէսները ոչք էին: — Ո՞վ էր Պոմպէոս:

<sup>2</sup> Սարուկներուն ապստամբութիւնն ինչ էր, եւ ինչպէս վերջացաւ:



նակ ժողովրդեան առջեւ խաղեր անել կուտային նոցա : Այն խաղերուն նամար քաղաքին մեջ մասնաւոր նրապարակ մի կար, որ բարձր քարաշէն աստիճաններով շրջապատած էր. ժողովուրդը այն տեղը կնստէր ու սուսերամարտ սարուկներուն կռիւք կտեսներ : Խաղերէն մեկուն աստեղ սարուկներէն 70 հոգի ձգեցին փախան, եւ իրենց նետ մեկտեղ 70,000 հոգի եւս ուր նանեցին : Սորա Հռովմայեցիներէն քաջած այնչափ նկարիւններուն վրէժը առնելու նամար՝ զօրք ժողովեցին ու սկսան Հռովմայ վրայ քաշել, բայց Պոմպեոս քիչ աստեղի մեջ այն սպառամբները նուսձեց :

1. Վրան քանի մի յարի անցնելէն ետեւ՝ Պոմպեոս Միջերկրական ծովուն առաջակներուն նետ սլատերազմեցաւ, որ ոչ միայն հասարակ նաւերուն վնաս կուտային, այլ եւ Հռովմայեցւոց երկիրներուն վրայ յարձքելով՝ ժողովուրդը կկոտորուէին : Այն սլատերազմները սուսրտելէն ետեւ Ասիա անցաւ, այն տեղը Միհրդատայ յաղթեց, եւ Պոնտոսի, Փիւնիկիի, Ատրաոց երկրին ու Պապեասիոնու տէրեց (63) :

---

<sup>1</sup> Ուրիշ ինչ քաջութիւններ տեսաւ Պոմպեոս :

1. Այս կերպով Պոմպեոս տասն տարուան մեջ Ասիոյ, Սփրիկէի ու Եւրոպիոյ կողմերը 15 քաղաւորութեան եւ 500 քաղաքի տիրապետեց, եւ Հռովմայեցիք *Մեծ* պատուանունը տուին իրեն :

2. Այն ժամանակը Հռովմայ երեւելիներէն մէկն էր *Կրասոս* հիւպատոսը՝ իւր անբաւ հարստութեամբը անուանի . եւ այն հարստութիւնը Սիլլան տուեր էր իրեն՝ Մարիոսի կուսակիցներուն կողոպտուած ստացուածքէն : Այնչափ հարուստ էր Կրասոս, որ մէկ լեզեոն գօրք (6000 հոգի) իւր ծախքովը պահել չըկրցողին աղքատ կասեր :

3. Պոմպեոսի եւ Կրասոսի ժամանակակից էր *Յուլիոս Կեսար*, որ անոնցմէ եւս անուանի էր : Յուլիոս Կեսար իւր ժամանակի մատենագիրներուն ամենէն երեւելին էր, եւ զօրապետներուն մեջ ամենէն քաջը . որով շատ սիրելի էր Հռովմայ ժողովրդեան :

---

<sup>1</sup> Հռովմայեցւոցմէ ինչ վարձատրութիւն ունեցաւ Պոմպեոս :

<sup>2</sup> Ո՞վ էր Կրասոս :

<sup>3</sup> Ո՞վ էր Յուլիոս Կեսար :

1. Պոմպեոս Յ. Կեսարին նախանձելով՝ անոր եւ Կրասոսին հետ *Եռապետական* անուամբ դաշնակցութիւնը հաստատեց, որով թուր հռովմեական տերութիւնը այն եռապետներուն մէջ բաժնուեցաւ : Կեսար Անդր-Ալպեան Գաղղիան առաւ. Պոմպեոս Իտալիան իրեն պահեց, հետն ալ Սպանիան եւ Սիրիակն. իսկ Կրասոսին բաժին ընկան Սսիոյ հարուստ երկիրները, ուր լատ. առ.իր ունեցաւ իւր հարստութիւնը եւս առաւել շատցրնելու :

2. Կրասոս իւր զօրքերովը Սսիա անցածին պէս՝ Սսորւոց երկրին վրայէն Պարթեաց երկիրը զնաց, որպէս զի անոնց հարստութիւնը ձեռք ձգէ. բայց Պարթեք Հռովմայեցւոց սաստիկ ջարդ տայէն ետեւ՝ Կրասոսին զլուխն եւս կտրեցին ու բերանը հալած ոսկի լեցուցին ասելով. „Ահա քեզի ոսկի որ այնչափ կսիրես. խմէ խմածիդ ջափ՝ մինչեւ որ կըշտանաս“ :

3. Յուլիոս Կեսար Գաղղիա երբայէն ետեւ սկսաւ պատերազմի պատրաստուիլ, որպէս զի

---

<sup>1</sup> Ի՞նչ կերպով հաստատուեցաւ եռապետութիւնը :

<sup>2</sup> Կրասոսի վերջն ինչպէս եղաւ. :

<sup>3</sup> Յուլիոս Կեսար ինչ քաջութիւններ արաւ. :

Հոովմայեցւոց ձեռքը ջեղած երկիրներուն ես  
տիրի: Ուրք տարի այն տեղը սաստիկ սպառե-  
րագմեկն ետեւ՝ բոլոր Գաղղիոյ տիրեց, որով  
այն երկիրը Հոովմայ գաւառներուն կարգը  
անցաւ. (58—50): Գրեթէ նոյն ատենը Կեսար  
իւր զօրքովը երկու անգամ Փերմանիա մտաւ,  
եւ երկու անգամ նստերով անցաւ Անգղիա,  
որոյ բնակիչքը այն ատենները բարբարոս էին:

1. Յուլիոս Կեսար թեպէտ եւ ջկրցաւ յաղ-  
թել Փերմանացւոց եւ Անգղիացւոց, բայց ո-  
րովհետեւ անկեց առաջ նոցա երկիրը մտնող  
եղած չէր, բոլոր Հոովմայեցիք զարմացան  
Կեսարին այնպիսի քաջութեանը վրայ:

2. Մինչդեռ այն երեք զօրապետները ան-  
դիս անդին աշխարհակալութեան ետեւէ էին,  
Պոմպեոս առանց Հոովմեն դուրս ելլելու՝ իւր  
փոխանորդներուն ձեռքովը իրեն իշխանու-  
թեան տակը եղած երկիրները կկտավարէր:

— 257 —

---

<sup>1</sup> Յուլիոս Կեսար կրցաւ բոլորովին յաղթել  
Փերմանացւոց եւ Անգղիացւոց:

<sup>2</sup> Այն միջոցին ով էր զՀոովմ կտավարողը:

Երկրորդ ընկերական պատերազմը ի Հռոմվմ.

---

*Յուզիոս Կեսարի մշտնջենաւոր դիկտատորութիւնը :*

---

1. Մինչդեռ Յուզիոս Կեսար Գաղղիացւոց դէմ պատերազմելու հետ եր, Պոմպէոս Հռոմվմայ մեջ իւր իշխանութիւնը կընդարձակեր, եւ կըորդորէր որ ծերակոյտը իւր կողմը բռնէ՝ ասելով անոնց թէ „Յուզիոս Կեսար քաջ զօրքովը կրնայ վտանգաւոր լինել տերութեան“ : Ծերակոյտն ալ հրաման դրկեց Կեսարին որ զօրքերը ցրուէ, եւ ինքը Հռոմվմ դառնայ : Շատ մարդիկ կզգուշացնէին Պոմպէոսը որ այնպէս չվարուի Յուզիոս Կեսարին հետ . բայց Պոմպէոս խրոխտ կերպով կպատասխանէր նոցա թէ „Ոտքս գետինը զարկածիս պէս՝ լեզուներ կեպեն ինձի օգնելու“ :

---

† Պոմպէոս ինչ կերպով գրգռեց Հռոմվմայեցիները Յուզիոս Կեսարին դէմ :

1. Յուշիոս Կեսար ծերակուտին հրամանը առածին պէս՝ Գաղղիայէն Իտալիա անցաւ. բայց մինակ չեկաւ, ինչպէս որ ծերակոյտը կուգէր, այլ բոլոր զօրքերովը, որպէս զի բռնութեամբ Հռովմ մտնէ ու իւր թշնամիները նուաճէ: Այն եղաւ *Երկրորդ ընկերական պատերազմին* սկիզբը:

2. Յուշիոս Կեսար այնպիսի արագութեամբ զնաց Հռովմայ մօտեցաւ, որ Պոմպէոս ժամանակ չունեցաւ զօրք ժողովելու ու նորա դէմ ելլելու. պէտք եղաւ որ իւր կուսակիցներովը Յունաստան փախչի: Թեսաղիոյ մէջ շատ զօրք ժողովելէն ետեւ, երբոր Կեսար եւս իւր զօրքերովը այն տեղ զնաց Պոմպէոսի ետեւէն, այն երկու նախանձորդները *Փարսաղիա* քաղաքին քով դէմ առ դէմ ճակատեցան (48):

3. Կեսար յաղթող ելաւ պատերազմէն, իսկ Պոմպէոս բոլոր զօրքը կորսնցընելէն ետեւ՝ հազիւ կրցաւ ձկնորսի նաւակով Եգիպտոս փախչիլ. եւ որովհետեւ Եգիպտոսի թագաւո-

---

<sup>1</sup> Երկրորդ ընկերական պատերազմը ինչպէս սկսաւ:

<sup>2</sup> Փարսաղիոյ պատերազմը ինչպէս սկսաւ:

<sup>3</sup> Ո՞վ յաղթեց Փարսաղիոյ պատերազմին մէջ:

բը կեսարին բարեկամ էր՝ մեռուց զինքը :  
Յուլիոս Կեսար շատ ափսոսաց իւր թշնամուոյն  
մահուանը վրայ, եւ արձան կանգնեց անոր  
Հռովմայ մեջ. որով իւր մեծասարտութիւնը  
յայտնեց :

1. Այնչափ յաղբութիւններէն ետքը Կեսար  
մեծ հանդիսով եւ անբաւ հարստութեամբ Հը-  
ռովմ մտաւ : Հետը բերած զանձերուն մեկ  
մասը տերութեան պարգեւ արաւ, իսկ միւսը  
իւր զինուորներուն եւ կուսակիցներուն բաժ-  
նեց. անկեց ի զատ բոլոր քաղաքացիներուն  
կերակուր տուաւ՝ ազնիւ զինիներով հան-  
դերձ, որոյ համար մասնաւոր տուն մի շինել  
տուած էր 22,000 սենեկով : Այսպիսի առա-  
տաձեռնութիւններով Կեսար բոլոր քաղաքա-  
ցւոց սիրտը վաստրկեցաւ. իսկ ծերակոյտը  
մշտնջենաւոր *դիկտատոր*, այսինքն իշխա-  
նապետ արաւ զինքը :

2. Կեսար թեպէտ եւ այնքան սիրելի էր ժո-  
ղովրդեան, բայց թշնամիներն եւս պակաս  
չէին : Հռովմայ հարուստ քաղաքացիները Կե-

---

<sup>1</sup> Յուլիոս Կեսար ինչ կերպով դարձաւ Հը-  
ռովմ եւ ինչ իշխանութեան հասաւ :

<sup>2</sup> Կեսար թշնամիներ ունեցաւ :

սարին իշխանապետութիւն տրուելուն վրայ մեծ տեղոհութիւն ցուցուցին . կվախնային որ կեսար հասարակապետութիւնը չվերցնէ ևս ինքը քազաւոր չլինի :

1. Սոցա մեջէն երկու հոգի, *Կասսիուս* և *Բրուտուս*, խօսք դրին որ կեսարը մեռցրնեն : Օր մի երբոր նա ըստ սովորութեանը ծերակոյտը գնաց մտաւ, մարդուն մեկը դէմն ելաւ ու սկսաւ բանի մի համար խնդիրք անել . մեկ ուրիշն այնոյն ատենը ետեւէն մօտեցաւ, բութը կեսարին կռնակը խոթեց : Կեսար մեկէն դարձաւ որ զարնէ մեռցրնէ այն չարագործը, բայց ծերակոտին մեջ եղողները ամենքը առաջուց խօսք մեկ արած էին . բրերով ընկան վրան ու կատաղաբար սկսան զարնել : Կեսար տեսնելով որ ազատութեան յոյս չունի, գլուխը ծածկեց ծիրանիովն ու այն հարուածներուն տակն ընկաւ մեռաւ (44):



---

1 Ի՞նչ կերպով սպաննուեցաւ Կեսար :



Երրորդ ընկերական պատերազմ ի Հոռովմ.

---

Երկրորդ եռապետութիւն. — Անտոնիոս,  
Լեպիդոս, Ոկտաւիանոս:

---

1. Կեսարի մահուան լուրը Հոռովմայ մեջ տարածուածին պէս բոլոր քաղաքացիք տակն ու վրայ եղան: Ժողովուրդը ծերակուտին շէնքին կրակ տուաւ, եւ Կեսարի մահուան պատճառ եղողները կուգէր բրէ անցընել. բայց նոքա ձգեցին փախան քաղաքէն:

2. Անտոնիոս հիպատոսը, որ Կեսարի ընկերն ու բարեկամն էր, ժողովրդին խոռոված ատենը բազաւորական զանձն ու Կեսարին ստացուածքը հնարքով մի ձեռք ձգելէն ետեւ՝ քաղաքացիներուն կաշառք կուտար եւ իշխանապետ կուգէր լինել. բայց ծերակոյտը

---

<sup>1</sup> Կեսարի մահուանէն ետքը ինչ պատահեցաւ Հոռովմի մեջ:

<sup>2</sup> Անտոնիոս այն միջոցին ինչ կերպով վարուեցաւ:

զիտնալով նորա միտքը՝ հայրենեաց թշնամի կոչեց զնա. ինքն ալ ժողովրդեան հետ հպարտութեամբ վարուելովը՝ ատելի եղաւ ամենուն :

1. Այն միջոցին Ոկտաւիանոս անունով 19 տարեկան կտրիճը, որ Կեսարի քեռորդին էր, Յունաստանէն Հռոմ եկաւ : Կեսար զինքը իրեն ժառանգ եւ որդեգիր անուաներ էր, եւ Ոկտաւիանոս սակաւ ժամանակի մեջ իւր վարքովը սիրելի եղաւ ծերակուտին եւ ժողովրդեան :

2. Երբոր նոր հիւպատոսներ ընտրուեցան, Ոկտաւիանոս նոցա հետ ի միասին Անտոնիոսի վրայ պատերազմի եղաւ ու յաղթեց անոր. եւ որովհետեւ երկու հիւպատոսներն եւս սպաննուեցան այն պատերազմին մեջ, Ոկտաւիանոս միայն մնաց ընդհանուր սպարապետ :

3. Անտոնիոս Գաղղիա փախաւ, որ այն

---

<sup>1</sup> Ո՞վ էր Ոկտաւիանոս, եւ ինչպէս առաջ եկաւ :

<sup>2</sup> Ի՞նչ կերպով Ոկտաւիանոս ընդհանուր սպարապետ եղաւ :

<sup>3</sup> Անտոնիոս ո՞ր փախաւ եւ որո՞ւ հետ միարանեցաւ :

տեղի Հոռովմայեցոց կողմէն դրուած *Լեպի-  
դոս* փոխարքային հետ միաբանած *Ոկտաւիա-  
նոսի* դէմ նորէն պատերազմի ելլէ: Բայց Ոկ-  
տաւիանոս փութացաւ ինքն ալ նոցա դաշ-  
նակից լինելու, եւ առաջարկեց որ հասարա-  
կապետութեան կողմնակիցները ջնջեն վերցը-  
նեն: Այն երեք անձանց դաշնակցութիւնը,  
այսինքն *Անտոնիոսի*, *Լեպիդոսի* եւ *Ոկտա-  
ւիանոսի*, *Երկրորդ Եռապետութիւն* ասուե-  
ցաւ:

1. Որպէս զի իրենց ինքնիշխան կառավա-  
րութեանը արգելք անող մի ջմնայ, այն ե-  
րեքը խորհուրդ արին որ իրենց հակառակորդ-  
ները եւ թշնամիները մեռցընեն:

2. Ծերակուտի անդամներէն քանի մի հա-  
րիւր հոգի, շատ ալ ժողովուրդ զոհ եղաւ ա-  
նոնց փառասիրութեանը: Մեռնողներուն մեջ  
կային նաեւ պատուաւոր եւ ժողովրդեան սի-  
րելի անձինք, զոր օրինակ *Կիկերոն*<sup>1</sup> Անտո-  
նիոսին ոսոխը: Սա այնչափ սիրելի էր իւր

---

<sup>1</sup> Երկրորդ եռապետներուն միտքը ինչ էր:

<sup>2</sup> Եռապետներուն մեռուցած մարդկանց մեջ  
ո՞վ կար անուանի: — Ինչո՞վ երեւելի էր *Կի-  
կերոն*:

քաղաքակիցներուն՝ իւր հայրենասիրութեանը,  
խելքին ու ճարտարիօտութեանը համար որ  
Հայր հայրենեաց կոչուեցաւ :

1. Նոյն ատենները *Կասսիոս* եւ *Բրուտոս*  
իրենց կուսակիցներովը Մակեդոնիոյ մեջ գորք  
ժողովելու հետ էին ընդդէմ եռապետաց . բայց  
Ոկտաւիանոս եւ Անտոնիոս *Փիլիպպէ* քա-  
ղաքին քովը նոցա դէմ ճակատեցան , եւ այն-  
պիսի սաստիկ ջարդ տուին որ Կասսիոս եւ  
Բրուտոս յուսահատած՝ իրենք զիրենք մեռու-  
ցին (42) :

2. Այն պատերազմով Հռովմայ հասարակա-  
պետութիւնը բոլորովին ընկաւ , բայց յայտնի  
չէր թե՞ ո՞վ պիտի իշխէ Հռովմայ տերութեանը :  
Լեպիդոս իւր երկու ընկերներէն այ տկար  
էր , որովհետեւ նորա գորքերը ձգեցին զինքն  
ու Ոկտաւիանոսի կողմն անցան . ուստի բո-  
լոր Հռովմայ տերութիւնը Ոկտաւիանոսի ու  
Անտոնիոսի ձեռքը մնաց . արեւելեան գա-  
ւառները Անտոնիոսի ընկան , արեւմտեան-  
ները Ոկտաւիանոսի :

---

<sup>1</sup> Ո՞ւր էին եւ ինչ կանէին այն ժամանակը  
Կասսիոս եւ Բրուտոս :

<sup>2</sup> Փիլիպպէի քով եղած պատերազմէն վերջը  
ինչ հանդիպեցաւ :

1. Անտոնիոս իւր անհոգութեամբը ինքն իրեն մեծ վնաս արաւ. փոխանակ փառասէր Ոկտաւիանոսին դէմ ինքզինքը պատասպարեցու, Եզիպտոսի *Կղեոպատրա* քաղահւոյն քով խնջոյքներով եւ զուարճութեամբ կանցընէր ժամանակը, եւ Հոովմայ արեւելեան զաւառները այն քաղահւոյն տղոցը կրածներ :

2. Հոովմայեցիք տժգոն էին Անտոնիոսէն այնպիսի անկարգ վարուցը պատճառաւ, եւ Ոկտաւիանոս իւր շահին համար կնայէր որ ժողովուրդը ոտք հանէ անոր դէմ : Խօսք անցուց ծերակուտին որ Անտոնիոսի ձեռքէն իշխանութիւնը առնուի, ու Կղեոպատրայի դէմ պատերազմ հրատարակեց :

3. Այն պատերազմին մեջ Ոկտաւիանոս յաղթեց Անտոնիոսին զօրացը ծովէն ու ցամաքէն՝ *Ակտիոնի* հրոսանդանին քով, եւ բոլոր Եզիպ-


---

<sup>1</sup> Անտոնիոս ինչ կերպով կառավարեց իրեն ընկած երկիրը :

<sup>2</sup> Հոովմայեցիք ինչպէս վարուեցան Անտոնիոսի հետ :

<sup>3</sup> Ի՞նչպէս եւ ո՞ր յաղթեց Ոկտաւիանոս Անտոնիոսին : — Ոկտաւիանոսին ինչ պատուանուն տրուեցաւ :

տոսի տիրեց (31) : Անտոնիոս ու Կղեոպատ-  
րա իրենք գիրենք սպաննեցին, եւ Եզիպտոս  
Հոովմայ գաւառներուն կարգն անցաւ . իսկ  
Ոկտաւիանոս մեծ հանդեսով Հոովմ դարձաւ  
ու իւնիւերա՛րոր, այսինքն հրամանատար  
կամ ինքնակալ պատուանունը ընդունեցաւ  
ծերակուտէն : Ժողովուրդն ալ Աւգուստոս կամ  
Յոգուստոս պատուանունը տուաւ անոր, որ  
լատիներէն *իստուաւոր* ըսել է : Այն ժամանա-  
կէն նաեւ Հոովմայ հասարակապետութիւնը  
միապետութիւն դարձաւ (30) :



ԻՆՔՆԱԿԱԼՔ ՀՈՌՎԱԿԱՅԵՑԻՈՑ

ՕԳՈՍՏՈՍ ԿԱՅՍՐ.

*Քրիստոնեկուրեան սկզբնաւորութիւնը եւ  
սարածուիլը :*

1. Երբոր Ոկտաւիանոս ազատեցաւ թշնամիներէն եւ հասարակապետութեան պաշտպաններէն, դիւրաւ հաստատեց իւր իշխանութիւնը. ժողովուրդն եւս տեսնելով որ իրենց թագաւորը հասարակաց օգտին համար կաշխատի, սիրով հնազանդեցան իրեն : Ոկտաւիանոս Հռովմայ մեջ եղած խռովութիւններն ու երկպառակութիւնները վերուց, ժողովուրդը հանգստացաւ ու սկսաւ օգտաւէտ բաներու զբաղիլ :

<sup>1</sup> Ի՞նչ կողմանէ նշանաւոր եղաւ Ոկտաւիանոսի ինքնակալութիւնը :

1. Օգոստոս կայսրը ուսեալ է. աշխատասէր մարդիկը շատ կսիրէր ու կվարձատրէր. անոր համար այն թագաւորին ատենը մեծամեծ բանաստեղծներ է. պատմիչներ երեւցան Հռովմայեցւոց մեջ, որպիսի են *Վիրգիլիոս*, *Որատիոս*, *Սալուստիոս*, է. այլք, որոց գրքերը մինչեւ մեր ժամանակները սիրով է. զարմացմամբ կկարդացուին : Այն երջանկութեան ատենը, այսինքն Օգոստոսի կայսերութեան միջոցը, *սակեղար* կոչեցին Հռովմայեցիք :

2. Օգոստոս կայսեր ատենը Հռովմայեցւոց տերութիւնը եփրատ գետէն մինչեւ Ատլանտեան Ովկիանոսը կհասնէր, հիւսիսային Աֆրիկէն ալ մեկտեղ. ասել է թէ բոլոր այն ատենի եւրոպիոյ է. Ասիոյ մեջ եղած բարերեր է. հարուստ երկիրները իրենց ձեռքն էին :

3. Այն ընդարձակ տերութեանը մեջ 120 միլիոն ժողովուրդ կար՝ որոյ մեկ միլիոն ու

---

<sup>1</sup> Ռաման կողմանէ ինչ յառաջադիմութիւն եղաւ Օգոստոսի օրերը :

<sup>2</sup> Օգոստոս կայսեր ատենը Հռովմայեցւոց տերութիւնը մինչեւ ո՞ր կտարածուէր :

<sup>3</sup> Ո՞րչափ էր ժողովուրդը է. քանի՞ քաղաք կար երկրին մեջ :



կեսը միայն Հոռվմայ մեջ էր, եւ 6000 քա-  
ղաք :

1. Հոռվմայ տերութեան զօրքը այն ատենը  
400,000 էր, եւ ծովուն վրայ երկու մեծ նա-  
ւատորմիդ ունեին :

2. Օգոստոս Հոռվմը զարդարելու հոգ տա-  
րաւ, եւ քաղաքը փառատոր պալատներով,  
տաճարներով եւ ուրիշ շէնքերով ճոխացուց :  
Յտար ազգաց դէմ այն ժամանակ միայն պա-  
տերազմի կեպեր՝ երբ նոքա ստիպեին զինքը  
ուստի եւ իրեն պատերազմները ամեն անգամ  
յաջող կլինեին : Միայն Գերմանացւոց դէմ  
արած պատերազմը անյաջող եղաւ :

3. Գերմանացիք հիւսիսային Իտալիոյ վրայ  
անդադար կարշաւեին : Օգոստոս քանի մի  
անգամ նոցա դէմ զօրք ուրկելով, *Վեզեր* եւ  
*Հոհենու* զետերուն քովը բնակող Գերմանա-  
ցիները հնազանդեցուց . բայց *Վարոս* հիւսպա-  
տոսը նոցա վրայ կուսակալ ուրկուելով՝ սկսաւ

---

<sup>1</sup> Զօրքը հրչափ էր :

<sup>2</sup> Հոռվմ քաղաքը ինչպէս զարդարեց :

<sup>3</sup> Գերմանացւոց հետ ինչպէս վարուեցաւ  
Օգոստոս :

ժողովուրդը նեղել ու ստիպել որ լատիներեն խօսին եւ Հռովմայեցւոց աստուածները պաշտեն :

1. Գերմանացիք տժգոհ էին Վարոսի կառավարութենէն . ուստի իրենց իշխաններէն Արմինիոս անունով մեկը միտքը դրաւ որ իւր հայրենիքը Հռովմայեցւոց ձեռքէն ազատէ : Զօրք ժողովեց Արմինիոս , եւ վեզեր գետին քովերը խիտ եւ ջրոտ անտառի մը մէջ շարեց զանոնք , Վարոսին ալ իմացուց թէ այն կողմերը խռովութիւն կայ : Վարոս Արմինիոսը իրեն հաւատարիմ կարծելով՝ իսկոյն զօրքով նոցա վրայ գնաց . բայց Արմինիոս խաբեց Հռովմայեցւոց լեզեռնները , առաւ տնարաւ զանոնք Գերմանացւոց անտառը խոթեց , ու երբ նոքա ճահիճներուն մէջ մտան՝ Գերմանացիք վրայ հասան , եւ երեք օրուան մէջ Հռովմայեցւոց զրեթէ բոլոր զօրքը ջարդեցին . թիջ մարդ ազատեցաւ այն կոտորածէն , նոքա ալ ձգեցին Հռոմ փախան : Այն պատերազմին հետեւանքը այս եղաւ որ Գերմանացիք բոլորովին ելան Հռովմայեցւոց իշխանութենէն :

---

<sup>1</sup> Արմինիոս ինչպէս ազատեց Գերմանացիները Հռովմայեցւոց ձեռքէն :

1. Օգոստոսի կայսերութեան ատեն աշխարհիս ամենէն երեսելի գործն էր Հրեաստանին մեջ եղածը, որ այն ժամանակը Հռովմայ գաւառներէն մէկն էր. այսինքն Տեառն մերոյ եւ Փրկչին ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ Ծնունդը :

2. Օգոստոսին յաջորդ Տիրերիոսին ատենը Հռովմայ մեջ քրիստոնէութիւնը սկսաւ տարածուիլ, եւ *Քրիստոնէակաները*, այսինքն Քրիստոսի հետեւողները օր ըստ օրէ շատցան : Նոյն ատենը հաստատուեցաւ նաեւ *Քրիստոսական եկեղեցին*, որոյ կառավարութեանը համար քրիստոնեայ գտնուած զանազան տեղեր եպիսկոպոսներ եւ քահանայներ ընտրուեցան :

3. Հռովմայեցիք հաւատքէ պաղած լինելով, իսկզբան իրենց տերութեան մեջ քրիստոնէութիւնը մտածին ամենեւին ուշ չղրին : Բայց երբ քրիստոնեաները շատցան, քուր-

---

<sup>1</sup> Օգոստոս կայսեր ժամանակը ինչ երեսելի դեպք եղաւ աշխարհիս վրայ :

<sup>2</sup> Ո՞ր կայսեր ատենը եւ ինչպէս ծաղկեցաւ քրիստոնէութիւնը :

<sup>3</sup> Հռովմայեցիք ինչպէս վարուեցան քրիստոնէից հետ :

մերը սկսան բողոքել անոնց դէմ, որ իբր թէ քրիստոնեայք տերութեան վտանգաւոր մարդիկ են : Ասոր վրայ Հռովմայեցւոց թագաւորները սկսան խատութեամբ վարուիլ քրիստոնէից դէմ եւ հալածել զանոնք, բռնադատելով որ ուրանան իրենց հաւատքը եւ հեթանոս դառնան . բայց քրիստոնեաները աւելի յանձն կատնէին ջարջարանք կրել եւ մեռնիլ՝ քան թէ զՔրիստոս ուրանալ :

1. Հեթանոսներն եւս կզարմանային՝ երբ կրտեսնէին նոցա ամեն տեսակ ջարջարանաց համբերելը, մանաւանդ կրակի մեջ այրած ատեննին Աստուծոյ փառք տալը : Այն հաստատ հաւատքը, ջերմեռանդ աղօթքը եւ մեռած ժամանակնին տուած յորդորանքները այնպիսի ազդեցութիւն արին հեթանոսներուն վրայ որ անոնցմէ շատերը դարձան քրիստոնեայ եղան :

2. Հռովմայեցիք քրիստոնէից օր ըստ օրէ շատնալը տեսնելով՝ սկսան զանոնք աքսորել . բայց քրիստոնեայք դուրսն ալ Քրիստոսի վար-

---

<sup>1</sup> Նախնի՝ քրիստոնեայ մարտիրոսներուն քաջութիւնը ինչպէս էր :

<sup>2</sup> Հռովմայեցւոց երկրին մեջ եւ դրսերը ինչպէս տարածուեցաւ քրիստոնէութիւնը :

դապետութիւնը կբարոզէին, եւ ոմանք իրենց կամօքը աշխարհե աշխարհ քալելով քրիստոնէութիւնը կտարածէին :

Այս կերպով Հռովմայ տերութեան մեջ եւ ուրիշ տեղեր քրիստոնէութիւնը քանի գնաց ծաղկեցաւ :



*Բռնատուր կայսերաց ասենը Հռովմայ  
մեջ եղած անկարգութիւնները,*

1. Հռովմայեցիք որչափ որ երջանիկ էին Օգոստոսի 43 տարի բազաւորելուն ատենը, նայնչափ եւս նեղութիւն կրեցին նորա բռնաւոր յաջորդներէն :

2. Տիրերիոս, Կալիգողա, Կղօղիոս եւ ներոն մեկմեկու ետեւէ բազաւորեցին Օգոստոսէն ետքը . սոցս քանը գործը իրենց նպատակները կողոպտել ջարջարել եւ մեռցրնել

---

<sup>1</sup> Օգոստոսի յաջորդները ինչ բնաւորութեան տէր էին :

<sup>2</sup> Բռնատուր կայսերաց մեջ գլխաւորները որոնք էին :

եր : , Բոլոր Հոռվմայ ժողովուրդը մեկ գլուխ մի ունենար , ու ես այն գլուխը կտրեի “ , կատեր Կալիգոդա կայսրը :

1. Գիտսի արձանները վերցրնել տուաւ մեհեաններէն , ու տեղը իւր արձանները դրաւ , որպէս զի ժողովուրդը նոցա երկրպագութիւն անէ :

Հպատակները մեռցրնելը այնչափ սովորական բան էր իրեն ’ որ վանդակներու մեջ փակուած գազանները մարդու մտով կկերակրէր . շատ անգամ եւս կերակրոյ ատեն աչքին առջեւը մեռցրնել կուտար հպատակները ’ հիւրերուն գուարճութեանը համար :

2. Այն բազաւորաց մեջ ամենէն սոսկալին ու կատաղին ներոնն էր , որ իւր մայրը , կնիկը , եղբայրը , վարժապետը եւ հազարաւոր պատուաւոր անձինք մեռցրնելէն ետեւ ’ քրիստոնեաներն ալ յայտնապէս հալածեց :

3. Օր մի գուարճութեան համար կրակ տր-

---

<sup>1</sup> Կալիգոդան ուրիշ ինչ բռնաւորութիւններ արաւ :

<sup>2</sup> Բռնաւոր կայսերաց մեջ ամենէն անգութն ու անզգամը հով էր :

<sup>3</sup> Ինչո՞ւ եւ ինչպէս կրակ տուաւ Հոռվմայ :

ւաւ Հոռովմայ . եւ երբ կրակը բորբոքեցաւ ու  
գրեթէ բոլոր քաղաքը պատեց, Ներոն իւր  
պալատին աշտարակներէն մեկուն ծայրը ե-  
լաւ՝ հրդեհը դիտելու համար, ու կիրառովը  
Տրոյիոյ կործանումը կնուագեր :

1. Տեսնելով որ ժողովուրդը կտրտնջայ, Նե-  
րոն քրիստոնէից վրայ ձգեց յանցանքը, ասե-  
լով թէ նոքա են այն կրակին պատճառը . այն  
ատեն Հոռովմայեցիք կատաղարար ընկան քրիս-  
տոնէից վրայ ու սկսան սաստիկ ջարջարել  
զանոնք : Շատ քրիստոնեայ թրէ անցուցին այն  
միջոցին Հոռովմայեցիք եւ շատը այրեցին . իսկ  
ինքը Ներոն կառքով կպտրտեր ու այն տե-  
սարանները գոարձանալով կղիտեր :

2. Ներոնէն ետքը Հոռովմայեցւոց գօրքը հրա-  
պարակաւ սկսաւ ծախել կայսերական իշխա-  
նութիւնը . ով որ ասելի ստակ տար՝ նա կը  
լինէր բազաւոր . բայց սոցա իշխանութիւնը  
շատ ջեր քշեր . վասն զի եթէ մեկը ասելի  
ստակ տար՝ զինքը կընտրէին բազաւոր եւ  
առաջինը կմեռցրնէին : Այս կերպով երկու  
տարուան մեջ երեք բազաւոր փոխուեցաւ :

---

<sup>1</sup> Քրիստոնէից հետ ինչպէս վարուեցաւ :

<sup>2</sup> Ներոնէն ետքը ինչ մարդկանց ձեռք ան-  
ցաւ կայսերութիւնը :

## Հոովմայ գովելի ինֆնակաշները.



1. Հոովմայեցւոց տերութեան անկարգութիւնները 55 տարիէն աւելի քշեցին, եւ բրունաւոր ու բոյլ թագաւորաց տուած նեղութիւններէն վերջապէս բարեսիրտ եւ խելացի վեսպասիանոս կայսեր ատենը հանգչեցան Հոովմայեցիք: Վեսպասիանոս նոր շէնքերով զարդարեց Հոովմ, ուսումնարաններ բանալ տուան, եւ ուսումն ու արհեստները ծաղկեցուց:

2. Վեսպասիանոս իւր Տիտոս որդին սլատերազմի ղրկեց Հրէից դէմ: Այն ազգը շատ ժամանակէ ի վեր ապստամբիչ կուգէր Հոովմայեցիներէն, եւ Վեսպասիանոսի ժամանակը բոլորովին ոտք ելան: Տիտոս իսկզբան շատ յորդորեց Հրեաներն որ հնազանդին, բայց նորա իրենց զօրքովը փակուեցան Երուսաղեմի մէջ եւ սկսան Տիտոսի դէմ սլատերազմիչ: Այն

---

<sup>1</sup> Ո՞ր կայսեր ժամանակները հանգչեցան Հոովմայեցիք:

<sup>2</sup> Վեսպասիանոսի որդին Տիտոս ինչ երեսելի արշաւանք արան:



ատեննը Հռովմայեցիք պաշարեցին Երուսաղէմը . քաղաքին մեջ սով ընկաւ , ժողովուրդն ալ երկպառակութեամբ մեկզմեկ կմեռցընէր : Քիչ ատենի մեջ սովէն եւ կռիւներէն այնչափ Հրեայ մեռաւ որ քաղաքին փողոցները դիակներով լեցուելէն ետքը՝ քանի մի հարիւր հազար դիակ ալ քաղաքէն դուրս ձգուեցան :

1. Վերջապէս Հռովմայեցիք մտան Երուսաղէմ , եւ բոլոր քաղաքը կործանեցին . իսկ տաճարը այնպէս քանդեցին որ քարը քարի վրայ չմնաց : Այն ժամանակէն Հրեաները բոլոր աշխարհիս երեսը ցրուեցան , ու մէյմնալ իրենց հայրենիքը չդարձան :

2. Վեսպասիանոսի մեռնելէն ետքը Հռովմայինքնակալ բարեսիրտ Տիտոսն եղաւ : Այս բազաւորը այնչափ կսիրէր իւր ժողովուրդն որ նոցա բարիք անելը իրեն երջանկութիւն կհամարէր . եւ երբ որ մի առանց բարեգործութեան անցընէր , այն օրը կորսուածի տեղ կղնէր . այսպիսի բարեգործութեանցը համար Հռովմայեցիք „երջանկութիւն ազգի մարդկան“ կոչեցին զինքը :

---

<sup>1</sup> Ի՞նչ կերպով առին Հռովմայեցիք Երուսաղէմը :

<sup>2</sup> Վեսպասիանոսի ոմ յաջորդեց :

1. Տիտոսի կայսերութեան ատենը մեծամեծ դժբաղդութիւններ պատահեցան Հռովմայտերութեան մեջ. ցաւեր, հրդեհներ եւ սով պակաս չէին ժողովրդին վրայէն. երկու ալ անուանի քաղաք կործանեցաւ: Այն դիպուածը այս կերպով եղաւ: Հարաւային Իտալիոյ մեջ *Վեսոււլ* լեքան հրաբուխը սաստիկ գետնաշարժե ետեւ բորնկեցաւ, սկսաւ մեջէն տաք մոխիր քափել դուրս, եւ քովի Հերկուլանոն եւ Պոմպեա քաղաքները այն մոխիրին տակը քաղուեցան: Հարիւր յիսուն տարի կայ որ գետինը խորունկ փորեցին ու գտան այն քաղաքները, եւ մինչեւ ցայժմ նոցա մեջ նոր նոր փողոցներ, տներ, տաճարներ, զրքեր, մանր բաներ եւ մարդկանց դիակներ կգտնուին:

2. Տիտոսի յաջորդեցին իրարօք ետեւէ վեց գովելի քազաւորք. սոցա մեջ միայն Տիտոսին եղբայրը *Գումետիանուս*<sup>1</sup> բռնաւոր էր. մնացեալ հինգը, որք են *Ներուաս*, *Տրայիանուս*, *Ադրիանուս*, *Անտոնինուս* եւ *Մարկոս Աւրելիոս*, իրենց բարի գործերուն համար գովելի կրնան ասուիլ:

---

<sup>1</sup> Տիտոսի ժամանակը ինչ երեւելի դժբաղդութիւններ պատահեցան Հռովմայեցւոց տերութեան մեջ:

<sup>2</sup> Տիտոսի յաջորդները ո՛յք եղան:

Հոռվմայեցիք այն ինքնակալաց ատենը, որ 84 տարի քշեց, երջանկութեամբ անցուցին. ուստի եւ հօր պէս կսիրէին զանոնք, մանաւանդ Տրայիանոսը, Ադրիանոսը եւ Անտոնինոսը:

1. Տրայիանոս բարերարոյ եւ քաջասիրտ բազաւոր էր: Հոռվմայ մեջ վարժատունները շատցուց. բոլոր տերութեան մեջ գեղեցիկ կարգադրութիւններ արաւ, եւ ամենեւնի արդարութիւն կպահանջէր: Ասիոյ վրայ եւս արշաւեց, ու եփրատ եւ Տիգրիս գետերուն քովերը մեկ քանի երկիրներու տիրեց: Հոռվմայեցիք այնչափ կսիրէին զինքը որ *Քուչաչաւ* մականուններ տուին իրեն:

2. Ադրիանոս նույնպէս խելացի եւ գործունեայ բազաւոր էր: Իւր ընդարձակ տերութեանը մեջ ծայրէ ծայր քալելէն ետքը, նոր նոր քաղաքներ, ճամբաներ եւ ջրանցքներ շինեց, եւ ընդհանրապէս ժողովրդեան օգտին համար աշխատանքի ջեր խնայեր:

---

<sup>1</sup> Տրայիանոս ինչպէս արաւ կայսերութիւնը:

<sup>2</sup> Ադրիանոսի վրայ ինչ կպատմուի:

1. Անտոնինոս, որ *Բարեպաշտ* անուանեցաւ, ամենեւին պատերազմ չէր սիրեր, այլ անդադար իւր հպատակաց երջանկութեանը եւ հանգստութեանը վրայ կմտածէր:

*Անհոգ եւ չար կայսերաց ասեւն Հոռովմայ  
սերութեան սխարանաշր.*

2. Մարկոս Աւրելիոսը մեռածին պէս՝ Հոռովմայեցիք նոր նեղութեանց մեջ ընկան. վասն զի նորա յաջորդները Կալիգոլա եւ Ներոն՝ ոչ միայն իրենց ժողովուրդը չէին հոգար, այլ նա շատ ջարջարանք ու նեղութիւն կուտային նոցա: Այն ատենները կպատահէր որ քանի մի քաղաւոր միանգամայն կընտրուէին: Ժամանակ եղաւ որ մինչեւ 19 քաղաւոր միանգամայն ընտրուեցան: Սոքա անդադար կկուուէին իրարու հետ, ու շատ անգամ մեկզմեկ կըմեռցընէին: Այս կերպով 10½ տարուան մեջ 40 քաղաւոր փոխուեցաւ Հոռովմայ արոտոյն վրայ, եւ նոցա շատը սպաննուեցան:

<sup>1</sup> Անտոնինոս թնչ կողմանէ անուանի եղաւ:

<sup>2</sup> Աւրելիոսին յաջորդաց ժամանակը թնչ վիճակի մեջ էին Հոռովմայեցիք:

1. Սոցա մեջ աւելի երկար ժամանակ թագաւորողներն էին՝ նախ *Սեպտիմիոս Սեւերոս* (197 — 211) որ յաջողութեամբ պատերազմ արաւ Ասիոյ եւ Բրիտանիոյ մեջ. յետոյ *Կարակալլա* (211 — 216) ու *Ելիոգարադա* (216 — 222) թոյլ ու շուայլ թագաւորները: Ասոնցմէ վերջը *Աղեքսանդր Սեւերոս* թագաւորը (222—235) փոքր ինչ ժամանակ միայն կրցաւ օգտակար կարգադրութիւններ անել Հռովմայ տերութեան մեջ:

2. Առհասարակ Մարկոս Արեդիոսէն ետքը անկարգութիւնները այն աստիճանի տիրեցին Հռովմայ մեջ, որ զօրքին ձեռքն եր՛ ուզած մարդը թագաւոր ընտրել, կամ մէկ թագաւորը սպաննել ու տեղը միւսը դնել:

Այս անկարգութեանց պատճառաւ՝ մէկ կողմէն ժողովուրդը աղքատացաւ, միւս կողմէն տերութիւնը տկարացաւ: Անդիէն Գերմանացիք տեսնելով Հռովմայեցւոց երկպառակութիւնները, անդադար նոցա երկիրներուն վրայ կարշառեին. իսկ Հռովմայեցիք իրենց մեջ եղած կռիւներէն աչք չբանայով՝ չէին կրնար իրենց հայրենիքը պաշտպանել:

---

<sup>1</sup> Այն միջոցին աւելի երկար ատեն թագաւորող կայսերք որոնք են:

<sup>2</sup> Ժողովուրդը ինչ վիճակի մեջ էր:

1. Վերջապէս *Դիոկղետիանոս* բազաւորին աւտենը քիչ մի ոյժ առին *Հոովմայեցիք* : Դիոկղետիանոս իւր խիստ եւ, աներկիւղ բնութեամբը մեծ ազդեցութիւն ունեցաւ ժողովրդեան վրայ . բայց տեսնելով որ բոլոր տէրութեան մեջ մտած անկարգութիւնները պիտի չկրնայ ինքը միայն վերցընել , արեւմտեան երկիրներուն վրայ զատ բազաւոր մի դրաւ իրեն զահակից :

2. Ետքերը պէտք եղաւ որ այն երկուքը մեկմեկ օգնական ալ առնուն իրենց քով , եւ մասնակից անեն զանոնք իրենց իշխանութեանը . որով *Հոովմայեցւոց* տէրութեան կառավարութիւնը չորս մարդոյ ձեռք եղաւ :

Այն բաժանումը շատ օգտաւէտ էր Դիոկղետիանոսի ողջութեան աւտենը միայն . վասն զի այնպէս կվարուէր նոցա հետ որ մեջերը կռիւ չելլէ . բայց երբոր ինքը մեռաւ , առաջուան երկպառակութիւններն ու կռիւները նորէն բորբոքեցան :

---

<sup>1</sup> Դիոկղետիանոսի ժամանակը ինչպէս էին *Հոովմայեցիք* :

<sup>2</sup> Դիոկղետիանոս ինչ փոփոխութիւն արաւ կառավարութեան մեջ :

1. Հոռվմայեցւոց, մանաւանդ քրիստոնեաներուն քաղղեն, Դիոկղետիանոսի մեռնելէն ետքք վրան շատ ջանցաւ. Հոռվմայեցւոց կայսր եղաւ խոնեմ, քաջ եւ աստուածապաշտ մեծն *Կոստանդիանոս* :

---

Հոռվմայեցւոց սերութեան մեջ քրիստոնէութեան սարածուիլը .

---

*Մեծն Կոստանդիանոս .*

2. Ներոնի յաջորդներէն քանի մի ինքնակալներ շատ նեղութիւն տուին քրիստոնէից, եւ կուգէին բոլորովին ջնջել զանոնք : Դիոկղետիանոսին հանած հալածանքք ետքինը եղաւ : Այն հալածանաց ատենը շատ քրիստոնեայք քաղաքներէն փախչելով՝ գնացին անապատ տեղեր քաշուեցան, ու հոն գիշեր ցորեկ աղօթքով կանցընէին . եւ այսպիսի մարդիկ *նզևա-*

---

<sup>1</sup> Դիոկղետիանոսի ով յաջորդեց :

<sup>2</sup> Ներոնի յաջորդներուն ժամանակը թնջ վիճակի մեջ էին քրիստոնեայք :

չոր կամ *անաստատան* կոչուեցան : Ես-  
քերը քանի մի ճգնաւոր մեկտեղ գալով՝ մաս-  
նաւոր տներ շինեցին ու ի միասին բնակեցան ,  
եւ այնպիսի տները *վանք* կամ *մենաստան*  
ասուեցան :

1. Կոստանդիանոսի ժամանակը ոչ միայն  
քրիստոնէից հալածանքը դադրեցաւ , այլ եւ  
Հռովմայեցւոց ինքնակալութեան մեջ տիրող  
հաւատքը քրիստոնէութիւն եղաւ :

2. Կոստանդիանոսի ի քրիստոնէութիւն դառ-  
նալը աստուածային հրաշքով եղաւ : Այն ա-  
տենները Հռովմայեցւոց տերութեան մեջ վեց  
ինքնիշխան կառավարիչներ կային , որ իրա-  
րու հետ անդադար կպատերազմէին : Մեկն էր  
*Մաքսեմոսիոս*<sup>1</sup> քրիստոնէութեան թշնամի .  
Կոստանդիանոս սորա դէմ պատերազմեցն  
մեկ օր առաջ՝ գիշերով զօրքերը նայելու ելած  
ատենը՝ երկնքին երեսը լուսաւոր եւ փայլուն  
խաչ մի տեսաւ , որոյ վրայ գրած էր «Այսու  
յադրեալ» : Նոյն գիշերը տեսիլք եւս տեսաւ ,  
յորում ինքը քրիստոս երեցաւ իրեն ասելով .

---

<sup>1</sup> Ո՞ր ատեն բոլորովին դադրեցան քրիս-  
տոնէից դէմ եղած հալածանքները :

<sup>2</sup> Կոստանդիանոսի ի քրիստոնէութիւն դառ-  
նալը ինչ կերպով եղաւ :



„ Գրօշակներուդ վրայի արծիւները (որ Գիօսի նշան էին) վերցուր, ու տեղը խաչ դիր, անով միայն կրնաս յաղթել “ :

1. Կոստանդիանոս իսկոյն կատարեց Աստուծոյ հրամանը, եւ Մաքսենտիոսի զօրքը ջարդեց. յետոյ մնացեալ բռնաւորաց ալ յաղթեց՝ որ թշնամի էին քրիստոնէից, եւ ինքը միայն եղաւ ինքնակալ բոլոր Հռովմայեցւոց տերութեան : Այնուհետեւ քրիստոնեայք հանգչեցան, Կոստանդիանոս եկեղեցիներ շինեց, ինքն ալ քրիստոնեայ եղաւ :

2. Երբօր քրիստոնէից մեջ սկսան հաւատոյ վեճեր ու կռիւներ ծագիլ, Կոստանդիանոս հրամայեց որ *Նիկիա* քաղաքին մեջ եկեղեցական ընդհանուր ժողով լինի. հոն ժողովեցան 318 եպիսկոպոստանք, որպէս զի քրիստոնէութեան մեջ մտած մոլորութիւնները վերցընեն, մաքաւանդ Արիոսի աղանդը, որոյ ծուռ կարծիքը այն ժողովին մեջ դատապարտուեցաւ. եւ որպէս զի այն մոլորութիւնները մէյմնալ ջմտնեն՝ հայրապետները *Հաւատամքը* շա-

---

<sup>1</sup> Կոստանդիանոս դարձի գալէն ետեւ ինչպէս կառավարեց տերութիւնը :

<sup>2</sup> Ի՞նչ պատճառաւ եղաւ Նիկիոյ ժողովը :

բաղրեցին, որոյ մեջ կարճաժամ կերպով քրիստոնեական հաւատոյ գլխաւոր հիմունքը դրուած են :

1. Մինչեւ Կոստանդիանոսի ատենը Հռովմայեցոց ինքնակալութեան մայրաքաղաքը Հռովմ էր : Ի սկզբան Կոստանդիանոս ինքն ալ հոն կկենար, բայց յետոյ իրեն նոր մայրաքաղաք ընտրեց Ասիոյ եւ Եւրոպիոյ մեջտեղը *Բիւզանդիոն* անուանով փոքրիկ քաղաքը, որ երեք ծովու վրայ ունեցած դրիւքը շատ գեղեցիկ տեղ էր, Սեւ ծովուն ու Մարմարայի ծովուն մեջտեղի նեղուցին եզերքը շինած : Կոստանդիանոս կայսերական արձուք հոն փոխադրեց, ու մեծամեծ եկեղեցիներ, պալատներ եւ տներ շինելէն ետեւ՝ քաղաքին անուան ալ *Կոստանդնուպոլիս* դրաւ :

2. Քանի մի տարի անցնելէն ետեւ՝ Կոստանդիանոս այն նոր քաղաքին մեջ մկրտուեցաւ (337), ու վրան շատ ջանցած՝ վախճանեցաւ, եւ ժողովուրդը *Մեծ* մականունը տրւաւ իրեն :

---


<sup>1</sup> Կայսերական արձուք ինչպէս եւ նոր փոխադրեց Կոստանդիանոս :

<sup>2</sup> Կոստանդիանոսի վերջն ինչպէս եղաւ :

1. Կոստանդիանոսի մահուանեն ետքը՝ իւր երեք որդիքը Հռովմայ տերութիւնը իրենց մեջ բաժնեցին : Սուքա թեպէտ հաւատով քրիստոնեայ էին, բայց իրենց վարքը կռապաշտի էր, եւ մեկմեկու հետ անդադար կռիւ կանէին :

2. Ասոնց յաջորդը *Յուլիանոս* նորէն սկսաւ քրիստոնեաները հալածել. կռգեր որ քրիստոնէութիւնը վերցընէ ու կռապաշտութիւնը հաստատէ ժողովրդեան մեջ. բայց Աստուած անսասան պահեց իւր եկեղեցին :

Յուլիանոս երկու տարի միայն թագաւորելէն ետեւ՝ Պարսից դէմ պատերազմի գնացած ատենը սպաննուեցաւ, ու տեղը *Յուլիանոս* բարեպաշտ եւ խաղաղասէր թագաւորը անցաւ : Այն ժամանակէն կռապաշտութիւնը սկսաւ բոլորովին իյնալ, եւ քրիստոնեայք քանի գնացին շատցան :



---

<sup>1</sup> Ո՞վ յաջորդեց Կոստանդիանոսի :

<sup>2</sup> Յուլիանոս ինչ կերպով արաւ կայսերութիւնը :

ԳԵՐՄԱՆԱՑԻՒԹ ԵՒ ՆՈՑԱ ԱՐՇԱԻԱՆՔԸ.

1. Հռովմայ տերութեան հիւսիսային կողմերը Գերմանացւոց երկիրներն էին, եւ ասկեց 2000 տարի առաջ Եւրոպայի մեծ մասը Գերմանացւոց ձեռքն էր:

2. Իսկզբան Գերմանիան վայրենի երկիր էր՝ խիտ անտառներով պատած: Մեզը կային նաեւ բարերեր դաշտեր, բայց արտեր չըկային. վասն զի Գերմանացւոց կնիկներն ու ստրուկները միայն հովուութիւն կանէին, իսկ հսկայ եւ ուժեղ երիկ մարդիկը իրենց կեանքը որսով եւ պատերազմով կանցրնէին: Նոցա հազուասոր անասնոց մորթ էր ու գէնքերը երկաթե նիզակ, լախտ, կացին եւ բուր:

Հին ատենի Գերմանացիք քաղաք չունէին, այլ ամեն մարդ իւր դաշտին չորս քովը պատ կբաշէր, բնակարանը անոր մէջ կըշինէր:

---

<sup>1</sup> Գերմանացւոց երկիրները որմնք էին:

<sup>2</sup> Գերմանիան ինչ երկիր էր, եւ բնակիչներուն կեանքը ինչպէս էր:

1. Հողի տէր Գերմանացիք ազատեց կհամարուեին: Նոցա մեջ հարուստները կամ պատերազմական քաջութիւն անողները ազնուականք կկոչուեին ու մեծ պատիւ ունեին ժողովրդեան առջեւ: Գիւղաքաղաքները կառավարելու համար բոլոր ազատականներուն հասանութեամբը կոմսեր կընտրուեին, իսկ զօրքերուն գլուխը դուքս կասուէր, որ առաջնորդ ասել է:

2. Գերմանացւոց զօրքը փոքր գունդերէ կազմուած էր, եւ զինուորները հասարակ ժողովրդէն ընտրուած աղքատ երիտասարդներ էին: Այսպիսի գունդերով մեկ դուքսը միւսին վրայ արշաւելով՝ նորա երկիրներուն կտիրէր:

3. Երբոր զօրաւոր թշնամւոյ վրայ արշաւելու համար քանի մի գունդ կմիանային, նոցա զօրապետը բազաւորը կլինէր, որ մեծ իշխանութիւն ունէր իւր հպատակացը վրայ: Բայց այն իշխանութեանը փոխարէն՝ բազա-

---

<sup>1</sup> Գերմանացւոց կառավարութիւնն ինչպէս էր:

<sup>2</sup> Իրենց զօրքը ինչպէս էր:

<sup>3</sup> Մեծ պատերազմներու մեջ ով կլինէր նոցա զօրապետը:

ւորին պարտքն էր զօրքը կերակրել, անոնց հազուատ, զենք եւ ուրիշ հարկաւոր բաները տալ :

1. Հին ատենները Վերմանացիք հերանոս էին, արարածներն ու իրենց ղիւցազուները կրպաշտէին: Նոցա զլիսաւոր չաստուածն էր *Յուրև*: Տաճար չունէին, այլ իրենց կուռքերը լեռներուն գագաթը կամ անտառներու մէջ կկանգնէին ու զոներ կմատուցանէին նոցա: Հոգւոյ անմահութեան բեպետ կհաւատային, բայց բախտենական երջանկութեան վրայ բոլորովին օտար կարծիք ունէին: Կարծէին թէ քաջ մարդիկ իրենց մեռնելէն ետեւ՝ երկինքը որսով, պատերազմով եւ արբեցութեամբ կանցընեն օրերը. իսկ վախկոտները դժոխք կերբան ու հոն քաղցած կմնան:

2. Վերմանացւոցմէ ձեւացեալ զամազան ազգերուն զլիսաւորներն էին *Արամանները*, որոց բնակութիւնը այժմեան *Ջուիցերիէն* անդին էր. *Փրանկները*, որ Ալամաններուն երկրէն ալ վեր կրնակէին. *Սաքսոները* Հիւսիսային ծովէն դեպ ի հարաւ կրնակէին, եւ *Գոթացիք* այժմեան հարաւային Ռուսաստանը:

---

<sup>1</sup> Հին ատենի Վերմանացւոց կրօնն ինչ էր:

<sup>2</sup> Վերմանացիներէն ինչ ազգեր ձեւացան:

Մ. Երեք հարիւր տարիէն առելի քշեց սոցա Քրիտանիոյ, Գաղղիոյ, Իտալիոյ եւ Հռովմայեցւոց ուրիշ երկիրներուն վրայ արշաւանքը. իսկ երբ Հոնք ասուած բարբարոս եւ սլաւոնրազմասեր ժողովուրդները գունդ գունդ բազմութեամբ մտան Եւրոպա, Գերմանացիք նոցա հետ մեկտեղ Հռովմայեցւոց երկիրները կոխեցին ու իրենց բնակութիւնները նոցա մեջ հաստատեցին:

2. Հոնք կարճահասակ, հաստաբազուկ, սեւ մազերով, մանր աչքերով, տափակ քրով, դեղնած երեսով ու ծուռ ոտքերով մարդիկ էին: Գրեթէ բոլոր իրենց կեանքը ձիու վրայ կանցրնէին, գործերն ալ առաջակութիւն էր ուստի կնիկներով ու տղոցմով՝ մեկ երկրէն մեկայ երկիրը անցնելով՝ ժողովուրդներուն վրայ կարճըկէին, ու նոցա տները այրելով, միջի բնակիչները մեռցրնելով՝ ունեցած ջուներեցածները կկողոսպտէին:

3. Եւրոպա մտածներովք Գորացւոց վրայ

---

<sup>1</sup> Քանի տարի քշեց Գերմանացւոց արշաւանքը:

<sup>2</sup> Հոնք ինչ տեսակ ժողովուրդ էին:

<sup>3</sup> Հոնք առաջ ո՞ր ազգին վրայ բնկան Եւրոպայի մեջ:

յարձրկեցան, որ այն ատենը *Գաւնոսք* ու *Տե՛ն* գետերուն մեջտեղը կրնակէին, ու *Տե՛նքեր* գետին արեւելեան կողմը բնակողները *Ոստրոգորք* կասուէին, իսկ արեւմտեան կողմիները *Վխսիգորք* :

1. Ոստրոգորք Հոնաց ձեռքէն փախչելով Տե՛նքեր գետին միւս եզերքը անցան ու Վխսիգորքաց երկիրը ձեռքերէն առին, որով հարկադրեցան սոքա Հռովմայեցւոց երկիրները երթալու : Այն տեղը քրիստոնէութիւնը ընդունելէն վերջը՝ սկսան Հռովմայեցւոց երկիրները կողոստել, ու մինչեւ Կոստանդնուպօլիսն ալ ուզեցին առնուլ : Բայց մեծն *Թեոդոս* Հռովմայեցւոց կայսրը՝ տերութեան մեջ եղած անկարգութիւնները վերուց, ու Վխսիգորքները սանձեց :

2. Մեռնելէն առաջ *Թեոդոս* կայսրը տերութիւնը իւր երկու որդւոցը մեջ բաժնեց . *Ունքիտսիւն* տուաւ արեւմտեան երկիրները, այսինքն Իտալիա եւ միւս արեւմտեան գաւառ-

---

<sup>1</sup> Ոստրոգորքաց եւ Վխսիգորքաց վրայ թնջ գիտելիք կայ :

<sup>2</sup> Թեոդոս կայսրը թնջ բաժանմունք արտատերութեանը մեջ :



ները. իսկ Արկադեոսի տրուեցան արեւելեան երկիրները, այն է Յունաստան, Փոքր Ասիա, Ասորիք եւ Եգիպտոս, Կոստանդնուպօլիսն ալ մեկտեղ: Այն ատենէն ի վեր Հռովմայեցւոց տերութիւնը երկու բաժնուեցաւ. մեկ մասն ասուեցաւ *Արեւմտեան կայսերութիւն*, եւ միւսը *Արեւելեան*:

1. Այն բազաւորաց ատենը բարբարոսները Հռովմայեցւոց շատ երկիրներուն տիրեցին: Փրանկներն ու Պոչրկիներնք Գաղղիան առին, Սուելները Իտալիան. Վանդալները Ափրիկէ անցան, ու առաջուան Կարքեղոնացւոց երկիրներուն մեջ իրենց բազաւորութիւնը հաստատեցին: Ուտրոգորքը Իտալիայէն հարաւային Գաղղիա ու Սպանիա գնացին, եւ այն տեղը Ռատրոգորաց բազաւորութիւնը կանգնեցին:

2. Այս կերպով բարբարոսները քսան տարուան մեջ Հռովմայեցւոց ձեռքէն առին Գաղղիան, Սպանիան եւ Ափրիկէի մեկ մասը. ո-


---

<sup>1</sup> Արկադեոսի եւ Ոնորիոսի ատեն բարբարոս ազգերը ինչ արշաւանքներ արին:

<sup>2</sup> Հռովմայեցւոց տերութիւնը այն միջոցին ինչ կերպով պզտիկցաւ:

բով արեւմտեան Հռովմայեցւոց տերութեանը միայն Իտալիան մնաց :

Անդիէն Անգղիացիք եւ Յարսոնք ալ քիչ ատեն անցնելէն ետեւ՝ հիւսիսային Գերմանիայէն գնացին Բրիտանիոյ տիրեցին :



*Ատտիղասա Հոնաց քաղաւորը. — Արեւմտեան կայսերութեան կործանումը :*



1. Մինչդեռ Գերմանացիք Հռովմայեցւոց տերութեան վրայ կարշաւին, ու նոցա երկիրներուն մէջ իրենց բնակութիւնը կհաստատէին, Հոնք բոլոր հարաւային Եւրոպիոյ տիրեցին : Հինգերորդ դարուն մէջ Հոնաց քաղաւորը *Ատտիղասա* էր, որ „Հարուած Աստուծոյ“ կասուէր, եւ անցած տեղերուն վրայի քաղաքները կրակով ու բրով կջնջէր :

2. Այն քաղաւորին ատենը բոլոր Փոքր Ասիան եւ Գերմանիոյ մեծ մասը Հոնաց ձեռքն

---

<sup>1</sup> Հոնք թնչ արշաւանք արին եւ ով եղան իրենց անուանի քաղաւորը :

<sup>2</sup> Ատտիղասայ տերութիւնը մինչեւ ուր կը տարածուէր :

եր : Ատտիդաս իրեն տերութիւնը աւելի ընդարձակել ուզելով՝ քաղաքիւ զօրք ժողովեց, ու անոնցմով Գաղղիա մտաւ :

1. Հռովմայեցիք այն տեղ Ռատրոզոթաց հետ մեկտեղ Ատտիդասին դեմ պատերազմեցան . զօրքէն 150 հազար հոգի, եւ Ռատրոզոթաց քաղաւորք մեկտեղ ընկան մեռան այն պատերազմին մեջ, բայց յաղթութիւնը անորոշ մընաց : Ատտիդաս չէր կարծեր որ այնչափ դիմակայութիւն գտնէ . ուստի ձգեց Գաղղիան, ու Ալպեան լեռներուն վրայէն հիւսիսային Իտալիա մտաւ, բոլոր երկիրը կողոպտելէն ետքք՝ սկսաւ երթալ Հռովմի վրայ :

2. Հռովմայ ժողովուրդը սարսափած սկսաւ Ադրիական ծովուն հիւսիսային կողմը գրտնուած կղզիներուն վրայ փախչիլ . բայց Հռովմայ պապը Լեոնն՝ մեծագին պարգեաներով գնաց Հոնաց բանակը, ու շատ աղաչանօք Ատտիդասէն խօսք առաւ որ Հռոմ քաղաքին վնաս չանէ : Ատտիդաս ալ քաշուեցաւ այժմեան *Հուլիզարիան*, այսինքն *Մանտուաց* եր-

---

<sup>1</sup> Հռովմայեցւոց դեմ ինչպէս պատերազմեցաւ Ատտիդաս :

<sup>2</sup> Ինչ կերպով ազատեցաւ Հռովմ Ատտիդասայ սպառնալիքէն :

կիրք, ու վրան շատ ջանցած՝ ընկաւ մեռաւ .  
Հոնաց տերութիւնն եւս շատի ջքշեց կործանե-  
ցաւ . իսկ Հոնք ասդիս անդին ցրուելով ան-  
յայտ եղան :

1. Ատտիդասէն ետքը Արեւմտեան կայսե-  
րութեան մեջ նոր նոր անկարգութիւններ մը-  
տան : Քսան տարուան մեջ ինք թագաւոր փո-  
խուեցաւ այն տեղը . ըստրարոս եւ անգութ  
Վանդալներն այլ Ափրիկէն Իտալիա եկան ,  
ու 14 օր Հռովմայ ժողովրդեան սաստիկ ջար-  
ջարանք տային ետեւ՝ անոնց բոլոր ռանեցածը  
կողոպտեցին ու հարուստ աւարով նորէն Ափ-  
րիկէ դարձան :

2. Վանդալաց արշաւանքէն ետքը Հռոմու-  
րու Աւգոստուշոս կամ Յգոստիկ թագաւորին  
ատենը՝ արեւմտեան Հռովմայեցւոց տերու-  
թիւնը վերջացաւ :

3. Այն ատենները Հռովմայեցիք Գերմանա-

---

<sup>1</sup> Ատտիդասէն ետքը Հռովմայեցիք ինչ վի-  
ճակի մեջ էին .

<sup>2</sup> Ո՞ր կայսեր ատենը վերջացաւ արեւմը-  
տեան կայսերութիւնը :

<sup>3</sup> Ողտագրը ինչ կերպով թագաւոր եղաւ Ի-  
տալիոյ :

ցի վարձար զօրք ունեին. անոնց Ողոագր  
անունով զօրապետը ուզեց որ Խտալիոյ երեք  
մասին մեկը իւր զօրքերուն պարզեւ տրուի.  
Հռովմայեցիք չուզեցին տալ: Ողոագր ալ բար-  
կացած՝ Հռոմուլոս Օգոստիկը բազաւորութենէ  
ձգեց, Հռովմայ ինքնակալութիւնը վերուց ու  
ինքզինքը Խտալիոյ բազաւոր անուանեց:

Այս կերպով վերջացաւ Հռովմայեցւոց ա-  
րեւմտեան կայսերութիւնը. իսկ արեւելեանը՝  
որ Յուլիաց տերութիւնն էւս կասուեր՝ հազար  
տարի դիմացաւ, բայց վերջապէս այն էւս  
Տաճկաց ձեռքն ընկաւ:

ՎԵՐՋ ՀԻՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ.



## ՅԱՆԿ.

ՆԱԽԱՍԱՍՏԵՆՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ.

Նախաստեղծք եւ նոցա սերունդը մինչեւ ի Նոյ.....	1
Նոյ եւ իւր սերունդը .....	7
Թագաւորութեանց սկիզբը.....	12
Առաջին մարդոց ինչ գործի տեր եղած- ները.....	16
Հին ազգաց կրօնքը .....	18
Հին ազգաց եւ ժողովրդոց կարգ կարգ բաժնութիւնը.....	20
Պատմութեան նիւթերը .....	21
Պատմութեան աղբիւրները.. ..	22
Պատմութեան բաժանումը .....	24

## ՀԻՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ.

Ընդհանուր տեղեկութիւն .....	27
Հնդիկք եւ ճինք.....	34
Բարեկացիք եւ Ասորեստանեայք .....	39
Հայք .....	44

Երովպացիք եւ Եգիպտացիք .....	52
Փիւնիկեցիք .....	61
Եբրայեցիք .....	68
Հրեից քաղաւորները .....	73
Մարք եւ Պարսիկք .....	79
— Կիւրոս, եւ Լիւդացոց Կրեսոս քաղա- ւորը .....	84
— Պարսից տերութեան մեծնայր՝ Կամբիւսի եւ Դարեհի ժամանակը. Բսերքսեսի եւ նորա յաջորդաց ժամանակը տկարա- նայր, եւ Դարեհ Նորոսին օրերովը վեր- ջանայր .....	87

---

ԵՒՐՈՊԱՅԻ ՀԻՆ ՏԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ.

---

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՅՈՒՆԱՅ.

Առաջին դարերը. — Պարսից պատերազմէն առաջ Յունաց պատմութիւնը. — Յու- նաստանի նին բնակիչներն ու նոցա կրօնքը .....	91
Գիւցազոսնք Յունաց. — Արգոնաւորդաց արշաւանքը. — Տրոյիոյ պատերազմը ....	99
Յունաց հասարակապետութիւնները .....	104
Սպարտացիք. — Լիկուրգոս .....	108
Աթենացիք. — Սոլոն .....	112



Մարական պատերազմն մինչեւ Մակեդոնացւոց ատենը. — Մարական պատերազմը .....	116
Աթենքի նախապատուութիւնը. — Պերիկղես .....	124
Պեղոպոնեսական պատերազմը .....	126
Նուագումն Յունաց .....	131
Բանաստեղծք, պատմարանք եւ իմաստասերք Յունաց .....	133

---

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՄԱԿԵԴՈՆԱՅԻՈՅ

---

Մակեդոնիոյ պատմութիւնը մինչեւ Փիլիպպոսի մահը .....	138
Մակեդոնացւոց տերութիւնը Մեծին Աղեքսանդրի ատենը .....	142
Մեծին Աղեքսանդրի տերութեան բաժանութիւնը .....	148

---


ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀՈՌԱԿՄԱՅԵՑԻՈՅ

---

Նախնի Իտալիոյ վիճակը եւ նորա բնակիչները .....	151
---	-----

Հոովմայ հիմնարկութիանն ու բազաւոր- ները .....	155
Հասարակապետութիւն Հոովմայեցոց. — Պատերազմ Հոովմայեցոց ընդդէմ Ետ- րուրացոց եւ Լատինաց. — Որատիոս- Կոկոյէս, Մուկիոս-Սկեւոյա .....	164
Ազնուականաց ու ժողովրդականաց կոփա- ները. — Տրիբունք. — Տասնապետք .....	167
Գաղղիացոց Հոովմ արշաւելը .....	172
Սամնիացոց պատերազմը. — Արշաւանք Պի.ո.ոսի. — Գեկիոս. — Փարրիկիոս .....	176
Առաջին Պունիկեան պատերազմը. — Հո.ե- զուդոս .....	181
Երկրորդ Պունիկեան պատերազմը. — Ան- նիբադ, Սկիպիոն Ափրիկեցի .....	186
Հոովմայեցոց Մակեդոնիոյ եւ Յունաս- տանի տիրելը, ու Պունիկեան երրորդ պատերազմով Կարքեդոնի կործանումը.	191
Հոովմայեցոց մեջ նոր անկարգութիւն- ներ եւ երկպառակութիւններ ընկնիլը. — Գրակրոսեանք .....	194
Հոովմայեցոց Ափրիկէի մեջ Յուզուրբա բազաւորին դէմ, եւ Իտալիոյ մեջ Կիմ- բրացոց եւ Տետոնացոց հետ արած պատերազմները. — Մարիոս .....	197
Առաջին ընկերական պատերազմ ի Հը- ոովմ. — Մարիոս եւ Սիլլա .....	201

Առաջին եռապետները.—Պոմպեոս, Կրաստս, Յուլիոս Կեսար.....	204
Երկրորդ ընկերական պատերազմ ի Հռոմ.—Յուլիոս Կեսարի մշտնջենաւոր ղիկաատորութիւնը.....	209
Երրորդ ընկերական պատերազմ ի Հռոմ.— Երկրորդ եռապետութիւն. — Անտոնիոս, Լեպիդոս, Ոկտաւիանոս.....	213
Ինքնակալք Հռոմայեցւոց. — Օգոստոս կայսր. — Քրիստոնէութեան սկզբնաւորութիւնը եւ տարածութիւնը.....	219
Բռնաւոր կայսերաց ատենը Հռոմայ մեջ եղած անկարգութիւնները.....	225
Հռոմայ զովելի ինքնակալները.....	228
Անհոգ եւ զար կայսերաց ատեն Հռոմայ տերութեան տկարանալը.....	232
Հռոմայեցւոց տերութեան մեջ քրիստոնէութեան տարածութիւնը. — Մեծն Կոստանդիանոս.....	235
Պերմանացիք եւ նոցա արշաւանքը.....	240
Ատախդաս Հոնաց բազաւորը. — Արեւմտեան կայսերութեան կործանումը.....	246





«Ազգային գրադարան»



NL0108816

